

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՄԱԴՈՅԱՆ

**Համացանցային
դիսկոլոսի**

**լեզվական և արտալեզվական
յոլորահարկոթյոլները**

**(անգլերեն փաստական նյութի
հիման վրա)**

Ժ.02.07.- “Ռոմանագերմանական լեզուներ” մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ
ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ Ս.Ք.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Երեվան
2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒ ՄՆԵՐ.....	8
1.1 Համացանցային հաղորդակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները ..	8
1.2 Համացանցային դիսկուրսի տեսական սահմանումները միջգիտակարգային և տեսանկյունից ..	20
1.3 Համացանցային քաղաքավարությունը որպես ներդաշնակ հաղորդակցությանը նպաստող գործոն ..	31
ԾԱՆՈԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ ..	41
ԳԼՈՒԽ 2 ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԼԵԶԱԲԱՆՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	44
2.1 Բանավոր և գրավոր խոսքի տարբերությունների քննությունը համացանցային հաղորդակցության տեսանկյունից ..	44
2.2 Հոնգանշանների և համացանցային գրաճանաչության փոխկապակցվածությունը վիրտուալ հաղորդակցության մեջ ..	53
2.3 Էլեկտրոնային նամակների, զրույցների և մեկնաբանությունների ժանրային ..	75
ԾԱՆՈԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ ..	95
ԳԼՈՒԽ 3 ԼԵԶԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒՄԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ.....	99
3.1 Զեղչուն մոտեցումը կազմական տնտեսման միջոց ..	99
3.2 Հապավումների և համառոտագրությունների գործաբանական-հանրալեզվաբանական դրսևորումները ..	116

ՃԱՆՈԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	126
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	127
ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	130

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒ Ն

Համացանցային Լեզվաբանությունը վերջին տասնամյակներում մեծ զարգացում է ապրել՝ փոխելով նախկինում հաստատված մոտեցումները Լեզվի և դրա կիրառության վերաբերյալ: Համացանցային հաղորդակցության մեջ գերիշխող Լեզվական միավորները դիտվել են հիմնականում որպես սլենգային դրսևորումներ և հետևաբար ուսումնասիրվել են որպես Լեզվի ենթաշերտ, որը բնորոշում է համացանցային հաղորդակցությունը: Այնուամենայնիվ, համացանցի Լայնատարած կիրառումը բոլոր ոլորտներում հանգեցրեց նոր Լեզվի ի հայտ գալուն, և 2005 թ. -ից ի վեր համացանցային դիսկուրսը իր արժանի տեղը զբաղեցրեց Լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակներում՝ մասնավորապես համացանցային Լեզվաբանության մեջ:

Համացանցային հաղորդակցությունը՝ որպես հարաշարժ տիրույթում նորարարական տեխնոլոգիաների արդյունք թելադրում է հաղորդակցման յուրահատուկ և բազմաժանր մոդելներ՝ համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցական տարատեսակներով հանդերձ:

Համացանցային հաղորդակցությունը՝ որպես մարդկային ճանաչողության յուրահատուկ դրսևորում, իր բնույթով սոցիալական է, քանզի այստեղ Լավագույնս ի հայտ են գալիս անհատների միջանձնային հարաբերությունները հաղորդակցության իրականացման համատեքստում: Այս կանոնակարգված գործընթացում մասնավորապես կարևոր դեր է խաղում հաղորդակցական համագործակցությունը, որի իրականացմանը նպաստում են նորարարական տեխնոլոգիաները՝ համակարգելով հաղորդակցական ակտերը և բարենպաստ պայմաններ ստեղծելով հաղորդակցական ձախողումներից խուսափելու համար:

Հակառակ այն կարծիքների, թե համացանցային
հաղորդակցությունն իր

բնույթով անկենդան է, և անձի ինքնուրոյունն այստեղ ոչ մի դեր
չի խաղում, վերջին տարիների ուսումնասիրությունները
վկայում են, որ լեզվական և հարալեզվական

միջոցների ընտրության քննությանը հնարավոր է պատկերացում կազմել անհատների սեռային, սոցիալական, մշակութային և այլ խմբերին պատկանելության մասին: Սրանք կարևոր գործոններ են, որոնց առկայության շնորհիվ էլ ստեղծվում է վիրտուալ իրականությունը: Փաստորեն համացանցային լեզվաբանության մոտեցմամբ օգտատերերը ոչ թե գուտ տեղեկատվություն փոխանցողներ են, ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այլ նրանցից պահանջվում են ճանաչողական մեխանիզմների մեծակտիվացում և ճիշտ մտահանգում կատարելու կարողություն, քանի որ համացանցում առկա հաղորդակցական տարբեր մոդելները (համաժամանակյա, տարաժամանակյա) պահանջում են հաղորդակցական համապատասխան ռազմավարությունների կիրառություն՝ արդյունավետ հաղորդակցություն իրականացնելու համար:

Համացանցային դիսկուրսում անհրաժեշտ է պարզել հաղորդակցության բնույթը, որը որոշարկվում է նրանով, թե արդյո՞ք օգտատերերը շփվում են համաժամանակյա, թե տարաժամանակյա համատեքստում: Հայտնի է, որ համաժամանակյա համացանցային հաղորդակցությունը տեղի է ունենում այն դեպքում, երբ հաղորդակցվողները միաժամանակ են հայտնվել առցանց տիրույթում, այսինքն՝ այստեղ առկա են առերես հաղորդակցությանը բնորոշ յուրահատկություններ: Մինչդեռ էլեկտրոնային նամակները, մեկնաբանությունները և մյուս գրառումները տարաժամանակյա հաղորդակցության տեսակներ են, որոնք հաղորդակցության մյուս նմուշներից տարբերվում են ոչ միայն լեզվական տարբեր միջոցների կիրառությամբ, այլ և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով: Սույն հաղորդակցական տարա-տեսակներում բանավոր և գրավոր լեզվի դրսևորումները որոշարկելիս պետք է հաշվի առնել հարալեզվական միջոցների, համառոտագրությունների, հապավումների, ինչպես նաև հարատեքստի դերը: Առերես հաղորդակցությանը բնորոշ հարալեզվական ցուցիչները այստեղ փոխարինվում են կետադրական նշաններով և շարժական հուզապատկերներով: Ընդ որում՝ հուզանշանների կիրառությունը բացահայտում է օգտատերերի սոցիալական կեցվածքը, նրանց համակած գգացմունքները: Օգտատերերի ճանաչողական, հաղորդակցական կարողությունների

դրսևորումները օգնում են ճիշտ ներկայացնելու որևէ տեղեկատվություն և

մեկնաբանելու համացանցում տեղ գտած տարաբնույթ թեմաները: Այս հատկությունները բացահայտում են հաղորդակցվողների սոցիալական կեցվածքը: Հասկանալի է հետևաբար, որ այստեղ առաջնային նշանակություն ունի համացանցային գրագիտությունը, որը որոշակի իմացություն պահանջող գործունեների ամբողջությունն է, որով էլ օգտատերերն առաջնորդվում են որևէ հոլզանշան, հապավում, համառոտագրություն կամ այլ նշան կիրառելիս: Այս միավորները հաղորդակցական ակտերի հետ զուգահեռ կարող են որոշիչ լինել անհատի ինքնությունը բացահայտելու հարցում: Այլ կերպ՝ դրանք ոչ միայն լրացնում են հարալեզվական միջոցների բացը, այլ նաև ունեն հանրաբանական արժեք:

Հետազոտության **առարկան** համացանցային դիսկուրսի լեզվական,

հարալեզվական և արտալեզվական դրսևորումների քննությունն է համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցական տարատեսակներում:

Ատենախոսության **նպատակն է** ուսումնասիրել համացանցային դիսկուրսի խոսքային և ոչ խոսքային միջոցները, դրանց իմաստային դաշտը և վերհանել բանավոր խոսքին հատուկ ժանրային դրսևորումները: Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ *խնդիրները*՝

1. Ուսումնասիրել համացանցային հաղորդակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումները:
2. Քննության առնել համացանցային դիսկուրսի տեսական սահմանումները միջգիտակարգայնության դիրքերից և վերհանել բանավոր կամ գրավոր խոսքային տարրերի կիրառությունները համացանցային հաղորդակցության մեջ:
3. Քննել քաղաքավարության դերը համացանցային հաղորդակցության մեջ:
4. Ուսումնասիրել հաղորդակցվողների վերաբերմունքային, հոգեբանական յուրահատկություններով պայմանավորված հոլզանշանների գործառնությունը:

5. Որոշարկել էլեկտրոնային նամակների և ԷճՎՎ-ական և նպատակային հենքը:

6. Լուսաբանել գեղջման՝ որպես համացանցային հաղորդակցության կարևորագույն բաղադրիչի տեսական և գործնական յուրահատկությունները:

7. Որոշարկել համառոտագրությունների և հապավումների կիրառման դերը

լ Եզվական տնտեսման համատեքստում:

Աշխատանքի **արդիականությունը** նախ և առաջ պայմանավորված է համա- ցանցային դիսկուրսի՝ ժամանակակից աշխարհում աստիճանաբար ավելի լայն թափստացող կիրառություն և հետևաբար՝ Լեզվական, հարալեզվական և արտալեզվական գործառնություն կատարող միջոցների քննության ու լուսաբանման կարևորություն: Ութեն համացանցային Լեզվաբանություն Գբաղվող մի շարք գիտնականներ անդրադարձել են մեր ատենախոսությունում մեջ արծարծվող տարբեր խնդիրներին (տե՛ս հղումները մեր աշխատանքի տարբեր մասերում), այդուհանդերձ նրանց հետազոտական ուսումնա- սիրություններում բացակայում է համացանցային դիսկուրսում (մասնավորապես գործարար Էլեկտրոնային նամակներում, Էլեկտրոնային գրույցներում և մեկնաբանություններում) Լեզվական և արտալեզվական գործոնների փոխներթափանցվածության համալիր քննությունը հարալեզվական բնութագրական հատկանիշների հաշվառումով, որն Էլ մեզ հնարավորություն է տալիս առավել ամբողջացնել ու պատկերացումը համացանցային դիսկուրսի նշված տարատեսակների մասին:

Աշխատանքի **գիտական նորույթը** պայմանավորված է անգլերեն համացանցային հաղորդակցության Լեզվական և արտալեզվական գործոնների որոշարկմամբ՝ հարալեզվական միավորների կիրառության հաշվառումով: Նոր է նաև համացանցային դիսկուրսի քննությունը հաղորդակցական նպատակի վերհանման դիրքերից: Ըստ Էություն փորձ է արվում նորովի սահմանել դիսկուրսի այս տեսակը՝ վերհանելով բանավոր խոսքին բնորոշ տարրերի գերակայությունը:

Աշխատանքի **մեթոդաբանական հիմքը** պայմանավորված է ատենախոսության մեջ առաջադրված նպատակներով և խնդիրներով: Ուսումնասիրությունը տարվում է Լեզվագործաբանական մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս երկխոսական միավորների նմուշները հետազոտել տարածմանակյա և համաժամանակյա հաղորդակցական իրադրություններում: Աշխատանքում կիրառվել է նաև հարատեքստային-նկարագրական մեթոդը. կատարվել է խոսքնթացի Լեզվագործաբանական վերլուծություն՝ համատեքստի և հարատեքստի գիտելիքային դաշտի կիրառմամբ:

Ատենախոսության **տեսական** **արժեքը**: Տարածամանակյա և համաժամանակյա հաղորդակցության համապարփակ ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել բացահայտելու և գրեթե ամբողջացնելու համացանցային արդիլեզվաբանության տեսական շատ դրույթներ: Սույն հետազոտության մեջ կատարված քննությունը և ստացված արդյունքները որոշակի ներդրում են համացանցային և լեզվաբանության, դիսկուրսի տեսության մեջ, քանի որ հնարավորություն են տալիս նորովի մեկնաբանելու համացանցային հաղորդակցության տարատեսակները:

Աշխատանքի **գործնական** **արժեքն** այն է, որ համացանցային դիսկուրսի տարատեսակների քննության արդյունքները կարող են ներդրվել և մեծ արդյունավետությամբ կիրառվել բուն համացանցային հաղորդակցության մեջ՝ նպաստելով համացանցում հաղորդակցվող ոչ հմուտ օգտատերերին ճիշտ ընկալելու գրուցակիցներին և համացանցային քաղաքավարության նորմերը կիրառելու նպատակային: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել նաև անգլերենի առցանց դասավանդման գործնական դասընթացներում, համացանցային/էլեկտրոնային դիսկուրսի տեսության խնդիրները լուսաբանող տեսական դասընթացներում և ուսումնամեթոդական համապատասխան ձեռնարկներում:

Հետազոտության **փաստական** **նյութը** տարածամանակյա և համաժամանակյա անգլերեն դիսկուրսից քաղված հաղորդակցական միավորներն են:

Աշխատանքը բաղկացած է *ներածությունից, երեք գլուխներից՝* յուրաքանչյուրը համապատասխան ենթագլուխներով, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող *ծանոթագրություններից, եզրակացությունից* և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒ ՄԼԵՐ

1.1 Համացանցային հաղորդակցության սոցիալ - հոգեբանական առանձնահատկությունները

Համացանցային հաղորդակցությունը որպես այդպիսին նորույթ է և դեռ վաղուց է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը, սակայն վերջին տասնամյակում հետաքրքրությունը դրան կատմամբ մեծացել է, և հաղորդակցության այս տարատեսակին առնչվող բազմաթիվ նոր տեսական մոտեցումներ են ի հայտ եկել: Ինչպես վկայում են համացանցային հաղորդակցությանը բնորոշ հոգեբանական և սոցիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները, վերջինս ավելի մոտ է միջանձնյա հաղորդակցությանը և չի տեղավորվում տեխնոլոգիական գործելակերպի շրջանակներում: Այս նոր մոտեցումները հիմնականում պայմանավորված են «հաղորդակցություն» հասկացությունը նորովի մեկնաբանելու ձգտումով: Այսպես՝ հաղորդակցությունն այլևս չի դիտվում որպես մեկանձից մյուսին տեղեկատվություն փոխանցելու գործընթաց, քանի որ էլեկտրոնային հաղորդակցության առանձնահատկությունները (ինչպես օրինակ՝ տեղեկատվություն փոխանցողի և այն ստացողի միջև անհամաչափությունը) հաղորդակցության այլ մոդել են պարտադրում. դա ինչ-որ չափով անտեսում է համագործակցային բաղադրիչը, որն ըստ էության խթանում է միջանձնյա հաջող հաղորդակցության իրականացումը: Մյուս կողմից համագործակցային բաղադրիչի անտեսումը ստվերում է թողնում նաև որոշակի գիտելիքի առկայության անհրաժեշտությունը (Riva, Galmiberti 1998:2-3, Farina

1991:8)¹: Այդուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ հաղորդակցվելու համար հաղորդակցվողները պետք է ունենան հենքային ընդհանուր գիտելիք, փոխադարձաբար ըմբռնեն միմյանց ակնկալիքները և հետևեն սահմանված այն կանոններին, որոնք

նպաստում են հաջող հաղորդակցության գործընթացին (Jakobson 1980:81-82, տես նաև Riva, Galmiberti 1998:11-12)²:

Ռ. Յակոբսոնը կարևորում է նաև ֆիզիկական, հոգեկան կապի առկայությունը, քանի որ միայն այս դեպքում է, որ խոսողները կարող են արդյունավետ հաղորդակցվել բուն հաղորդակցության մեջ: Ռ. Յակոբսոնը նշում է վեց բաղադրիչ՝ տեղեկատվություն, տեղեկատվություն փոխանցող, տեղեկատվության հասցեատեր, հարատեքստ, լեզվական կոդ, շփում կարևորում խոսքի գործառնությունների հետ դրանց հարաբերակցությունը, որն էլ սահմանում է հաղորդակցական ակտի մտադրայնությունը: Ռ. Յակոբսոնի այս մոդելը ըստ Ջ. Ռիվայի և Կ. Գալիմբերտիի լիովին չի լուսաբանում հասարակական հարատեքստի ազդեցության դրսևորումները հաղորդակցության ընթացքում այն առումով, որ չի բացահայտում, թե ինչ կերպ է տեղեկատվությունն իրացվում (Jakobson1980:81-82, Riva, Galimberti 1998):

Հաղորդակցության մասին խոսելիս պետք է անդրադարձ կատարվի հարատեքստին: Լեզվաբանները այն հիմնականում որակել են լեզվական, այլ ոչ թե սոցիալական բաղադրիչների համակարգ՝ այն դիտարկելով լեզվաբանական գիտակարգերի տեսանկյունից: Այս մոտեցմանը չի հարում Մ. Բախտինը, որը բացահայտորեն մերժում էր Սոսյուրյան վերացական օբյեկտիվիզմը: Ըստ Մ. Բախտինի՝ լեզուն իր իմաստը ստանում է ոչ թե լեզվական կառապարների վերացական համակարգից և դրանց հոգե-ֆիզիոլոգիական իրականացման գործ- ընթացից, այլ լեզվական հաղորդակցության սոցիալական իրադրությունից, որտեղ հաղորդակցությունը տեղի է ունենում մեկ կամ ավելի խոսքային ակտերի շնորհիվ: Մ. Բախտինը հատկապես շեշտում է սոցիալական իրադրության և դրան հարող լայն հարատեքստի կարևորությունը՝ ասունյանների իմաստային կառապարները որոշարկելու հարցում (Bakhtin1986, Volosinov 1976: 172, Riva, Galimberti 1998:12):

Ջ. Ռիվայի և Կ. Գալիմբերտիի դիտարկումները ցույց են տալիս, որ սոցիալ -

հոգեբանական մոտեցումները չորս կարևոր դեր են կատարում մարդկային հաղորդակցությունն ընկալելու և լուսաբանելու գործում, քանի որ ըստ այդ մոտեցումների հաղորդակցությունը դիտվում է որպես համընդհանուր, համապարփակ երևույթ: Ոչ լեզվական և տարածական հաղորդակցական կառապարները, ըստ

Էռւթյան լրացումն են լեզվական հաղորդակցութիւնը, և սա
բնականաբար լեզվաբանական հետազոտութիւններին նոր դաշտ է
բացում հաղորդակցութեան բնույթը

լուսաբանելու համար: Այս տեղից հետագոտողները եզրակացնում են, որ վարքագծի յուրաքանչյուր բաղադրիչ ունի իրեն բնորոշ հաղորդակցական արժեք: Նրանց համոզմամբ սոցիալ-հոգեբանական մոտեցումը լեզուն համարում է ոչ թե զուտ հաղորդակցման միջոց, այլ կարևոր մշակութային հարթակ, որտեղ սոցիալական արժեքների ու պատկերացումների հիման վրա խոսակիցները հաղորդակցական ակտեն իրականացնում: Այսպիսով՝ կարևորվում է տեղեկատվության ապակոդավորման գործընթացը: Այլ կերպ՝ ցանկացած հաղորդակցություն իր բնույթով սոցիալական է, և հաղորդակցության այն սահմանումը, թե դա զուտ տեղեկատվություն է և փոխանցելու միջոց է, այլևս արդիական է, քանի որ հաղորդակցությունը սոցիալ-հոգեբանական գործոնների ակտիվացում է, որտեղ հաղորդակցական հաջողակտը պայմանավորված է ոչ միայն խոսակիցների ֆիզիկական ներկայությամբ, այլև նրանցից յուրաքանչյուրին բնորոշ սոցիալական ինքնության առանձնահատկություններով (Rime 1984: 420, Riva, Galimberti 1998:13-14):

Ասվածից երևում է, որ Ջ. Ռիվան և Կ. Գալիմբերտին մեծապես կարևորում են

հարատեքստի դերը թե՛ ֆիզիկական միջավայրի և թե՛ տարածական ու ժամանակային գործոնների առումով: Նրանց համոզմամբ լեզվական, հասարակական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների փոխներգործությամբ է ձևավորվում հաղորդակցական միջավայրը (տե՛ս Riva, Galimberti 1998:14):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն մոտեցումը, համաձայն որի հաղորդակցությունը համարվում է մարդկային ճանաչողության տարատեսակ, քանզի հենց հաղորդակցության մեջ և դրա միջոցով են դրսևորվում մարդկանց միջանձնյա հարաբերությունները, ըստ էության, հնարավորություն տալով նրանց ոչ միայն ճանաչելու միմյանց այլևս հաղորդակցական իրականությունը: Այս դեպքում հաղորդակցական իրադրությունը դիտարկվում է որպես տեղեկատվության փոխանցման և հասցեատիրոջ ընդունած տեղեկության ապակոդավորման գործընթացների փոխազդեցության արդյունք³:

Անդրադառնալով համացանցային հաղորդակցության

առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ էապես կարևոր է վերջինիս բնույթը. արդյո՞ք

համացանցային հաղորդակցությունը տեղի է ունենում
համաժամանակյա, թե՛

տարածամանակյա
համատեքստում:

Հայտնի է, որ համացանցային համաժամանակյա
հաղորդակցության կարևորագույն նախապայմանը խոսակիցների՝
առցանց տիրույթում միաժամանակ գտնվելն է, որը դամոտեցնում է
առերես հաղորդակցությանը (Riva, Galimberti 1998:17 տե՛ս նաև Dix, Finlay,
Abowd & Beale 1993: 665), մինչդեռ համացանցային տարածամանակյա
հաղորդակցությունը էապես տարբերվում է դրանից:
Տարածամանակյա հաղորդակցության ամենատարածված
տարատեսակներից է, օրինակ, էլեկտրոնային նամակը, որն իր
բնույթով առանձնանում է հաղորդակցության մյուս գրավոր
նմուշներից ոչ միայն տեքստային, այլև սոցիալ-հոգեբանական
առումներով: Լեզվաբանները, փորձարարական
ուսումնասիրություններում համեմատելով համացանցային
հաղորդակցության յուրահատկությունները ոչ էլեկտրոնային
հաղորդակցության այլ գրավոր նմուշների հետ, հանգել են այն
համոզման, որ սոցիալական գործոնների և տեղեկատվության
հագեցվածության տեսակետից տարբերությունները դրանց միջև
էական են: Տվյալ դեպքում սոցիալական գործոնը դրսևորվում է
օգտատերերի սոցիալական իրազեկվածությամբ, տեղեկատվությունը
ճիշտ ներկայացնելու ճանաչողական-հաղորդակցական
կարողությամբ, ինչպես նաև համացանցում առկա տարբեր թեմաները
տեղին մեկնաբանելու հմտությամբ (Galimberti 1998:17):

Ի տարբերություն տարածամանակյա հաղորդակցության՝
համաժամանակյա

հաղորդակցության կարևորագույն յուրահատկությունն այն է, որ
վերջինս տեղի է ունենում իրական ժամանակային ձևաչափում, որտեղ
օգտատերերը հնարավորություն ունեն հաղորդակցվելու մեկ կամ
մի քանի խոսակիցների հետ: Համաժամանակյա հաղորդակցության
տարատեսակների շարքում շահեկանորեն առանձնանում է
համացանցային էլեկտրոնային գրույցը, երբ միմյանց հետ կարող են
հաղորդակցվել մի խումբ օգտատերեր՝ ուղարկելով
հաղորդագրություն կամ տվյալ խմբին, կամ որևէ կոնկրետ

օգտատիրոջ: Տարածամասակյա համացանցային հաղորդակցությունը
զուրկ է այս յուրահատկությունից, որով էլ առանձնանում է
հաղորդակցության մնացած բոլոր տարատեսակներից: Զ.
Նյութեյգրնը համաժամանակյա հաղորդակցության համար

Էական է համարում բազմամիջավայրային ընդլայնման (multimediality), գերտեքստայ - նության, փաթեթների փոխանջատման և փոխգործունության հնարավորութունները, որոնցից գուրկ է տարածմանակյա հաղորդակցութունը: Այս տարբերութունները պայմանավորված են տեխնիկական գործոններով: Ինչպես գիտենք, ստեղնաշարի և համակարգչի էկրանի միջոցով տեղի ունեցող հաղորդակցութունը ավելի շատ ժամանակ է պահանջում, քան սովորական առերես հաղորդակցութունը: Հաղորդակցության գործընթացն էլ ավելի է բարդանում այնպիսի մետահաղորդակցական առանձնահատկութունների բացակայության, ինչպիսիք են դեմքի արտահայտութունը, ձայնի ելևեջները, տոնայնութունը և այլն (Newhagen 1996, տե՛ս նաև Riva, Galimberti 1998:19)⁴: Այս սահմանափակումները բավականին

«անկենդան» են դարձնում համացանցային հաղորդակցութունը, քանի որ խոսակիցներին հասանելի են միայն սահմանափակ տեքստային միջոցներ, ինչպիսիք են հապավումներն ու հուզանշանները և հուզանիշ պատկերները, որոնց դերը համացանցային տեքստում մետահաղորդակցական է (արտահայտում են զգացմունքներ, ասույթի իլլոկուտիվ իմաստը և այլն) (Dix, Finaly, Abowd & Beale 1993:496, տե՛ս նաև Riva, Galimberti 1998:19):

Սակայն կարելի է նաև նկատել, որ համացանցային և առերես հաղորդակցության միջև տարբերութուններից զատ՝ դրանցում կան նաև որոշակի ընդհանրութուններ: Այնհայտ է, օրինակ, որ առերես հաղորդակցութունը տեղի է ունենում համագործակցային միջավայրում, որտեղ խոսակիցները շարունակ վերադասավորում են հաղորդակցական ակտերը՝ հաշվի առնելով դիմացինի շահերը (Goodwin & Heritage

1990:286, այս մասին տե՛ս նաև Riva, Galimberti 1998:20): Համացանցային հաղորդակցութունը ավելի պակաս համագործակցային մթնոլորտում է տեղի ունենում, ինչը պայմանավորված է հաղորդակցության միջոցի՝ համացանցի առանձնահատկութուններով (Brenan 1991: 71): Պետք է նշել, որ տվյալ գործոնը կախված է համացանցային հաղորդակցության

համաժամանակյա կամ տարաժամանակյա ձևաչափից :

Ութեն համացանցային հաղորդակցության միջավայրում
առկա են որոշակի

յուրահատկություններ, որոնք բնորոշ են առերես
հաղորդակցությանը, խոսակիցների

համագործակցության ձգտումը, որը միտված է հաղորդակցությունն առավել արդյունավետ դարձնելու, հաղորդակցական սույն տարատեսակում սահմանափակ է, ինչը պայմանավորված է տեխնոլոգիական միջոցների յուրահատկությամբ: Այս առումով Ջ. Ռիվան և Կ. Գալիմբերտին համացանցային հաղորդակցությունը սահմանում են որպես վիրտուալ շփում, որն իր բնույթով, ի հարկե, զրույց է, սակայն այստեղ բացակայում են արդյունավետ հաղորդակցության բոլոր կանոններն ու չափորոշիչները: Ուրիշ խոսքով՝ համացանցային ներգրավվածությունը տեղեկատվությունն փոխանցողի և այն ստացողի միջև ոչ ներդաշնակ հարաբերություններ է ստեղծում: Հաղորդողը կարող է փոխանցել տեղեկատվություն, մինչդեռ այն ստացողը չի կարող վստահ լինել, որ իր հետ հաղորդակցվողի վիրտուալ ինքնությունը իրականում համապատասխանում է տվյալ անձին (Riva, Galimberti 1998:20):

Ռ. Ղիլիոնի սահմանմամբ, հաղորդակցությունը իրականության արտացոլանքն է, որն էլ առկայանում է նշանային համակարգի և որոշակի կանոնների կիրառմամբ և կարող է վերաբերել նաև համացանցային հաղորդակցությանը ընդամենը որպես վիրտուալ խոսքնթացի նմուշի (Ghiglione 1986): Հաղորդակցության սույն տարատեսակում իրականության կերտումը տեղի է ունենում անհամաչափորեն, քանի որ վիրտուալ շփումը շարունակելու կամ դադարեցնելու որոշումը կախված է տեղեկատվություն ստացողի կամքից: Ընդ որում, այս որոշումը պատահական չպետք է համարել, քանի որ այն իր հերթին կախված է մի շարք գործոններից. ինչպե՞ս է հասցեատերը ընկալում տվյալ իրավիճակը, որո՞նք են վերջինիս նպատակները և այն սոցիալական նորմերը, որոնք ուղղորդում են վերջինիս վարքագիծը: Որոշ գիտնականներ համացանցային հաղորդակցության սույն առանձնահատկությունը բնութագրելու համար նույնիսկ կիրառում են «Էլեկտրոնային օպորտունիզմ» գիտաբանը: Համեմատելով առերես հաղորդակցությունը Էլեկտրոնային նամակների հետ՝ նրանք գալիս են այն համոզման, որ առերես հաղորդակցությունը, ի տարբերություն Էլեկտրոնայինի, ավելի հարուստ է և միտված է համագործակցության, քանի որ առերես

հաղորդակցությունն առանձնանում է հարալեզվական և ոչ
լեզվական բաղադրիչներով, որոնք նպաստում են ներդաշնակ
հաղորդակցության կայացմանը

(Rocco & Warglien 1995: 15): Այս առումով համացանցային հաղորդակցությունը կարելի է սահմանել որպես գործընթաց, որտեղ մի խումբ գործող անձինք որոշակի հաղորդակցական իրադրությունում քննարկում են տվյալ հաղորդակցական գործընթացից բխող հետևանքները: Հաղորդակցվող-անհատների վերաբերմունքը ձևավորվում է համատեղ քննարկումների արդյունքում դրսևորվող կարծիքների հիման վրա: Այլ կերպերանց մինչ այդ ձևավորված կարծիքը տեղի է տալիս համընդհանուրին (Stasser 1992):

Ձ. Ռիվան և Կ. Գալիմբերտին Գ. Սթասերի այս սահմանումը որակում են որպես էական նշանակություն ունեցող համացանցային հաղորդակցության ուսումնասիրություններում, քանզի սոցիալական հարատեքստը, որտեղ տեղի է ունենում համացանցային հաղորդակցությունը, իրոք, կարևորագույն ազդեցություն ունի սույն գործընթացի իրագործման արդյունավետության վրա: Սույն հաղորդակ-ցական գործընթացում հաղորդակցվողները կարող են ներմուծել լեզվի նոր կիրառություն՝ փոխելով մինչ այդ հաստատված իրենց վիրտուալ հարաբերությունները (Riva, Galimberti 1998:21): Անդրադառնալով համացանցային հաղորդակցությանը՝ ամերիկացի սոցիոլոգներ Լ.Սփրուլը և Ս.Քիսլերը նշում են, որ հաղորդակցության հիշյալ տարատեսակում չկան այսպես կոչված սոցիալական ցուցիչներ (social cue), որոնք հնարավորություն են ընձեռում օգտատերերին որոշարկելու իրադրությանը բնորոշ միջանձնյա հարաբերությունների առանձնահատկությունները: Հետագոտողները սոցիալական ցուցիչները բաժանում են երկու տեսակի՝ կայուն, անփոփոխ և հարաշարժ: Կայուն, անփոփոխ ցուցիչ ասելով՝ նրանք նկատի ունեն այն ֆիզիկական միջավայրը, որտեղ իրականում է հաղորդակցությունը (տուն, գրասենյակ, և այլն) (Sproull & Kiesler 1986: 1495-1496): Չուգահեռներ անց կացնելով համացանցային միջավայրի հետ այս պարագայում անփոփոխ ցուցիչներ կարող են համարվել սոցիալական կայքերում օգտատերերի անձնական տվյալները, համաժամանակյա հաղորդակցության մեջ կիրառվող ծածկանունները և այլն: Մինչդեռ հարաշարժ ցուցիչների թվին են դասվում հարալեզվական և արտալեզվական ցուցիչները, որոնց, ըստ մեր իսկ կատարած

ուսումնասիրության եկել են փոխարինելու հոգանշանները և
շարժական հոգապատկերները: Լ. Սփրուլը և Ս.Քիսլերը
եզրակացնում են, որ համացանցային հաղորդակցությունն
իրականանում է սոցիալական վակուումում,

որտեղ անհատների ինքնուրույնը խամրում ու աստիճանաբար անհետանում է: Սրանից բխող հետևությունն այն է, որ համացանցային հաղորդակցությունը նախընտրողները ինքնաարտահայտման հարցում իրենց ավելի ազատ են զգում: Նրանք համոզված են, որ համացանցով հաղորդակցվելիս զրուցակիցները անտեսում են սոցիալական նորմերը, քանի որ չեն ենթարկվում քննադատության և չեն վերահսկվում ուրիշների կողմից: Այս ազատությունը, թերևս, պայմանավորված է համացանցային իրականության համար բնութագրական հատուկ գաղտնիության գործոնով (Sproull & Kiesler 1986: 1496):

Սեփական ինքնության զգացողության բացակայությունը նպաստում է, որ օգտատերերը ոտնահարեն սոցիալական նորմերը: Ռիվայի և Գալիմբերտի արդարացի դիտարկմամբ՝ Ջ. Սիգելը, Վ. Դուբրովսկին, Վ. Քիսլերը և Թ. Մքգուայը ըրը նման ոտնահարման օրինակ են համարում Ֆլեյմինգը, որն իր բնույթով դիմացինի անձը վարկաբեկող վիրավորական խոսքային գործունեության տեսակ է: Եվ իրոք, ակնհայտ է, որ սոցիալական կայքերը հագեցած են Ֆլեյմինգ պարունակող տարատեսակ ասույթներով (սրանց քննությանը կանդիդատնանք այս գլխի 1. 3 ենթագլխում): Որոշ գիտնականներ, սակայն հակադարձում են՝ պնդելով, որ Ֆլեյմինգը որպես խոսքային գործունեության բացասական դրսևորում, միայն համացանցային հաղորդակցությանը չէ, որ բնորոշ է (Lea, O'Shea, Fung & Spears 1992)⁵:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Լ. Սփրուլի և Ս. Քիսլերի այս մոտեցմանը հակադրվում է Ջ. Մանտովանին՝ հերքելով սոցիալական վակուումի գաղափարը, նա նշում է, որ նույնիսկ սենյակում միայնակ լինելու պարագայում հաղորդակցությունը գերծ չի մնում սոցիալական հարատեքստի առկայությունից⁶: (Mantovani 1996a: 170-172 այս մասին տե՛ս նաև Riva, Galimberi 1998:23-24):

Բազմաթիվ այլ հետազոտություններ հաստատում են Ջ. Մանտովանիի այս մոտեցման իրավացիությունը՝ մատնանշելով, որ անհատ – սոցիալական հարատեքստ փոխհարաբերությունները հաստատվում են նույնիսկ սոցիալ-ճանաչողական առումով (Abrams &

Hogg 1990; Spears & Lea 1992; Tajfel & Turner 1986; Turner et al. 1987): Նրանք, ի հաստատումն իրենց տեսակետի, վկայակոչում են այն, որ օգտատերերը

չունեն մեկ սահմանված «ես», այլ առանձնանում են մի շարք ինքնաբերական «ես»-երով: Դրանք ի հայտ են գալիս այն սոցիալական հարատեքստում, որտեղ անմիջականորեն անհատները հաղորդակցվում են:

Ըստ Մ. Լիի և Ռ. Սփիրսի՝ խոսքնթացը կառավարող սոցիալական նորմերի

բացակայությանը և դրանից բխող անվերահսկելի իրավիճակը ստիպում են անհատներին կիրառել վերոնշյալ նորմերը՝ սեփական վարքագիծը վերահսկելու նպատակով (Lea & Spears 1991):

Սոցիալ-ճանաչողական դաշտում կատարված հետազոտությունների

արդյունքում ի հայտ եկավ համացանցային հաղորդակցությունը մեկնաբանող սոցիալ-հոգեբանական նոր մոտեցում, որը կոչվեց իրադրային գործելակերպի տեսություն (Situating Action Theory): Վերջինս գործելակերպը մեկնաբանում է ոչ թե որպես նախորդ պլանավորված և կիրառվող գործունեություն, այլ վարքագիծ, որը, տվյալ հարատեքստին բնորոշ զարգացումներին համահունչ, հարմարվում ու վերադասավորվում է: Սույն տեսությունն ուսումնասիրում է, թե ինչպես են անհատները, հաշվի առնելով տվյալ իրավիճակը, համապատասխան գործունեություն ծավալում: Այլ կերպ՝ սոցիալական հարատեքստը ֆիզիկական անփոփոխ կառույց է: Օգտատերերը համացանցային հաղորդակցական իրադրությունները ընկալում են ըստ դրանց բնորոշ մշակութային առանձնահատկությունների և ուղղորդում են խոսքնթացը՝ հաշվի առնելով սույն գործունեությունը (Suchman 1987: 167):

Այսպիսով՝ ցանկացած հաղորդակցական իրադրության մեջ մշակութային առանձնահատկությունները, որոնք տարբեր արտաբերական բնութագրականների հետ մեկտեղ ձևավորում են հաղորդակցության հարատեքստը, երբեք էլ անփոփոխ ու կայուն չեն կարող լինել, քանի որ դրանց կայունությունը մեծապես կախված է հաղորդակցվող օգտատերերի նախասիրություններից ընդհանրապես և կոնկրետ հաղորդակցական մտադրություններից՝ մասնավորապես: Այսինքն՝ դրանք մշտապես գտնվում են հաղորդակցվող-անհատի մտադրությունների անմիջական ազդեցության ներքո: Պատահական չէ, հետևաբար, որ ըստ Մանտովանիի սոցիալական հարատեքստը

ընդամենը հաղորդակցությունն ուղղորդող նախադրյալ է, իսկ հաղորդակցության իմաստը ձևավորվում է հաղորդակցվողների խոսքում ներկայա-

ցվող երկուստեք ծանոթ նշանային համակցությունների
հերթագայությունը (1996a,
1996b):

Ինչպես իրավամբ նկատում են Ջ. Ռիվան և Կ. Գալիմբերտին,
կիրառելով իրադրային գործելակերպի տեսության դրույթները Ջ.
Մանտովանին (1996a, 1996b) իր մեկնաբանություններում
համացանցային օգտատերերին լայն առումով չի համարում զուտ
տեխնոլոգիական միջոցներ կիրառողներ: Նրա համոզմամբ
օգտատերերը իրականում սոցիալական ինքնություն ունեցող
անհատներ են, որոնք սեփական նպատակների իրականացման համար
ձգտում են որոշակի անկախության, իսկ ժամանակակից
տեխնոլոգիաները պետք է բավարարեն այդ պահանջները (այս մասին
տե՛ս A. Riva , G. Galimberti 1998: 27): Իրադրային գործելակերպի
տեսությունը նորովի է մեկնաբանում հաղորդակցություն
հասկացությունը: Այսինքն՝ հարատեքստը ստեղծվում է
օգտատերերի ջանքերով. նրանք հաղորդակցվում են, որպեսզի
իմաստալից հաղորդակցական ակտ իրագործեն և ոչ թե զուտ
տեղեկատվություն փոխանցեն: Ավելի որոշակի՝ հաղորդակցության
բնույթը (բովանդակությունը) կախված է հաղորդակցական տվյալ
իրադրության մեկնաբանությունից, որում անմիջականորեն
ներգրավված են օգտատերերը: Այս առումով՝ հաղորդվող
տեղեկատվության իմաստը պարզաբանելու արդյունավետ միջոց
կարելի է համարել վերջինս հենքային համատեղ գիտելիքի հետ
զուգորդելը: (Mantovani 1996a 1996b)⁷:

Այսպիսով՝ ինչպես արդեն նշել ենք, սոցիալական հարատեքստը
կարելի որակել որպես տվյալ մշակույթին բնորոշ նշանային
համակարգ, որն անընդհատ փոփոխվում է մարդկային միջամտության
շնորհիվ: Այն չի կարող սահմանվել միայն միջանձնյա
փոխհարաբերությունների տեսանկյունից կամ տվյալ ֆիզիկական
միջավայրի առանձնահատկությունների հիման վրա, որտեղ էլ հենց
իրականանում է տեղեկատվության փոխանցման գործընթացը:
Սոցիալական հարատեքստը հաղորդակցությունն ուղղորդող
նախադրյալներից է, հաղորդակցվողներին երկուստեք ծանոթ
նշանային հերթագայություն, որտեղ խոսքային գործողության
իմաստ է ստեղծվում, և հաղորդակցությունն իմաստալից է դառնում

(Mantovani 1996a, 1996b):

Յամացանցային հաղորդակցության ուսումնասիրության
շրջանակներում էական շեշտադրում է արվում նաև
վերաբերմունքային գործոնի վրա, որը կարևոր դեր է

կատարում հաղորդակցության գործընթացի հետագա ծավալման առումով, քանզի, ինչպես արդեն վերը նշվեց հաղորդակցվողների մտադրությունները և դիրքորոշումները, որոնք լայն առումով կարևորվում են ցանկացած հաղորդակցական գործընթացում, էական դերակատարություն ունեն նաև վիրտուալ հաղորդակցության մեջ: Հաղորդակցական և մտավոր գործընթացների սերտ փոխկապակցվածության շնորհիվ անխուսափելիորեն դրսևորվում են անհատ օգտատերերի այս կամ այն մտավոր կադապրները՝ ըստ էության բացահայտելով հաղորդակցվողների անհատականությունը, ուղղակիորեն կամ քողարկված ձևով արտացոլելով հաղորդակցվող-օգտատերերի կենսափորձն ու աշխարհընկալումը: Սակայն մյուս կողմից չի կարելի լիովին բացառել նաև այնպիսի իրավիճակեր, որ համացանցի առկայությամբ հաղորդակցվողների միջև ձևավորվող անհամաչափ հարաբերությունները որոշակի լարվածություն ստեղծեն հաղորդակցվողների միջև, անվստահություն ծնեն զրուցակցի իրական ինքնության վերաբերյալ և խոչընդոտեն հաջող հաղորդակցության իրականացմանը: Հենց այս հնարավոր իրավիճակների առկայությունն էլ համացանցային հաղորդակցությունը դարձնում է խնդրահարույց:

Համացանցային հաղորդակցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները սահմանող վերոնշյալ երկու մոտեցումներն ունեն մեկ էական տարբերություն: Այսպես՝ դիրքորոշային դրույթը (positioning) խոսընթացը համարում է մարդկային գործունեության ամենակարևոր դրսևորումներից, քանի որ այն պարունակում է հնարավոր բոլոր մտավոր երևույթները: Ինչպես նշում են Ռ. Առեն և վան Լանջենհովը, այնպիսի մտավոր երևույթներ, ինչպիսիք են անհատի վերաբերմունքը, նրան համակած զգացումները, ներակա կերպով ներգրավված են դիսկուրսի ծավալման մեջ (Harre 1989; Harre & van Langenhove 1991: 394-395): Կարելի է նկատել, որ հաղորդակցական և մտավոր գործընթացները խիստ փոխկապակցված են, ուստի ի հայտ են գալիս այսպես կոչված մտավոր կադապրներ (brainframes) (Riva, Galimberi 1998:29):

Ռ. Առեն և Բ. Դեյվիսը համոզված են, որ անհատի «ես»-ը կամ «ես»-երը

անընդհատ ներգրավված են դիսկուրսի կերտման գործընթացում: Սույն փաստը պայ - մանավորված է թերևս այն գործոնով, որ անհատները, վերակերտելով իրենց այսպես կոչված «ես»-ը, փորձում են ավելի արդյունավետ հաղորդակցվել (Davies & Harre 1990:

47): Քննելով անհատի «ես»-ի կամ ինքնադիսկուրսի հարցը՝ Ռոսալդոն այն կարծիքն է հայտնում, որ «ես» ասվածը զուտ անհատի ներքնաշխարհի արգասիք է, այլ նաև ձեռք բերված կենսափորձի, աշխարհընկալման, միջանձնյա հարաբերությունների արտացոլք (Rosaldo 1984):

Փորձելով սահմանել համացանցային հաղորդակցությունը ըստ այն անբախտելի

կապի, որը գոյություն ունի ինքնադիսկուրսի և դրա դրսևորման միջև՝ կարելի է եզրակացնել, որ համացանցային հաղորդակցությունը խոսքնթացի վիրտուալ տարարտեսակ է, որտեղ քիչ են հաջող հաղորդակցությանը նպաստող կանոններ, որտեղ համացանցի առկայությունն ինքնին անհամաչափ հարաբերություններ է ստեղծում տեղեկատվություն փոխանցողի և դրա հասցեատիրոջ միջև: Այսպես՝ մի կողմից տեղեկատվություն փոխանցողը կամ խոսքնթացը սկսողը փորձում է տեղեկատվություն փոխանցել զրուցակցին, սակայն վերջինս չի կարող վստահ լինել, որ դիմացինը ստացել է իրեն ուղղված տեղեկատվությունը⁸: Մյուս կողմից տեղեկատվության հասցեատերը չի կարող վստահ լինել, որ զրուցակցի ինքնությունը քողարկված չէ⁹: Ինչպես Ջ. Մանտովանին է նշում, վիրտուալ իրականությունը հաղորդակցության միջավայր է, որտեղ զրուցակիցների ֆիզիկական ներկայությունը շատ տեսանելի է, սակայն վերջիններիս իրական ինքնությունը կարող է թաքնված լինել կեղծ օգտատերերի ինքնության դիմակով (Mantovani 1996a:197): Սույն գործունը համացանցային հաղորդակցությունը դարձնում է խնդրահարույց, քանի որ, ինչպես գիտենք, ցանկացած հաղորդակցություն պարտադրում է որոշակի նորմեր և իրողություններ (հատկապես առերես հաղորդակցության ժամանակ), մինչդեռ կեղծ ինքնությունն էլ ավելի է խոչընդոտում հաջող հաղորդակցության իրագործումը համացանցում:

Ամփոփելով ենթագլուխը՝ կարելի է նկատել, որ տեսական սահմանումներում հիմնական շեշտը դրվում է համացանցով հաղորդակցվողների անհամաչափ հարաբերությունների վրա, որոնք գլխավորապես պայմանավորված են տեխնոլոգիական սահմանափակումներով: Հարատեքտային ցուցիչների առկայությունը այնուամենայնիվ չի լրացնում ֆիզիկական

հենավորության բացը:

Չարատեքստային և համատեքստային ցուցիչների
հանգամանակից քննությանը

կանդիդատական ատենախոսության հաջորդ
գլուխներում:

1.2 Համացանցային հաղորդակցությունը միանգամայն նոր միջավայր է, որը հեշտացրել է տեղեկատվությունն ստանալու գործընթացը, հաղորդակցական նոր հնարավորություններ ստեղծել և ըստ որոշ լեզվաբանների՝ ձևավորել լեզվի նոր տարատեսակ: Տեխնոլոգիական սարքավորումների միջոցով հաղորդակցությունը շուրջ 70 տարվա պատմություն ունի՝ սկսած առաջին համակարգիչների ստեղծումից մինչև

այսօր: Երբ ստեղծվեցին համակարգչային ցանցերը, դրանց առաջնահերթ և գլխավոր նպատակն էր համակարգիչների միջոցով հեշտացնել տեղեկատվության փոխան-ցումը, սակայն հետագայում դրանք դարձան մարդկանց միջև սոցիալական փոխներազդման հիմնական միջոց՝ տարածամասկյա և համաժամանակյա տեղեկատվություն ստեղծելու և էլեկտրոնային միջոցներով փոխանցելու հնարավորություն (December 1996): Փորձելով սահմանել համացանցային հաղորդակ-ցությունը՝ կարելի է ասել, որ հաղորդակցության սույն տարատեսակը տեղեկատվության փոխանակում է երկու կամ ավելի մարդկանց միջև: Հաղորդակցության ընթաց-քում հասցեագրողը հաղորդագրությունն է ուղարկում զրուցակցին, սակայն հաղորդակ-ցությունը չի սահմանափակվում բառերով կամ նախադասություններով, քանի որ այն կախված է համատեքստից, ինչպես նաև արտալեզվական միջոցների կիրառումից:

Այս բազմագործառույթ գործընթացի իրականացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ինչ են ցանկանում զրուցակիցները միմյանց հայտնել: Հետևաբար այն չի կարող տեղի ունենալ հասարակական շփումից դուրս (Thurlow 2004:18), հատկապես որ լայն առումով այն դառնում է զրուցակցի կամ զրուցակիցների վարվելակերպի ու վերաբերմունքի վրա որոշակի ազդեցություն գործելու միջոց:

Ըստ որոշ գիտնականների՝ հաղորդակցությունը բաժանվում է

2 տիրույթների՝

տեղեկատվական և փոխներգործական: Պատահական չէ հետևաբար, որ այն պահանջում է միջգիտակարգային և այն քննություն (Herring 2001)՝ շեշտը հատկապես դնելով համացանցային միջավայրում և եզվի կիրառման յուրահատկությունների վրա:

Դ. Քրիսթըլի՝ համացանցային դիսկուրսին վերաբերող մոտեցումը ըստ Էռնթյան չի տարբերվում Ս. Յերինգի տեսակետից. Դ. Քրիսթըլը հակված է գործածելու Էլեկտրոնային դիսկուրս գիտաբանը, որով, կարծես, առավել հստակ է ընդգծում երկխոսության և փոխներազդման բնորոշ գծերի տարանջատման կարևորությունը (Crystal 2004:224): Համացանցային դիսկուրսում հաղորդագրությունները ստեղծարվում են Էլեկտրոնային սարքավորումների վրա և նույն մեխանիզմով ուղարկվում տարբեր հասցեատերերի՝ անկախ նրանց գտնվելու վայրից: Վերջինս տարանջատում է համացանցային տեքստի հինգ իրավիճակ՝ Էլեկտրոնային նամակներ,

- ✓ տարածամասնակյա քննարկումներ,
- ✓ համածամասնակյա չատխմբեր,
- ✓ վիրտուալ աշխարհ,
- ✓ համաշխարհային ցանց:

Այս հինգ իրավիճակները միմյանցից բավականաչափ տարբեր են, հետևաբար դրանց լեզուն նույնպես զգալիորեն զանազանվում է մեկը մյուսից և միշտ չէ, որ կարող են գոյություն ունենալ բացառապես առանձին, քանի որ որոշ դեպքերում դրանք սերտ փոխկապակցված են: Այնուամենայնիվ պետք է հաշվի առնել այն փաստը, որ լեզվական յուրահատկությունները կարող են տարբերվել՝ կախված այն բանից, թե տեղեկատվական համակարգը սոցիալական և մշակութային, որ հարատեքստում է կիրառվում:

Ըստ Ս. Յերինգի՝ լեզվի կիրառության այս նոր տարատեսակները՝ տպված

տեքստի ձևով համացանցի գործածման գերիշխող և տեսանելի դրսևորումներից են: Ընդ որում, համացանցի լեզուն քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, թե արդյո՞ք գործ ունենք մեկ, թե՞ մի քանի լեզուների խառնածին տարատեսակի հետ: Համացանցի լեզուն հաճախ դիտվում է որպես գրավոր խոսք, թեև, ըստ Դեյվիդ Քրիսթըլի, այն գրեթե լիովին տարբերվում է ավանդական բանավոր և գրավոր խոսքից (Crystal 2004): Համացանցային լեզվի յուրահատկությունները կախված են լեզվի գործածության նպատակից: Եթե հաշվի առնենք, որ համացանցային հաղորդակ-

ցությունն իր բնույթով լինում է երկու տիպի՝ կարգադրողական
և նկարագրողական

(Herring 2008), ապա կարող ենք ենթադրել, որ առաջին մոտեցումը բնորոշ է մանկավարժներին և բուլոր նրանց, որոնք փորձում են ցույց տալ լեզվի զարգացման ճիշտ ուղղությունը, մինչդեռ նկարագրողականությունը բնորոշ է գիտնականներին, որոնք ուսումնասիրում են համացանցային հաղորդակցությունը տարբեր գիտակարգերի համատեքստում: Սույն աշխատանքում մենք նախընտրում ենք օգտագործել *համացանցային հաղորդակցություն* ն գիտաբանը, որպեսզի ընդգծենք, որ մեր բուն ուսումնասիրության առարկան ներառում է միջանձնյա շփում տարբեր էլեկտրոնային սարքերի և բջջային հեռախոսների միջոցով:

Անդրադառնալով համացանցային հաղորդակցության լեզվական յուրահատկություններին՝ հարկ է նշել, որ էլեկտրոնային դիսկուրսի ուսումնասիրության խնդրո առարկան սույն առանձնահատկությունների քննությունն է, որն իրագործվում է դիսկուրսի վերլուծության մեթոդներով¹⁰ (Herring 2001:1): Ս. Յերինգը համացանցային դիսկուրսը սահմանում է որպես այնպիսի հաղորդակցություն, որի ընթացքում խոսակիցները շփվում են միմյանց հետ՝ տեղեկատվություն փոխանցելով ցանցային համակարգիչների միջոցով: Այս սահմանումն, ըստ էության, բացառում է էլեկտրոնային այլ տիպի սարքավորումներ (հեռախոսներ և այլն), որոնցով նույնպես անհատները հնարավորություն ունեն ուղարկելու և ստանալու հաղորդագրություններ, նկարներ, երգեր և այլն:

Յամակարգչային ցանցերը բնութագրվում են որպես հաղորդակցության միջոց, որն էականորեն տարբերվում է գրավոր և բանավոր հաղորդակցության տարատեսակներից: Էլեկտրոնային դիսկուրսի ուսումնասիրությունները հաստատում են, որ էլեկտրոնային հաղորդակցությունն անմիջական ազդեցություն ունի դիսկուրսի սույն տարատեսակի վրա: Այսինքն՝ էլեկտրոնային դիսկուրսը չի դիտարկվում որպես գրավոր հաղորդակցության դրսևորում, որն իրականանում է էլեկտրոնային տեխնոլոգիաների շնորհիվ (Murray 1988): Բանն այն է, որ տեքստատեղծման միջոցներով հաղորդակցությունն իրականացնողները ազատորեն կարող են հաղորդվող տեղեկատվությունը խմբագրել, վերադասավորել և այլ փոփոխություններ

կատարել, մինչդեռ համացանցային հաղորդակցությունը և հատկապես համաժամանակյա հաղորդակցությունը չունեն այս հնարավորությունը: Համացանցային հաղորդակ-

ցույցան խոսքահերթի տեմպը շատ ավելի արագ է, քան սովորական գրավոր խոսքինը, այնուամենայնիվ նույն տեմպը չունի, ինչ քանավոր առերես հաղորդակցությունը (ստեղնաշարելն ավելի ժամանակատար է, քան խոսելը): Բացի այդ, էլեկտրոնային դիսկուրսի յուրահատկություններից է նաև այն, որ վերջինս հնարավորություն է ընձեռում մի շարք խոսակիցների միաժամանակ հաղորդակցվելու, և հաղորդակցության սույն միջոցները հատուկ են միայն վիրտուալ իրականությանը, քանի որ հաղորդակցության մասնակիցների ճանաչողական կարողությունները միաժամանակ ներգրավվելով մի քանի խոսընթացում, կարող են սահմանափակ լինել (Herring 1999): Վերոնշյալ գործոններով է թերևս պայմանավորված հաղորդակցվող անհատների այն համոզմունքը, որ էլեկտրոնային դիսկուրսը, այնուամենայնիվ, չի կարելի որակել որպես գրավոր կամ քանավոր խոսքի դրսևորում:

Ինչպես նշել ենք, առերես հաղորդակցությունը հարուստ է նրանով, որ պարունակում է բազմապիսի միջոցներ՝ տեսողական, լսողական, ժեստային և այլն: Մինչդեռ էլեկտրոնային դիսկուրսն այս առումով հաղորդակցության այնպիսի տարատեսակ է, որի տեղեկատվությունը հասանելի է գլխավորապես միայն տպագիր տեքստով (Daft & Lengel 1984): Պատահական չէ, հետևաբար, որ շատ լեզվաբանների կարծիքով, համացանցային հաղորդակցությունը չի նպաստում սոցիալական արդյուն-նավետ փոխներգործությանը¹¹: Փաստական նյութի քննությունը վկայում է այն մասին, որ օգտատերերը հարալեզվական միջոցների բացակայությունը լրացնում են տեքստային միջոցներով, հուզանշաններով, կետադրական նշաններով:

Չարկ է նշել, որ համացանցային հաղորդակցության միջոցները նույնպես կարող են որոշիչ լինել լեզվական այս կամ այն կադապարի կիրառման համար: Իհարկե այս դեպքում խոսքը համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցության մասին է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, առաջին դեպքում օգտատերերը առցանց շփման ժամանակ ստիպված են հաղորդակցվել որքան հնարավոր է արագ, ինչը, սակայն, բնորոշ չէ տարաժամանակյա հաղորդակցությանը:

Էլեկտրոնային դիսկուրսի համատարած դրսևորումներից են

համաժամանակյա հաղորդակցական մոդելները և դրանք
արտահայտելու միջոցները: Սույն միջոցների ֆիզիկական
հատկությունները պայմանավորում են էլեգվի կիրառման

յուրահատկութիւնները: Օրինակ՝ արդյո՞ք հաղորդագրութեան երկարութիւնը սահմանփակ է, կամ արդյո՞ք տեխնոլոգիական միջոցները հնարավորութիւն ընձեռում են օգտատիրոջը անանուն հաղորդագրութիւն փոխանցելու, կամ՝ արդյո՞ք որոշ տեխնոլոգիական միջոցներ թույլ տալիս են օգտատիրոջը՝ նախօրոք որոշելու՝ ստանա՞լ, թե՞ անտեսել մյուս առցանց հաղորդակցվողի հաղորդագրութիւնը: Սույն տեխնոլոգիական յուրահատկութիւնները լեզվական միավորների կիրառման փոփոխութիւնների են հանգեցնում:

Լեզվաբանական	տեսութիւնների
շրջանակներում	քիչ է են
Էլեկտրոնային	

դիսկուրսի սահմանումները, որոնք հիմնված են մշակութային որակների, այդ թվում նաև՝ հաստատված ու շրջանառվող նորմատիվ որակների վրա: Օրինակ, Էլեկտրոնային դիսկուրսի տարատեսակ հանդիսացող անձնական Էլեկտրոնային նամակների ոլորտում տարբերակում են այսպես կոչված ցուցակային սպասարկիչներ (listserver)¹² և ֆորումներ, որոնք, փաստորեն, տարածամանակյա հաղորդակցութեան միջավայրեր են և միտված են տեղեկատվութեան փոխանցում իրականացնելու: Սակայն տարածամանակյա հաղորդակցութեան այս երկու տարատեսակները միմյանցից տարբերվում են առկա նորմերի առումով: Առաջին դեպքում օգտատերերի մեծ մասը այս կամ այն գիտական ոլորտը ներկայացնող անհատներ են, իսկ ֆորումներում հիմնականում հաղորդակցվում են արական սեռի երիտասարդ ներկայացուցիչներ, որոնք ցանկանում են իրենց կարծիքն արտահայտել այս կամ այն թեմայի վերաբերյալ, ընդ որում վերջիններիս իրականացրած հաղորդակցութիւնը հաճախ կարելի է բնորոշել ֆլեյմինգի առկայութեամբ: Բանն այն է, որ նման ֆորումների մասնակիցները հաճախ անտեսում են իրենց սոցիալական վարկանիշը և վիրավորական, թշնամական տարրեր պարունակող հաղորդագրութիւններ են փոխանցում միմյանց: Մինչդեռ ցուցակային սպասարկիչները օգտատերերից պահանջում են նախօրոք բաժանորդագրվել՝ փոխանցելով իրենց իսկական անունը և Էլեկտրոնային փոստի հասցեն: Սրանք սոցիալական և

տեխնոլոգիական տեսանկյունից հաղորդակցության հստակ տարանջատված միջոցներ են, որտեղ հաղորդակցվողները պետք է ունենան սոցիալական ու մշակութային որոշակի գիտելիք և հաղորդակցվեն ուղղորդված հենքային գիտելիքով:

Մշակութային առանձնահատկությունների վրա հիմնված տարբերակումներ կարող են դիտարկվել նաև համաժամանակյա հաղորդակցական այնպիսի տարատեսակներում, ինչպիսիք են այսպես կոչված վերհաղորդային գրույցը և բազմաօգտատեր բազան (MUD), որտեղ խոսքնաօգի բնույթը և յուրաքանչյուրին բնորոշ պայմանադրությունները տարբեր են: Ինչպես նշում է Լ. Չերնին, «որոշ հապավումներ լայնատարած կիրառում ունեն այս կամ այն համաժամանակյա համացանցային հաղորդակցության միջավայրերում (ինտերնետային վերհաղորդային գրույցը), սակայն որոշ հապավումներ իրենց ոչ մշտական կիրառման պատճառով օգտատերերի կողմից դիտվում են որպես օտարոտի տարրեր, հետևաբար՝ դրանք կիրառողները չեն դառնում տվյալ վիրտուալ համայնքի անդամ»¹³ (Cherny 1995: 12-13, Herring 2001:4):

Լեզվաբանական տեսություններում գերիշխում է այն դրույթը, համաձայն որի, համացանցային հաղորդակցության մեջ առկա լեզվական կառույցներն իրենց բնույթով շատ ավելի պարզ տարրեր են. դրանց բնորոշ են գրավոր խոսքի ընդունված նորմերի համատարած խախտումներ: Շատերը լեզվի սույն տարատեսակը որակում են որպես նոր լեզվական դրսևորում, որտեղ ընդունված լեզվական չափորոշիչներն անտեսվում են: Օրինակ, դեռևս 1980-ականներին Ն. Բերոնը կանխատեսեց, որ համացանցային հաղորդակցության մեջ ներգրավված հաղորդակցվողները չեն կիրառի բարդ ստորադասական նախադասություններ, իսկ հաղորդակցության նոր ի հայտ եկող սույն տարատեսակը կունենա խիստ թերզարգացած, սահմանափակ բառապաշար: Ժամանակի ընթացքում սույն գործընթացը կհանգեցնի լեզվի արտահայտչական գործառույթների նվազման (Baron 1984: 131, Herring 2001:5):

Էլեկտրոնային դիսկուրսում ոչ ստանդարտ լեզվական միավորների կիրառումը պայմանավորված է օգտատերերի՝ ստեղծարար տնտեսելու ցանկությամբ, ինչպես նաև բանավոր խոսքին բնորոշ առանձնահատկությունները համացանցային հաղորդակցության մեջ ներմուծելու մտադրությամբ: Ըստ Է. Մըրեյի՝ հենց ստեղծարար տնտեսելու ձգտումն է հաղորդակցվողներին ստիպում խուսափել հատկապես ուղղական հոլովով դրված անձնական դերանուններ գործածելուց, եթե հաղորդակցությանը

տեղի է ունենում համաժամանկյա համատեքստում:

Յամաժամանակյ ա հաղորդակցության հետևյալ նմուշը պարունակում է զեղչված բաղադրիչներ¹.

never heard of it

Այս ասույթում զեղչված է ենթական, որը պետք է արտահայտված լիներ ուղղական հոլովով դրված **"I"** անձնական դերանունով:

Յամաժամանակյ ազրույցներից քաղված հետևյալ երկխոսությունը նույնպես պարունակում է զեղչված լեզվական միավորներ.

how are you

(20:37)

fine

(20:37)

you?

Զրուցակիցը, պատասխանելով իր որպիսության մասին տրված հարցին, կիրառում է

fine ածականը՝ զեղչելով **"I"** անձնական դերանունը և **"am"** բայ հանգույցը: Յատկանշական է, որ առանց ընդմիջման, ինչի մասին վկայում է համացանցային զրույցի ժամանակը (20:37), նույն օգտատերը կրկին կիրառում է զեղչված ասույթ՝ բաց թողնելով **"and"** շաղկապը, **"how"** հարցական դերանունը և **"are"** բայ հանգույցը: Յարցական նշանը իրականացնում է բարձրացող հնչերանգի գործառնությունը:

Յիմնվելով մեր փաստական նյութի վերլուծության վրա՝ հարկ ենք համարում նշել, որ զեղչված ասույթները համատարած կիրառություն ունեն համացանցային դիսկուրսում: Նման երևույթի պատճառը բացատրվում է լեզվական և արտալեզվական մի շարք գործոններով, որոնց ավելի մանրամասն կանդիդատներն են սույն ատենախոսության երրորդ գլխում: Այդուհանդերձ, ստորև բերվող մի քանի ասույթները պնդապատճեն ցույց են տալիս զեղչված անդամների լայն կիրառությունը համացանցային զրույցներում: Յետևյալ համաժամանակյա զրույցից վերցված օրինակում առկա է անդամ ենթակայի զեղչում.

big snow storm here today rider

¹ Ատենախոսության փաստական նյութը քաղված է համացանցային դիսկուրսի համաժամանակյա և տարածամանակյա տարատեսակները ներկայացնող կայքերից: Տե՛ս գրականության ցանկը:

Մինչ դեռ հաջորդ ասույթում զեղչված է ուղիղ խնդիրը, ինչը սույն գրույցի թեմային անծանոթ օգտատիրոջը անհասկանալի կթվա.
i know

Լայն տարածում ունեցող մեկ այլ լեզվական դրսևորում է տեքստային միջոցներով առոգանական և այդ թվում նաև հարալեզվական միավորների (ինչպիսիք են ծիծաղը, փոթկոցը և այլն) կիրառությունը, որտեղ ուղղագրական ընդունված կանոնները կարող են անտեսվել: Այսպես հետևյալ օրինակում համաժամանակյա գրույցի մասնակիցները քննարկում են Ալ \$ մանրապատումը.¹⁴

does any body remember the sitcom alf

Othhhh

(20:59)

Smooth

solavita

(20:59)

I rem

onlysocialcha

t (20:59)

alf yeah

onlysocialchat

(20:59)

the alien

solavita

(20:59)

hahah damn funny

Համաժամանակյա հաղորդակցությունը սկսում է օգտատերերից մեկը՝ քննարկման թեմա դարձնելով վերոնշյալ մանրապատումը: Արձագանքելով առաջին օգտատիրոջ հարցին՝ խոսակիցներից ոմանք կիրառում են քաղաքային (urban) խոսակցական **“smooth”** բառային միավորը, ինչը համապատասխանում է հայերեն **png** սլենգային արտահայտությանը: Մինչ դեռ մյուս օգտատերը կիրառում է “alf yeah”

ասույթը: Երրորդ օգտատերը, միանալով հաղորդակցությանը, պարզաբանում է, թե որ մանրապատման մասին է խոսքը՝ կիրառելով the alien բառամիավորը: Հաղորդակցությունը եզրափակող ասույթը ներառում է ծիծաղ արտահայտող **hahah** հարալեզվական միավորը: Բերված նմուշում կրկին գեղջված են ենթական և բայ հանգույցը:

Նման մարտավարությունը ոչ թե վկայում է համացանցային դիսկուրսի աղքատիկ լինելու փաստը, այլ օգտատերերի՝ նոր համացանցային միջավայրին հարմարվելու հմտությունը: Սույն գործընթացը հանգեցնում է նոր լեզվի ստեղծման, որը չնայած կերտվում է գրավոր լեզվական միջոցներով, սակայն շատ հաճախ պարունակում է բանավոր խոսքին բնորոշ յուրահատկություններ: Համաժամանակյա հաղորդակցության մոդելը նպաստում է բարդ կառուցվածքների ի հայտ գալուն: Ինչպես չալանավորված խոսքի կառուցվածքը առերես հաղորդակցության ժամանակ լեզուն կողավորելիս արտացոլում է ճանաչողական սահմանափակումներ, այնպես էլ համացանցային դիսկուրսի համաժամանակյա միջոցները պարտադրում են ժամանակային որոշակի սահմանափակումներ, որոնք էլ օգտատերերին ստիպում են կիրառել պարզ և կրճատ լեզվական տարրեր ու կառույցներ (Chafe 1982, Herring 2001:6):

Ի տարբերություն համաժամանակյա էլեկտրոնային դիսկուրսի՝ տարածա-մանակյա դիսկուրսն օգտատերերին հնարավորություն է ընձեռում նախօրոք պահ-նավորելու փոխանցվող տեղեկատվությունը, քանի որ հաղորդակցության վերոնշյալ տարատեսակը ժամանակային սահմանափակումներ չի պարտադրում: Էլեկտրոնային նամակների լեզվական յուրահատկությունները քննելիս պետք է հաշվի առնել մի շարք սոցիալական գործոններ, որոնցով էլ պայամանավորված է կիրառվող լեզվական տարրերի գրական կամ խոսակցական բնույթը: Ուսումնասիրելով մասնավորապես ավստրալական համալսարաններից մեկի ուսանողների էլեկտրոնային նամակները՝ համացանցային լեզվաբանները պարզել են, որ սույն նամակներում գերիշխում են խոսակցական, ոչ պաշտոնական լեզվին բնորոշ լեզվական միավորներ (հապավումներ, կրճատումներ, մեծատառի փոխարեն

փոքրատառով գրված բառեր, կետադրության անտեսում և այլն):
Մինչդեռ համակարգչային ոլորտում ներգրավված մասնագետների

Ելեկտրոնային նամակներից երևում է, որ նրանք նախընտրում են պաշտոնական գրավոր խոսքին բնորոշ շարահյուսական բարդ կառույցներ, ստորադասական նախադասություններ և այլն (Herring 1996, տե՛ս նաև Herring 2001 էջ 6):

Չամացանցային դիսկուրսը սահմանող դրույթների քննությունը պարզաբանում է, որ դիսկուրսի այս տարատեսակը երբեմն կարող է ոչ կապակցված և աններդաշնակ լինել, ինչը պայմանավորված է համակարգչային համակարգերի՝ խոսքահերթը սահմանափակող գործառնությունով: Չամացանցով հաղորդակցվողների հաղորդագրության շատ հաճախ բնորոշ են երկար և անկանխատեսելի դադարները: (Cherny 1999; Murray 1988: 331): Չամակարգչային հաղորդակցությանը հատուկ երկու գործոն խոչընդոտում են խոսքնթացի կառավարման գործընթացը: Այսպես՝ հերթագայությունը խաթարվում է, քանի որ հաղորդագրության շղթաները համացանցում հրապարակվում են այն հերթականությամբ, ինչպես դրանք ստանում է համակարգը, այսինքն՝ անհատները հաշվի չեն առնում, թե ինչ պատասխան հաղորդակցական ակտ են կատարում: Խոսքահերթի ճիշտ կառավարմանը խոչընդոտում է միաժամանակյա, համատեղ արձագանքի (simultaneous feedback) բացակայությունը, որը պայմանավորված է Լսողական և տեսողական ցուցիչների սահմանափակությամբ: Առաջին գործոնը հանգեցնում է համացանցային խոսքնթացի մասնատման: Դիսկուրսում տեղի է ունենում հաղորդակցական ակտերի մասնակի համընկնում (Herring 1999, Baron 2010:4):

Տարաժամանակյա հաղորդակցության գործընթացը նույնպես առաջ է քաշում մի

շարք խնդիրներ, ինչպես, օրինակ՝ նշանակյալի վերծանման խնդիրը: Տարաժամանակյա հաղորդակցության մեջ ներգրավված օգտատերերը՝ կապակցման սույն միջոցով անդրադառնում են նախորդ հաղորդագրության բովանդակությանը (Baym 1996; Herring 1996b, Herring 2001:8)

Դիմացինին մեջբերելը կամ նրա խոսքը պատճենելը համընդհանուր կիրառելիություն ունի տարաժամանակյա հաղորդակցական մոդելներում: Մեջբերումը ստեղծում է միմյանց հաջորդող հաղորդակցական ակտերի պատրանք, քանի որ մեկ

հաղորդագրության մեջ այն զուգադրում է ն՝ հարց, ն՝ պատասխան:
Այսինքն՝ զրուցա կիցը մեջբերում է մինչ այդ փոխանցված
տեղեկատվությունը, այնուհետև արձագան-

քում դրան: Ստեղնաշարը և ժամանակը խնայելու նպատակով հաղորդակցվողները ներկայումս մշակել են նոր մարտավարությունն՝ կիրառելով [...] կետադրական նշանը՝ որպես դիմացինի խոսքի մեջ բերմանը փոխարինող նշան:

Վերլուծելով տարածամանակյա հաղորդակցության խոսքահերթի առնձնահատկությունները՝ Բայմը(1996) վեր է հանում մեկ այլ խնդիր ևս. մեկ հաղորդագրությունը կարող է պարունակել մի քանի հաղորդակցական ակտ, որոնք իրենց գործառնությունով հարակից չեն: Այսինքն՝ էլեկտրոնային նամակները միանգամից են հաղորդում տեղեկատվությունը, մինչդեռ համածամանակյա հաղորդակցության ընթացքում տեղեկատվությունը փոխանցվում է մի քանի խոսքահերթով:

Համածամանակյա հաղորդակցական համակարգում հաղորդագրությունը երբեմն շատ քիչ տեղեկատվություն է պարունակում, ինչը պայմանավորված է համացանցային համակարգի սահմանափակումներով (չափի որոշ համակարգեր օգտատերերին թույլ չեն տալիս 100-ից ավելի գրանիշ կիրառել), և օգտատերը շարունակում է խոսքահերթը անմիջապես հաջորդող հաղորդագրության միջոցով: Այնուամենայնիվ, օգտատերը չի կարող վստահ լինել, որ խոսակիցն անմիջապես կստանա իր ուղարկած հաղորդագրությունը, քանի որ խոսքահերթը կարող է ընդհատվել հաղորդակցության մեկ այլ մասնակցի հաղորդագրությամբ: Սույն հաղորդակցական արգելքները վերացնելու նպատակով համածամանակյա հաղորդակցվողները նոր մեխանիզմներ են ներմուծում՝ խոսքահերթը նման ընդհատումներից զերծ պահելու նպատակով: Այսպես, օրինակ՝ օգտատերը հատուկ նշանի կիրառմամբ հայտնում է, որ հաղորդակցությունը դեռևս չի ավարտվել, ինչը թույլ չի տալիս հաղորդակցական ակտի մյուս մասնակիցներին ընդհատել խոսքահերթը (Herring

1999, Herring 2001:8):

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ համացանցային հաղորդակցությունը ճիշտ ընկալելու համար օգտատերերից պահանջվում է մի շարք մարտավարությունների կիրառում, որոնց թվին են պատկանում խոսքահերթի պահպանում, հարատեքստի՝ որպես վիրտուալ հաղորդակցության կարևորագույն գործոնի

իմացութիւնը:

1.3. Համացանցային քաղաքավարությանը ունը որպես ներդաշնակ հաղորդակցությանը նպաստող գործոն

Համացանցային և առերես հաղորդակցությանը բնորոշ է ևս մի ընդհանրություն՝ քաղաքավարության նորմերի պահպանումը, որը որոշակիորեն նպաստում է ներդաշնակ հաղորդակցության գործընթացին: Համացանցային քաղաքավարությունը սահմանվում է նեթիքեթ (netiquette) գիտաբանով: Համացանցային քաղաքավարական նորմերի հիմքում ընկած են քաղաքավարության՝ Ջ. Լիչի առաջարկած կարգախոս-ները, որոնք կիրառվում են որպես հաղորդակցությունը կանոնակարգող, հակամարտահարույց իրավիճակները կանխարգելող միջոցներ (Leech 1983):

Քաղաքավար մարտավարությունները կարևորվում են նաև չատ սենյակներում:

Դրանք կարող են կիրառվել հենց օգտատիրոջ և կամ համացանցային տվյալ միջավայրը համակարգողի կողմից:

Քաղաքավարության՝ համացանցային դիսկուրսին բնորոշ նորմերը օգտա-

տերերից հիմնականում պահանջում են հետևել ընդունված սոցիալական վարվելա-կարգին: Այլ կերպ ասած՝ վիրտուալ միջավայրին բնորոշ քաղաքավարության կանոն-ները ոչնչով չեն տարբերվում առօրյա հասարակական շփման նորմերից: Այնուամենայնիվ, էլեկտրոնային նամակների վերաբերյալ կան որոշակի ցուցումներ, որոնք օգնում են օգտատերերին չխախտել այդ նորմերը: Այսպես՝ խիստ պաշտոնական դիմելածևը այնքան էլ ընդունելի չէ հատկապես, եթե խոսքը այլ մշակույթներ-կայացնող օգտատերերի մասին է: Էլեկտրոնային նամակները պետք է ստորագրություն ունենան: Համացանցում շատ կարևորվում է հաղորդագրության կամ նամակի հակիրճությունը, և նամակին կամ հաղորդագրությանը պատասխանելիս կարիք չկա կրկնել ու բնօրինակ տեքստը:

Ինչպես առերես հաղորդակցության դեպքում, այնպես էլ վիրտուալ միջավայրում հաղորդակցվողները կանգնած են լեզվական

տարբեր միջոցների ընտրության առջև, և նրանց կողմից այս կամ այն խոսքային ակտի կիրառումը պայմանավորված է արտալեզվական գործոններով: Համացանցային դիսկուրսում գործածվող լեզվական տարրերի անուղղակիության աստիճանը կարող է տարբեր լինել: Այսպես՝ եթե

օգտատերը անձնական նպատակ է հետապնդում, ապա վերջինս նախընտրում է քողարկված խոսքային ակտեր կիրառել թե՛ համաժամանակյա հաղորդակցության ժամանակ և թե՛ էլ եկտրոնային նամակներ ուղարկելիս:

Այնուամենայնիվ, ֆիզիկական ներկայության բացակայությունը կարող է եապես ազդել օգտատերերի խոսքային մարտավարության վրա (Baron 1984: 130): Վերլուծելով էլեկտրոնային նամակների բնորոշ լեզվական յուրահատկությունները՝ կարելի է նկատել, որ տարածամանակյա հաղորդակցության սույն տարատեսակը առանձնանում է ոչ պաշտոնական լեզվաճական հնարքներով:

Էլեկտրոնային նամակների ժանրային յուրահատկություններին ավելի մանրամասն կանդրադառնանք սույն ատենախոսության երկրորդ գլխում, իսկ լեզվական քաղաքավարության չափորոշիչների առումով՝ հարկ է նշել, որ դիսկուրսի յուրահատկությունները հաճախ մեկնաբանվում են գրուցակիցների դրսևորած լեզվական վարվելակերպի տեսանկյունից: Այսպիսով՝ հիմնվելով լեզվական քաղաքավարության՝ որպես դիսկուրսի ընթացքն ուղղորդող գործոնի վրա՝ լեզվաբանական տեսությունների շրջանակներում ներմուծվում է դիսկուրսի երկու տարատեսակ. գործառնական դիսկուրս (transactional discourse) և փոխներգործման դիսկուրս (interactive discourse) (Kasper 1990: 205): Գործառնական դիսկուրսի առանձնահատկություններից է տեղեկատվության արդյունավետ փոխանցումը: Այլ կերպ՝ գրուցակիցների հաղորդակցությունը կարելի ասել, հենվում է Փ. Գրայսի **համադրծակցության սկզբունքի վրա** Մինչդեռ փոխներգործման դիսկուրսը կարելի բնութագրել որպես հաղորդակցական մոդել, որտեղ գրուցակիցների համար կարևոր են սոցիալական ներդաշնակ հարաբերություններ հաստատելը և դրանք պահպանելը, ինչը վերջիններիս ստիպում է չշրջանցել լեզվական քաղաքավարության նորմերը:

Այսպիսով՝ կարելի է սահմանել դիսկուրսային սանդղակ, որտեղ առկա են գործառնական ասույթներ, որտեղ լեզվական քաղաքավարության նորմերն ընդհանրապես չեն կարևորվում (սույն ասույթները կարող են դասախոսություններից կամ իրավական դիսկուրսից վերցված լեզվական նմուշներ լինել):

Վերոնշյալ դիսկուրսիվ սանդղակում ոչ պակաս կարևոր են փոխներգործման ասույթները, որոնցում էականը,

ինչպես արդեն նշել ենք, սոցիալական հարաբերությունների հաստատմանն ուղղված քաղաքավարական նորմերի պահպանումն է (Lakoff 1989):

Համացանցային դիսկուրսում ասույթների գործառնական և փոխներգործման

մակարդակները տարբերվում են ըստ վիրտուալ միջավայրի: Քննելով էլեկտրոնային նամակները՝ կարելի է պնդել, որ դրանք կարող են արտացոլել թե՛ գրական խոսքին և թե՛ առօրյա հաղորդակցությանը բնորոշ յուրահատկություններ: Էլեկտրոնային գրույց-ների՝ չափերի լեզուն առանձնանում է փոխներգործման դիսկուրսիվ նրբերանգներով, քանի որ այստեղ շատ ավելի առաջնային է համարվում հաղորդակցության սոցիալական կողմը:

Լուսաբանելով համացանցային քաղաքավարական նորմերի խնդիրը՝ չենք

կարող չանդրադառնալ անքաղաքավարի, կոպիտ վարքագծի դրսևորումներին: Այսպես՝ անքաղաքավարի վարքագիծը կարելի է բնութագրել որպես սահմանված նորմերի ոտնահարում, որի պատճառով խախտվում է սոցիալական հավասարակշռությունը:

Գ. Կասպերը առաջարկում է տարբերակել **ոչ միտումնավոր և միտումնավոր անքաղաքավարության դրսևորումները**: Առաջինը պայմանավորված է քաղաքավարության կանոնների չիմացությամբ: Եթե խոսողը չի պատկանում նույն լեզվական համայնքին, այդ դեպքում նրան հասու չեն լեզվական քաղաքավարությանը հատուկ որոշակի կադապրներ, որոնք կիրառվում են տվյալ համայնքի ներկայացուցիչների կողմից: Երեխաների խոսքում շատ հաճախ հանդիպում ենք հրամայական ասույթների, որտեղ բացակայում են խոսքը մեղմացնող լեզվական տարրեր, ինչպիսիք են, օրինակ, “please” կամ “thank you” միավորները: Երկրորդ դեպքում խոսողը հակված է, որ լսողն իր ասույթը մեկնաբանի որպես կոպտության դրսևորում: Գ. Կասպերի կարծիքով՝ երեք տարբեր խոսքային իրադրություններում է, որ խոսողի ասույթներն առանձնանում են լեզվական անքաղաքավարության դրսևորումներով:

□ առաջին՝ պայմանավորված է խոսողի խիստ անկառավարելի հուզական դաշտով: Եթե անհատը չի կարողանում կառավարել իրեն համակած հույզերը՝ ուրախություն թե

բարկություն, ապա նման վարքագիծը որակվում է որպես
անքաղաքավարի: Պետք է, սակայն, նշել, որ եթե անհատի՝
նման

հուզական բռնկումների պատճառը մինչ այդ խոսողի դրսևորած ագրեսիվ վարքագիծն է, ապա նման արձագանքը չի բնութագրվում որպես անքաղաքավարի կամ կոպիտ:

- Երկրորդը կիրառվում է որոշակի նպատակի հասնելու համար: Նման վարքագիծը Գ. Կասպերը անվանում է **մարտավարական կոպուլթյուն** (Kasper 1990: 210): Նման անքաղաքավարի վարքագծի կարելի է հանդիպել իրավական դիսկուրսում, մի միջավայր, որտեղ մեղադրող կողմը կարող է լեզվական հարձակման ենթարկել պաշտպանյալին: Լեզվական այս մարտավարությունը անընդունելի է առօրյա հաղորդակցության համատեքստում, քանի որ այն խախտում է քաղաքավարության կանոնները (Lakoff 1989):
- Երրորդ՝ **հեգնական կոպուլթյուն**, երբ խոսողը, կիրառելով **մարտավարական կոպուլթյունը** բնորոշ նույն անքաղաքավարի վարքագիծը, կրկին որոշակի նպատակ է հետապնդում: Ի տարբերություն Ձ. Լիչի, որի կարծիքով հեգնանքը լեզվական ագրեսիայի անուղղակի դրսևորում է և չի հանգեցնում խոսակիցների առճակատման, Գ. Կասպերը հեգնանքը համարում է նույնքան անքաղաքավարի, որքան ուղղակիորեն արտահայտված կոպիտ նրբերանգներ պարունակող ասույթները:

Համացանցում քաղաքավարի խոսքը կոպիտ խոսքից տարանջատող սահմանը շատ նուրբ է: Այս կապակցությամբ Էսկան դեր է խաղում ֆիզիկական բացակայության գործոնը: Այլ կերպ՝ վիրտուալ հեռավորությունը հաղորդակցվողներին հնարավորություն է ընձեռում ավելի ազատ լինել իրենց լեզվական միջոցների ընտրության հարցում, ինչի պատճառով ի հայտ են գալիս անսպասելի և անկառավարելի խոսքային մարտավարություններ: Սույն խոսքային մարտավարությունների շարքին կարելի է դասել վերը արդեն հիշատակված ֆլեյմինգը, որը **լեզվական ագրեսիայի դրսևորում է համացանցային դիսկուրսում**: Այս երևույթը սահմանող միանշանակ տեսական մոտեցումներ չկան, այդուհանդերձ լեզվաբանների կարծիքը համընկնում է այն հարցում, որ ֆլեյմինգը անընդունելի հաղորդակցական մարտավարություն է, ինչը խաթարում է համացանցային ներդաշանակ հաղորդակցությունը:

Փորձելով սահմանել

այս լեզվական երևույթը՝ Փ. Օ' Սալիվընը և Ա. Ֆլենեգընը ներկայացնում են ֆլեյմինգը բնութագրող տարբեր մոտեցումներ՝ այն որակելով որպես ուղիղ, անհիմն քննադատման դրսևորում (O'Sullivan & Flanagan 2000) կամ թշնամական, սադրիչ հղում կամ մեկնաբանություն (Kollock & Smith 1999) և այլն: Ամփոփելով ֆլեյմինգը սահմանող տեսական մոտեցումները՝ կարելի է եզրակացնել, որ սույն խոսքային մարտավարությունը, որն առանձնանում է լեզվական անքաղաքավարության և վիրավորական արտահայտությունների, կիրառվում է թե՛ համաժամանակյա և թե՛ տարածամասնակյա հաղորդակցության ընթացքում, երբ օգտատերերը, ֆիզիկական հեռավորություն փաստից օգտվելով, տուրք են տալիս իրենց բացասական հույզերին և դրսևորում հակահասարակական վարքագիծ (Hastrdlova 2010):

Աշխատանքում ֆլեյմինգ պարունակող օրինակները քաղված են թե՛ չատ սենյակներում կիրառված համաժամանակյա հաղորդակցությունից և թե՛ տարածամասնակյա հաղորդակցական մոդելը ներկայացնող այնպիսի սոցիալական կայքերից, ինչպիսիք են youtube-ը և facebook-ը: Հետևյալ օրինակը չատ սենյակից վերցրած համաժամանակյա հաղորդակցության նմուշ է.

❌❌👁 KILL ALL asians First. THE HOLY Universe 👁❌❌EVIL yellow face

crush the space. Ugly eye+++doggy Face Holy War! Holy War! Holy War!

China! China! China! China! China! China!

Բերվածը ռասիստական ֆլեյմինգի դրսևորում է: Եթե քննենք նմուշի լեզվական և հարալեզվական նրբերանգները, ապա կտեսնենք, որ հաղորդակցվողը ռասիստական բնույթի արտահայտություններ է անում ասիական ծագում ունեցող անհատների մասին՝ **EVIL yellow face crush the space. , Ugly eye+++doggy Face** ասույթների միջոցով: Հատկանշական է, որ **EVIL** բառային միավորը ներկայացված է գլխատառերով, որով հաղորդակցվողը ուզում է հասկանալի դարձնել, որ իր խոսքը արտաբերված է գոռոցով: Հակասոցիալական և թշնամական վերաբերմունքի մասին է վկայում նաև **KILL ALL asians First** ասույթը, որով օգտատերը կրկին իր ռասիստական վերաբերմունքն է արտահայտում ասիացիների

Նկատմամբ: Հատկանշական է, որ հաղորդակցվողը *ասիացիներ (Asians)* բառը, որն անգլերեն գրավոր խոսքում կիրառվող կանոնի համաձայն պարտադիր կարգով ներկայացվում է մեծատառ,

միտումնավոր գրել է փոքրատառով՝ փորձելով նսեմացնել
ասիական ռասան և դրան պատկանող անհատներին:

Նույն օգտատերը շարունակում է լեզվական
ագրեսիան և ռասիստական

վարքագիծը, ինչը կրկին ուղղված է ասիական պետություններին.

Japan=coward↓**korea=sh**t**↓**Cheap indonesia**↓**Dirtyphilippines**_

Այս դեպքում օգտատիրոջ ռասիստական
վերաբերմունքը մասնավորապես

արտահայտվում է բացասական առնչականային նրբերանգներ

պարունակող **coward, Cheap, Dirty** ածականներով և **shit**

գռեհկաբանություններ:

Ֆլեյմինգը կարող է պարունակել թե՛ ռասիստական և թե՛
կրոնական անհան-դուրժողականություն պարունակող լեզվական
տարրեր: Այսպես՝ հետևյալ օրինակ-ներում կրկին դրսևորվում է
ռասայական խտրականություն, որն արտահայտվում է անհատների այս
կամ այն ռասայական պատկանելության քննադատություններով:

—Stupid white bitch Է-Է Kill ALL white Honky white bitch F****in white pig
race ! ! ! 【U.S、russia DEAD First】、 ALL Brown bastard※Latino↓ Stupid
hispaic

Donkey Muslim ugly Dumb

Օրինակը ներառում է ինչպես ռասայական, այնպես էլ սեռական
խտրակա-նություն տարրեր: Ֆլեյմերը, կիրառելով white Honky white bitch
F***in white pig race վիրավորական արտահայտությունը, իր ագրեսիվ
վերաբերմունքն է դրսևորում սպի-տակամորթների, հատկապես
սպիտակամորթ կանանց նկատմամբ: Վերոնշյալ նմուշը պարունակում
է նաև մեծատառերով ներկայացված արտահայտություններ, որոնք
մեզ հնարավորություն են տալիս պատկերացնել ու օգտատիրոջ՝
չափից դուրս հուզված ու ագրեսիվ հոգեվիճակը:

Քննությունը ցույց է տալիս, որ ֆլեյմինգը՝ որպես
հակընդդեմ երկխոսության առ-ցանց դրսևորում, կարող է
արտահայտվել թե՛ համաժամանակյա և թե՛ տարածա-մանակյա
էլեկտրոնային միջավայրում: Յետևյալ նմուշները ամերիկյան և
բրիտանա-կան լրագրերի առցանց տարբերակներից քաղված
մեկնաբանություններ են, հետևաբար՝ տարածա-մանակյա
հաղորդակցության դրսևորումներ:

Ստորև բերվող նմուշը վերցված է the Guardian բրիտանական պարբերականից: Այս ասույթով հեղինակն իր խիստ բացասական դիրքորոշումն է արտահայտում հրեաֆինանսիստների նկատմամբ.
Arrogant stupid tool of the military industrial complex and Jewish banker parasites over USA.

Ինչպես տեսնում ենք, սույն նմուշը ֆլեյմինգի ավելի մեղմ դրսևորում է, քանի որ, ի տարբերություն միջարքայլ օրինակների, այն չի պարունակում գռեհկաբանություններ: Օգտատերն իր բացասական դիրքորոշումն արտահայտում է առանց տաբու բառերի կիրառման:

Մեկ այլ օրինակում, չնայած առցանց հաղորդակցությունը տեղի է ունենում

տարածամասնակյա համատեքստում, միջանձնյա հակամարտություն է ձևավորվում երեք օգտատերերի միջև.

Nadia Carmona Common. I'm a latina and who the heck cares how others think and feel. That's not our problem, it's theirs. Stop spreading hate. Everyone has something inside that others may not like, EVERY LIVING BEING IN THE PLANET!

Tiffany Louise Says the white latina who will never incur the wrath of bigots says we should all move on and get over it. GOOD TO KNOW

Nadia Carmona Lololplease Tiffany Louise. You have no clue what you're talking about or

what I've being through. I, unlike you, don't dwell in the BS insecurities of other bigots and racist like you. Thank you for making my point.

Adam Williams Tiffany Louise a fine example of talking turds.

Այս հատվածում հակընդդեմ երկխոսության մասնակիցներն իրենց մեկնաբանություններն են ներկայացնում Daily Telegraph-ում տեղ գտած հոդվածներից մեկի վերաբերյալ: Այսպես՝ լրագիրն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես ամերիկյան ռեստորաններից մեկում հաճախորդները վիրավորում են մատուցողուհուն և, մատնանշելով վերջինիս ռասայական պատկանելությունը (աղջիկը լատինամերիկյան երկրներից մեկի ներգաղթյալներից է), թեյավճար չեն թողնում: Օգտատերը, փորձելով հաշտեցման եզրեր գտնել, խորհուրդ է տալիս անտեսել մարդկանց նմանօրինակ վարքագիծը: Հատկանշական է, որ օգտատերը,

Կիրառելով EVERY LIVING BEING IN THE

PLANET! ասույթը մեծատառերով, փորձում է իր ուղերձն ավելի տպավորիչ դարձնել : Ի պատասխան Կարմոնայի մեկնաբանության՝ մեկ այլ օգտատեր՝ Թիֆանի Լուիսը, իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում վերջինիս նկատմամբ, քանի որ Կարմոնան փորձում է հաշտեցնել տարբեր ազգության և ռասայի պատկանող անհատների: Վերջինիս Says the white latina who will never incur the wrath of bigots says we should all move on and get over it ասույթը պարունակում է հանդիմանություն, քանի որ, ըստ Լուիսի, միայն սպիտակամորթ անհատը կարող էր նման խորհուրդ տալ: Լուիսի "GOOD TO KNOW" ասույթը նույնպես գլխատառերով է, այս դեպքում գլխատառերի կիրառմամբ՝ վերջինս ասույթին հեգնական նրբերանգներ է հաղորդում: Կարմոնան իր հերթին չի ընկրկում և հակադարձում է իրեն ուղղված քննադատությանը: Նա նշում է, որ Լուիսը ոչինչ չգիտի իր մասին, հետևաբար նա չի կարող դատողություն անել մի մարդու մասին, որին ընդհանրապես չի ճանաչում: Ծարունակելով առճակատում՝ Կարմոնան իր հերթին վիրավորում է Լուիսին՝ նրան անվանելով ռասիստ և ծայրահեղական: Ակնհայտ է, որ Կարմոնան, խուսափելով կիրառել "bullshit" գռեհկաբանությունը, փոխարենը նախապատվությունը տալիս է այդ միավորի "BS" հապավմանը: Տարածամանակյա հաղորդկցմանը միանում է մեկ ուրիշ օգտատեր, որը Tiffany Louise a fine example of talking **turds** գռեհկաբանությունն պարունակող ասույթով իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Լուիսի նկատմամբ՝ բացահայտորեն պախարակելով նրան անիմաստ բաներ ասելու համար: Սույն ասույթի վերլուծությունից պարզ է դառնում, որ կին օգտատերերը հիմնականում խուսափում են գռեհկաբանություններից՝ նախընտրելով չոտնահարել լեզվական քաղաքավարության նորմերը, մինչդեռ տղամարդիկ, տուրք տալով իրենց հոլյգերին, շատ հաճախ ընտրում են հենց նման լեզվական միավորներ:

Չամացանցային քաղաքավարության նորմերի քննությունը չի կարող անտեսել առկա միջլեզվական և միջմշակութային տարբերությունները, որոնք նույնպես կարևորագույն գործոն են ճիշտ և արդյունավետ համացանցային հաղորդակցության կայացման համար: Մարդաբանական ուսումնասիրությունները հստակ տարանջատում են արևմտյան մշակութային արժեքները (արևմտյան

մշակույթ ասելիս ի նկատի ունեն ամերիկյան և Եվրոպական
արժեհամակարգերը) մնացած ազգերի

արժեհամակարգերից: Կասպերը նշում է, որ քաղաքավարության ռազմավարությունների լեզվական կոդավորումը տեղի է ունենում սովյալ լեզվի միավորների ներմուծման շնորհիվ, որոնք կարող են ներառել դարձվածաբանական միավորներ, առօրյա, նույնիսկ սլենգային արտահայտություններ, հետևաբար՝ անհնարին է կատարյալ համարժեքներ ներկայացնել վերջիններիս համար (Kasper 1990: 198):

Ինչպես ցույց է տալիս քննությունը, ի լրումն լեզվական տարբերությունների՝ հաղորդակցվելիս ի հայտ են գալիս անհատի աշխարհընկալումն արտացոլող տարբերություններ, որոնք համացանցում լավագույնս են դրսևորվում: Սա պայմանավորված է այն փաստով, որ աշխարհի ցանկացած վայրում օգտատերերը կարող են հաղորդակցվել համացանցի միջոցով: Թերևս սույն գործոնն է ստիպում օգտատերերին ջանք չխնայել ընկալելու դիմացինի քաղաքավարի ռազմավարությունը: Այնուամենայնիվ հույզերի դրսևորումները կարող են հանգեցնել վիրավորական արտահայտությունների լայնատարած կիրառման, ինչը պայմանավորված է օգտատերերի ֆիզիկական բացակայությամբ:

Ամփոփելով անքաղաքավարի խոսքի համացանցային դրսևորումների

վերլուծությունը՝ կարելի է նկատել, որ նման լեզվական վարքագիծը տեսանելի է թե՛ համաժամանակյա (չատեր) և թե՛ տարաժամանակյա (մեկնաբանություններ) հաղորդակցական մոդելներում: Անկարելի է չնկատել, որ ժամանակակից տեխնոլոգիաներից բխող փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողել լեզվի և դրա կիրառման վրա: Սույն փոփոխությունների շնորհիվ էր, որ ի հայտ եկավ էլեկտրոնային դիսկուրսը: Մըռեյն առաջին էր լեզվաբաններից, որ լեզվի սույն տարատեսակի համապարփակ նկարագրություն առաջադրեց (Murray 1988), իսկ 1990-ականներից դիսկուրսի այս նոր տեսակը լուրջ ուսումնասիրությունների առարկա դարձավ:

Այսպիսով՝ հարցի տեսական հայեցակերպի ուսումնասիրության և փաստական նյութի շրջանակներում արված դիտարկումների հիման վրա հանգում ենք այն համոզման, որ ցանկացած հաղորդակցական ակտ իրագործվում է սոցիալ-

հոգեբանական, մշակութային հենքի վրա, քանի որ համացանցային
լեզուն սոսկ տեղեկատվության փոխանցման միջոց չէ, այլ, լայն
իմաստով, խոսող-անհատի արժեհամակարգի դրսևորում:
Համացանցային հաղորդակցությունը, որն

իրականություն է դարձել տեխնոլոգիական միջոցների ժամանակակից զարգացումների շնորհիվ, բազմաթիվ ընդհանրություններ ունի առերես հաղորդակցության հետ: Այս ոլորտում առանձնակի կարևորություն է ստանում հարատևությունը, ներառելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են միջանձնյա հարաբերությունները, հենքային գիտելիքը և համացանցային քաղաքավարությունը, որոշիչ դեր ունի վիրտուալ տիրույթում հաղորդակցական ակտի իրագործման մեջ, ընդ որում հաղորդակցության համաժամանակյա և տարաժամանակյա տեսակները բնութագրվում են տեքստատեղծման որոշակի յուրահատկություններով, որոնց առկայությունն ուղղված է հաղորդակցվողների՝ ստեղծարար խնայելու մտադրությամբ:

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպես նշում է Ս. Ֆարինան, «այն տեսական դրույթը, համաձայն որի հաղորդակցությունը տեղեկատվություն փոխանցելու միջոց է, գիտելիքը դիտարկում է որպես հաղորդակցության գործընթացի հետ չառնչվող առանձին տարր: Այլ կերպ ասած՝ գիտելիքը հաղորդակցության մասնակիցներից անկախ, նրանց չվերաբերող իրողություն է»: (Farina 1992: 8)
2. Ռ. Յակոբսոնը, հերքելով որևէ ընդհանրություն, որն առկա է տեխնիկական տեղեկատվության փոխանցման և հաղորդակցության միջև, նշում է, որ հաղորդակցության ցանկացած գործընթաց ոչ թե արհեստական է, այլ վերլուծական, որտեղ կարևորվում է հաղորդակցության գործընթացում առկա յուրաքանչյուր բաղադրիչի հաղորդակցական գործառույթը: Մասնավորապես նա նշում է.
«Խոսողը (տեղեկատվություն ուղարկողը) տեղեկատվություն է ուղարկում հասցեատիրոջը, իսկ հաղորդվող սույն տեղեկատվությունը արդյունավետ լինելու համար պետք է ունենա հարատեքստ»:
3. Այս մոտեցման ջատագովը Ղիլիոնն է, որի համար հատկապես կարևոր է խոսակիցների հաղորդակցական համագործակցության դերը: Նա իրավամբ որոշակի փոխկապակցվածություն է տեսնում խոսակիցների արտաբերած սույնների միջև, և պատահական չէ, որ ըստ նրա հաղորդակցությունը խոսակիցների համատեղ ջանքերի արդյունք է (Ghilione 1986): Ռ. Ղիլիոնի այս մոտեցման անդրադարձը կարելի է գտնել նաև Ջ. Ռիվայի և Կ. Գալիմբերտիի աշխատանքում (Riva, Galimberti 1998:17):
4. Ատենախոսության երկրորդ գլխում անդրադարձ կարվի այն միջոցներին, որոնք գալիս են փոխարինելու վերոհիշյալ մետահաղորդակցական միջոցներին:
5. Ֆլեյմինգը, որպես ամերիկյան ուսանողական մշակույթի մաս, հիմնականում առանձնանում է անվայելուչ լեզվական միավորներով, որոնք

որոշ դեպքերում խոսքը ավելի կենդանի են դարձնում:
Գիտնականների մեկ այլ խմբի համոզմամբ՝ ֆլեյմինգո
ամերիկյան կրթական և մշակութային առանձնահատկությունների
արգասիք է (Mantovani 1996:100 տե՛ս նաև Weedman 1991):

6. Շատ դեպքերում համացանցային հաղորդակցությունը բնորոշվում է որպես սոցիալական հարատեքստից զուրկ հաղորդակցական տարատեսակ, և շեշտվում է այն փաստը, որ այստեղ բացակայում են առերես հաղորդակցությանը բնորոշ այսպես կոչված սոցիալական ցուցիչները: Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ վերջիններս ակնհայտ են դառնում հաղորդակցվողի կողմից կիրառված լեզվական միավորների շնորհիվ:

7. Ներկայացնելով սոցիալական հարատեքստի բնույթը՝ Ջ. Մանտովանին առաջա-

դրում է երեք մակարդակից բաղկացած կադապար. առաջինում գտնվում է սոցիալական հարատեքստի ընդհանուր գաղափարը, երկրորդում՝ առօրյա կյանքի սովորական իրադրությունները, իսկ երրորդում՝ տեղայնացված փոխազդեցությունը, որն իրականանում է համակարգչի միջոցով: Այսպիսով՝ էլեկտրոնային սարքավորումների կիրառումն առօրյա կյանքի անբաժանելի մաս է դարձել՝ աստիճանաբար դառնալով համատարած: Ֆիզիկական միջավայրի և սոցիալական հարատեքստի փոխազդեցության միջոցով, օգտատերերը ակտիվացնում են անհատ-միջավայր փոխարարությունները: Մարդ-նորարարական տեխնոլոգիա-ներ փոխազդեցությունը հանգեցնում է լայնածավալ առօրյա հաղորդակցության, ինչի շնորհիվ ի հայտ են գալիս մշակութային նոր իրողություններ:

8. Սակայն հարկ է նշել, որ տեխնոլոգիական զարգացման շնորհիվ սույն խնդիրը մասամբ լուծվել է, քանի որ այնպիսի համացանցային կայքեր, ինչպիսիք են viber-ը, whatsapp-ը, facebook-ը, հասցեագրողներին հնարավորություն են ընձեռում հասկանալու, թե որքանով է իրենց փոխանցած տեղեկատվությունը հասանելի դարձնել հասցեատիրոջը:

9. Համացանցում հմուտ հաղորդակցվողին դժվար չէ բացահայտել զրուցակցի ինքնությունը: Եթե հաղորդակցվողներից մեկի ինքնությունը կասկածի տեղիք է տալիս, ապա հաղորդակցական ակտը ձախողվում է, քանի որ խախտվում է անկեղծության նախապայմանը (Searle 1999):

10. Սա որակական վերլուծության մեթոդ է, որն ուսումնասիրում է բառիմաստի

փոփոխությունները, որոնք
հաղորդակցության
յուրահասկություններով:

պայմանավորված են
լեզվի կիրառման

11. Սույն կարծիքը կարելի է դիտել որպես ժամանակավրեպ, քանի որ նորարարական տեխնոլոգիաները, ինչպես նաև համացանցային հաղորդակցության նորմերի հստակ սահմանումը նպաստում են սոցիալական արդյունավետ փոխազդեցության: Սույն նորմերի թվին կարելի է դասել խոսքափոխի պահպանումը որոշ սոցիալական կայքերում:
- 12.Դրանք համացանցային սպասարկիչներ են (listserver), որոնք նորություններ կամ հոդվածներ են ուղարկում ցուցակում գրանցված օգտատերերին: Դա նաև համացանցային վերհաղորդային զրույցի (IRC Internet Relay Chat) համակարգ է, որը թույլ է տալիս բազմաթիվ օգտատերերի մասնակցել հաղորդակցությանը, հաղորդագրություններ ուղարկել և տեսնել մյուս օգտատիրոջ հաղորդագրությունը:
- 13.Բազմաօգտատեր բազան օգտատերերից պահանջում է համակարգչային ծրագրավորման հմտություններ, և հետևաբար սույն միջավայրի օգտատերերը գտնում են, որ այնտեղ առկա մշակութային իրողությունները շատ ավելի բարդ են, քան համացանցային վերհաղորդային զրույցում գոյություն ունեցող մշակութային տարրերը:
14. «Ալֆ» ամերիկյան մանրապատումը հեռարձակվել է 1986-1990 թվականներին,
 որտեղ գլխավոր հերոսը Ալֆ անունով այլմոլորակային է:
 Յատկանշական է, որ մանրապատման վերնագիրը հապավում է՝ ALF (Alien Life Form):

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒ ԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1 Բանավոր և գրավոր խոսքի տարբերությունը ու նների քննությունը ու նը համացանցային հաղորդակցություն և տեսանկյունից

Սույն ենթագլխի խնդրո առարկան գրավոր և բանավոր խոսքի հետ համացանցային դիսկուրսի ու նեցած ընդհանրությունը ու նների ու տարբերությունը ու նների քննությունը ու նն է: Համացանցային

դիսկուրսի

առանձնահատկությունները սահմանելիս

հարկ էնք համարում նախանդրադառնալ գրավոր և բանավոր խոսքը բնութագրող տեսական դրույթներին:

Հայտնի է, որ դեռևս վաղ ժամանակներում գրավոր խոսքը ավելի առաջնային է

համարվել՝ դիտվելով որպես լեզվի իրական առկայացում, մինչդեռ բանավոր խոսքը սովորաբար ընկալվել է որպես գրավոր խոսքի թերի դրսևորում: Բանավոր խոսքի յուրահատկությունների քննությունը սկիզբ է առել 19-րդ դարում, երբ մի շարք լեզվաբանների համար այն առանձնակի կարևորություն ձեռք բերեց, և ուսումնասիրության առարկա դարձավ մարդկային խոսքը, իսկ հնչյունաբանությունը տարբերակվեց որպես առանձին լեզվաբանական ճյուղ: Ավելի ուշ բանավոր խոսքը սկսեցին որակել որպես լեզվի իրական դրսևորման ձև: Սամոտեցում էր, որ մինչ այժմ էլ գերիշխում է լեզվաբանական տեսություններում:

Անդրադառնալով գրավոր խոսքի առանձնահատկություններին՝ որոշ լեզվաբաններ այն սահմանում են որպես տեսողական նշանների համապարփակ համակարգ, կամ առերես խոսակցական գործընթացից ծնված լեզվի տարատեսակ (Sapir 1921: 14-

15, Fillmore 1981) և կամ պարզապես արհեստածիս իրողություն (Aronoff
1985:28, Biber

1988:6, տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:21): Այլ կերպ՝ Լեզվաբանական
տեսություններ

քննությունը վկայում է այն մասին, որ գրավոր խոսքին այլևս առավել կարևորություն չի տրվում: Նման միտումը մասամբ պայմանավորված է այն փաստով, որ բանավոր խոսքը շատ ավելի շուտ է առաջացել, քան գրավորը, և մարդ-անհատը սովորաբար ավելի շուտ սկսում է խոսել, քան գրել: Ի լրումն՝ մարդ-անհատը, չտիրապետելով գրավոր հմտություններին, կարող է հաղորդակցվել՝ կիրառելով բանավոր խոսք: Փորձելով վեր հանել լեզվի այս տարատեսակների գործառույթն ու արժեքը՝ հարկ է չմոռանալ, որ բանավոր խոսքն ավելի լայնածավալ կիրառություն ունի: Նման մոտեցումը հիմնավորվում է մի քանի գործոններով: Այսպես՝ չի կարելի անտեսել այն փաստը, որ աշխարհում դեռևս գոյություն ունեն ցեղախմբեր, որոնց հաղորդակցության միակ միջոցը բանավոր խոսքն է, ինչպես նաև այն, որ ոչ բոլորին է վիճակված հաղորդակցվել բանավոր, և վերջիններիս հաղորդակցության միջոցը միայն գրավոր խոսքն է: Կարևոր է նաև այն փաստը, որ ամօրյա հաղորդակցության մեջ բանավոր խոսքը ավելի հաճախ է կիրառվում, քան գրավորը: Այս ամենով հանդերձ՝ անհնար է թերագնահատել գրավոր խոսքի դերը, որն օժտված է մի կարևոր յուրահատկությամբ՝ անփոփոխությամբ կամ հարատևությամբ: Չենց այս յուրահատկության շնորհիվ է, որ գրավոր արձանագրությունները չեն ենթարկվում ոչ մի փոփոխության, և հենց դրանք են, որ մեզ հնարավորություն են ընձեռում հասկանալու, վերագնահատելու այս կամ այն քաղաքակրթությանը վերաբերող գրավոր տեղեկատվությունը (Biber 1988, տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:21-22):

Սույն գործոնները հաշվի առնելով՝ Ու. Չեյֆը եզրակացնում է, որ թե՛ գրավոր և

թե՛ բանավոր խոսքն ունեն իրենց «հիմնավոր, ծանրակշիռ դերը», և ժամանակակից լեզվաբանների խնդիրն է գուգահեռներ անցկացնել լեզվի այս երկու տարատեսակների միջև (Chafe 1992:257): Գրավոր և բանավոր խոսքի տարբերությունների հետ կապված՝ լեզվաբաններն ուսումնասիրել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են բառային հագեցվածությունը (Halliday 1979:23-24), շարահյուսական կաղապարները (Halliday

1979; Beaman 1984), իրադրային յուրահատկությունները (Goody & Watt 1963:306;

Chafe 1982; Gumperz 1981): Այս ուսումնասիրությունները ներառում են բանավոր և գրավոր խոսքի էզզվաբանական համընդհանուր սահմանում: Դ. Բայբերը (Biber 1988:47), փորձելով ամփոփել սույն հարցին առնչվող էզզվաբանական ուսումնասիր-

րու թյուր ներքը, գալիս է այն եզրահանգման, որ գրավոր խոսքը կառուցվածքային առումով շատ ավելի բարդ ու խրթին է, քան բանավորը: Այդ կառուցվածքային բարդությունը դրսևորվում է տեքստում բարդ ստորադասական նախադասությունների և այնատարած կիրառմամբ (Chafe 1982; Tannen 1982a:37, 1985; Gumperz et al. 1984): Այսինքն՝ գրավոր խոսքը տեղեկատվությունն ավելի բացահայտորեն է փոխանցում, քանի որ տեքստում կիրառվում են ավարտուն միավորներ, որոնք տրամաբանորեն փոխկապակցված են (Olson 1977; Chafe 1986): Այս խնդիրների արձագանքը կարելի է գտնել նաև Չինգ Կանգ Լիույի *Between Speech and Writing* և Դուգլաս Բայբերի *Variation across Speech and Writing* աշխատությունների մեջ: Յարկ Է Նշել նաև, որ գրավոր խոսքը հարատեքստից ավելի անկախ, ինքնուրույն (decontextualized) միավոր է, քան բանավորը: Գամփերցի համոզմամբ՝ գրավոր խոսքի մեկնաբանությունը հիմնականում պայմանավորված է այնպիսի արտաբերական գործոններով, ինչպիսիք են հենքային գիտելիքը, առկա իրադրությունը (shared situation) (Gumperz et. al. 1984; Olson 1977, Biber 1988:47-50):

Իր բնույթով գրավոր խոսքն ավելի վերացական և անկախ է բանավորից, քանի

որ անհատի ներագրավվածությունը գրավոր խոսքում հարաբերականորեն մեծ է (Chafe 1982; Chafe & Danielewicz 1986), նոր տեղեկատվության առկայությունը գրավոր խոսքում ավելի շատ է, քան բանավորում (Stubbs 1980; Brown & Yule 1983), գրավոր դիսկուրսը, ի տարբերություն բանավորի, նախորոք պլանավորված է (Ochs 1979; Rubin 1980; Brown & Yule 1983; Gumperz et. al. 1984):

Իրականում բանավոր և գրավոր խոսքը նկարագրող վերոնշյալ ձևակերպումները կարելի է կասկածի տակ առնել, քանի որ նման սահմանումների հիմքում ընկած են մեկ կամ երկու մասնավոր իրադրություններ: Այլ կերպ՝ սույն ձևակերպումները չեն արտացոլում գրավոր և բանավոր խոսքի ժանրային բոլոր դրսևորումները, այսինքն՝ կարելի է վստահաբար ասել, որ իրադրության փոփոխությամբ ի հայտ կգան վերոնշյալ սահմանումներին հակասող դրույթներ: Այն որակումը, որ գրավոր խոսքը հարատեքստից դուրս, անկախ դիսկուրս է, կարելի է ճշմարտացի համարել միայն այն դեպքում, եթե, օրինակ, համեմատվի

սովորական գրույցը բացատրական գրվածքի հետ (expository prose),
սակայն այդ դրույթը կիրառելի չէ գրավոր և բանավոր

դիսկուրսի համընդհանուր նկարագրության համատեքստում (Tannen 1982a 1985, Biber

1988:48, տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:23):

Գրավոր և բանավոր խոսքը սահմանող նշված դրույթները բազմաթիվ տարա- կարծությունների պատճառ են դարձել լեզվաբանական տեսությունների: Որոշ լեզվաբաններ, քննելով բարդ և խրթին նախադասությունների կիրառման խնդիրը, նշում են, որ վերջիններս բանավոր խոսքում ավելի լայն կիրառություն ունեն, քան գրավոր դիսկուրսում (Poole & Field 1976; Halliday 2000): Զ. Բիմընը վերոնշյալ տեսական դրույթների միջև հակասությունները բացատրում է ուսումնասիրվող փաստական նյութի տարբերություններով՝ նշելով, որ անհնար է բացահայտել գրավոր և բանավոր խոսքի տարբերությունները, եթե անտեսվեն այնպիսի յուրահատկություններ, ինչպիսիք են տվյալ դիսկուրսը բնորոշող ռեգիստրը, վերջինիս նպատակը, պաշտոնականության աստիճանը և այլն (Beaman 1984: 51):

Ուսումնասիրելով նույն խնդիրը՝ Ջ. Բլեքընշիփը այն համոզմունքն է հայտնում,

որ գրավոր և բանավոր դիսկուրսում գրեթե նույնատիպ նախադասություններ են կիրառվում, և նրա այդ մոտեցումն ըստ էության հերքում է Ու.Չեյֆի և Դ. Թենընի առաջադրած դրույթները (ըստ՝ Chafe 1982; Tannen 1982a): Սույն հարցը լուսաբանելիս Դ. Բայբերը կարևորում է նախադասության սահմանումը և պնդում, որ նախադասությունը նկարագրող տարբեր տեսական մոտեցումները չեն կարող հուսալի հիմք դառնալ համեմատական համընդհանուր ուսումնասիրությունների համար (Biber

1988: 49, տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:23):

Ֆ. Ակինագոյի և Ջ. Գամփերցի որակմամբ՝ վերը նշված ուսումնասիրությունները թերի են և անկարող բացահայտելու գրավոր և բանավոր դիսկուրսի միջև առկա տարբերությունները, քանի որ որպես այլընտրանք՝ նրանց ուշադրության կենտրոնում գրավոր և բանավոր խոսքի թեմատիկ կապակցվածությունն է, ինչով էլ փորձում են վեր հանել դիսկուրսի վերոնշյալ տարատեսակների

յուրահատկությունները (Akinaso 1982; Gumperz et. al 1984): Դ. Բայբերը նույնիսկ նոր մեթոդ է առաջադրում սույն խնդրի ուսումնասիրության համար՝ նախկինում կիրառված քանակական մեթոդները համադրելով որակականի հետ: Այս նոր մեթոդը քննության է առնում գրավոր և բանավոր խոսքի տարբեր ոճական դրսևորումներ՝ վեր հանելով դրանց բնորոշ գծերը:

Ըստ Դ. Բայբերի ուսումնասիրության՝ ոչ պաշտոնական գրույցները լիովին արտացոլում են բանավոր դիսկուրսի առանձնահատկություններ, իսկ պաշտոնական փաստաթղթերը, գիտական տեքստերը ներառում են գրավոր դիսկուրսին բնորոշ յուրահատկություններ (Biber 1988:51-52 տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:24): Եվ իրոք, բանավոր և գրավոր դիսկուրսները փոխկապակցված են տարբեր իրադրային, գործառույթային առումներով, և որևէ մեկ բացարձակ յուրահատկությամբ անհնար է հստակ տարբերակել գրավոր խոսքը բանավորից (Biber 1988:24 տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:24):

Գրավոր և բանավոր դիսկուրսները սահմանող լեզվական միջոցները տարբերակելու նպատակով՝ Ու. Չեյֆը փորձում է հիմնվել այն դրույթի վրա, որ գրավոր տեքստ ստեղծելիս հեղինակին բնորոշ է անջատ, փոխատեղված գիտակցություն (displaced consciousness): Սահմանվում է տեքստաստեղծման երկու միջոց: Առաջին դեպքում առկա է անմիջական կապ լեզվի և գիտակցության միջև, մինչդեռ երկրորդ դեպքում վերջիններս միմյանցից անջատ են գործում: Ըստ Ու. Չեյֆի՝ գրավոր դիսկուրսը ստեղծվում է փոխատեղված գիտակցության շնորհիվ, կամ այլ կերպ ասած՝ հեղինակները անձամբ չեն վերապրում այն զգացմունքներն ու երևույթները, որոնց մասին գրում են: Ու. Չեյֆը, հիմնվելով էմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքների վրա, գալիս է այն համոզման, որ գրավոր և բանավոր դիսկուրս ստեղծելիս անհատները ստիպված են լինում հաղթահարել տարբեր արգելքներ: Այսպես օրինակ՝ որոշակի հնչերանգային միավորների կիրառությունը բանավոր խոսքում սովորաբար միտված է արտահայտելու միայն մեկ նոր հասկացություն, մինչդեռ կետադրական միավորները գրավոր դիսկուրսում կարող են միաժամանակ արտացոլել մի քանի նոր գաղափար (Chafe 1986: 25): Ակնհայտ է, որ գիտակցական մեխանիզմները բանավոր խոսքում և գրավոր դիսկուրսում տարբեր կերպ են գործում: Այդ մեխանիզմները բանավոր հաղորդակցության մեջ բնութագրվում են ժամանակային սահմանափակվածությամբ: Դրանք թե՛ խոսողից և թե՛ ունկնդրից լիակատար ներգրավվածություն (ուշադրություն) են պահանջում, մինչդեռ գրավոր դիսկուրսը զերծ է նման սահմանափակումներից:

Ա. Յիլդըյարդը և Դ. Օլսոնը, քննելով ուշադրությանը, որպես գիտակցական մեխանիզմների դրսևորում, նշում են, որ ունկնդիրը շատ ավելի մեծ ուշադրության է դարձնում հարատեքստի թեմային՝ այսպիսով կառուցելով ասույթի կապակցված մեկ-նաբանությանը: Ընթերցողի ուշադրության կենտրոնում նախադասությանն են վերհիշելով արդեն նշված մանրամասներ տեքստում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ ընթերցողը ավելի ճշգրիտ մտահանգումներ է կատարում (Hildyard & Olson 1982, տե՛ս նաև Ching-Kang Liu 1996:27):

Գիտնականների մեծամասնությունը, ուսումնասիրելով խոսող-անհատի մտավոր գործունեությանը առնչվող խնդիրները, գլխավորապես կենտրոնանում է կա՛մ գրավոր, կա՛մ բանավոր դիսկուրսի յուրահատկությանների լուսաբանման հարցի վրա ընդհանրապես¹: Սակայն կարելի է նկատել, որ ժամանակակից համացանցային իրականությունը էլ ավելի խնդրահարույց է դարձնում սույն հարցի լուսաբանումը, մի տեսակ տարակուսելի իրավիճակ ստեղծում, քանի որ համացանցային դիսկուրսը իր բնույթով բազմաթիվ ընդհանրությունների ունի թե՛ գրավոր և թե՛ բանավոր դիսկուրսի տարատեսակների հետ: Քննելով գրավոր և բանավոր դիսկուրսի փոխկապակցվածության խնդիրը՝ Լ. Ուրբանովան իրավացիորեն նկատում է, որ դիսկուրսի սույն տարատեսակները դժվար է հստակ տարբերակել, քանի որ այնտեղ բացակայում են համարժեք նորմերը (Urbanova 2003): Այնուամենայնիվ, համացանցային դիսկուրսի խոսակցականությունը և ոչ պաշտոնական ոճը տանում են գրավոր և բանավոր խոսքի հարաբերակցության վերագնահատման:

Վերը արդեն անդրադարձ արվել է այն հարցին, թե խոսելու և գրելու գործընթացները ինքնին խիստ տարբեր են: Այն հանգամանքը, որ, ի տարբերություն գրավոր դիսկուրսի, բանավոր խոսքը նախորոք պլանավորված ու մնայուն չէ, այլ միանգամայն ինքնաբուխ է և հագեցած իրադրային առոգաբանական միավորների առավել լայն ու տարբերակված կիրառություններով, թույլ է տալիս ենթադրել, որ գրավոր և բանավոր դիսկուրսները հնարավոր չեն նույնացնել: Ավելին՝ Ու. Չեյֆի առաջադրած չափորոշիչներով կարելի է արձանագրել հետևյալ տարբերությունները (Chafe &

Danielewicz 1986).

- դիսկուրսի գրավոր և բանավոր տարատեսակներում խոսքի տեմայի տարբեր դրսևորումներ են առկա,
- բանավոր խոսքն ավելի ինքնաբուխ է, մինչդեռ գրավոր դիսկուրսը նախորոք ավանավորված է գզվական համակարգ է,
- բանավոր խոսքին բնորոշ է առոգաբանական միավորների համատարած կիրառում,
- բանավոր դիսկուրսը, ի տարբերություն գրավորի, ավելի իրադրային է:

Դ. Քրիսթըլը, գրավոր և բանավոր դիսկուրսի յուրահատկությունները քննելով, նույնպես գալիս է այն համոզման, որ բանավոր խոսքն իր բնույթով դինամիկ է, ինքնաբուխ և որոշակի ժամանակային սահմանափակումներ է ենթադրում: Ինչ վերաբերում է գրավոր դիսկուրսին, ապա վերջինիս համար հատկանշական է անփոփոխությունը և հարատևությունը (Crystal 2004:26):

Տեմայի դրսևորումների քննությունը դիսկուրսի սույն տարատեսակներում

Վաստում է, որ տեխնիկական գործոններով պայմանավորված՝ գրավոր դիսկուրսը ենթադրում է շատավելի դանդաղ ընթացք, քան բանավորը: Ընթերցանության գործընթացը, սակայն, կարող է իրագործվել ավելի արագ, քան ունկնդրումը: Ու. Չեյֆը գրելու և կարդալու արագության հիմքում տեսնում է խոսքի տեմպը, որն էլ պայմանավորում է վերջիններիս սահմանազատումը (Chafe 1994: 42-43): Անդրադառնալով գրավոր և բանավոր դիսկուրսների տարբերակման խնդրին՝ Դ. Քրիսթըլը նաև այն համոզմունքն է արտահայտում, որ գրավոր դիսկուրսում, որը գլխավորապես տեղեկատվական բնույթ ունի, միշտ էլ առկա են ինչ-ինչ սահմանափակումներ, մինչդեռ բանավոր խոսքը առավելապես իրականացնում է սոցիալական գործառույթ: Խոսքաստեղծման, տեքստաստեղծման և ընկալման գործընթացում հապաղման գործոնը կարևորելիս Դ. Քրիսթըլը համոզված է, որ բանավոր խոսքը հիմնականում գերծ է այդ գործոնի ազդեցությունն ից (Crystal 2004):

Հայտնի է, որ առերես հաղորդակցությունն իրականացնելիս գրուցակիցները շատ քիչ ժամանակ ունեն իրենց խոսքը նախորոք

ալ անավորելու, թեկուզ հենց այն պատճառով, որ խոսակցության թեման կարող է շատ արագ փոխվել: Գրավոր դիսկուրսին, սակայն, բնորոշ է նման ինքնաբուխ դրսևորում, քանի որ այնտեղ առկա է

խմբագրման գործունը (Crystal 2004): Բանն այն է, որ բանավոր խոսքն առանձնանում է ընդհատումներով, զուգադիպումներով և խոսողների կողմից իրենց խոսքում կատարած սխալներն ուղղելու ցանկությամբ, մինչդեռ գրավոր դիսկուրսում սխալները հիմնականում անտեսանելի են, քանի որ հեղինակը դրանք խմբագրելու և ուղղելու հնարավորություն ունի (Crystal 2004:27):

Վերը արդեն նշեցինք, որ բանավոր խոսքի կարևոր յուրահատկություններից է առոգաբանական միավորների լայն կիրառությունը: Դրանց քննությանը դեռ կանդիդատական ասույն ատենախոսության հաջորդ ենթագլխում, սակայն, թերևս, այստեղ արժե նշել, որ գրավոր դիսկուրսն այս առումով բավականին աղքատիկ է, քանի որ դրա տարատեսակներում դեռևս չկա այնպիսի մշակված համակարգ, որը գոնե փոքր-ինչ ունակ լինի ներկայացնելու բանավոր խոսքի առոգաբանական միավորները: Յետաքրքրական է, որ Դ. Քրիսթըլի համոզմամբ՝ առոգանությունը բնորոշ է միայն բանավոր խոսքին, իսկ գրավոր դիսկուրսում կարևոր դերակատարությունը վերապահված է կետադրությանը, մեծատառերին և այսօրինակ այլ միջոցներին (Crystal 2004:28): Թերևս այդ է պատճառը, որ բանավոր խոսքը բնույթով ավելի բնական է, քան գրավորը և փաստորեն հաղորդակցության հիմնական միջոց է:

Դ. Քրիսթըլը բանավոր խոսքի յուրահատկ
դրսևորումներից է համարում

լեզվական կրճատ միավորների համատարած կիրառությունը, անպարկեշտ կամ սլենգային արտահայտությունները, գրավոր դիսկուրսին առավել ասես բնութագրական է բարդ շարահյուսական կաղապարների առկայությունը (Crystal 2004:27):

Ինչ վերաբերում է բանավոր դիսկուրսի իրադրային լինելուն, հարկ է նշել, որ գրուցակիցների ներկայությունը պարտադիր գործոն է, որը պայմանավորում է հաղորդակցության գործընթացի հաջող իրականացում: Մինչդեռ գրավոր դիսկուրսը նման սահմանափակումներ չի պարտադրում, քանի որ նրա նմուշները ենթակա են տեղափոխության, իսկ հեղինակը և այն կարդացողը որպես կանոն չեն գտնվում նույն ժամանակային և տարածական միջավայրում: Խոսքի իրադրայնությունը պայմանավորվում է գրուցակիցների համատեղ ներկայությամբ և փոխազդեցությամբ,

և քանի որ գրավոր խոսքի ստեղծման ու ընկալման միջավայրը ոչ մի ազդեցություն չունի լեզվի վրա, այն կարող է համարվել ոչ իրադրային (Chafe 1994):

Վերոնշյալ խնդիրը լուսաբանելիս Դ. Քրիսթըլը հիմնականում կարևորում է

արտալեզվական ցուցիչները, որոնք առկա են բանավոր հաղորդակցության մեջ: Այսպես՝ բանավոր հաղորդակցության լեզուն այդքան էլ պարզ չէ, քանի որ հաղորդակցվողները հիմնականում կիրառում են հաղորդակցական իրադրությանը բնորոշ հարատեքստային ցուցիչներ: Գրավոր դիսկուրսում տեսողական հարատեքստի բացակայությունը հեղինակին ստիպում է չկիրառել ցուցային արտահայտություններ ու բառեր, քանի որ վերջիններս կարող են թյուրիմացությունների պատճառ դառնալ (Crystal 2004):

Համացանցային դիսկուրսի յուրահատկությունների լուսաբանումը պարտադրում է քննել, թե ինչպես են ստեղծվում բանավոր և գրավոր դիսկուրսի տարատեսակները: Խոսքաստեղծման և տեքստաստեղծման նպատակն ու միջոցները որոշակի ազդեցություն ունեն բառային միավորների ընտրության վրա: Լինելով ինքնաբերական դինամիկ՝ բանավոր խոսքը սահմանափակում է խոսողների բառային միավորների ընտրությունը, այդ պատճառով էլ առերես հաղորդակցությունը բնորոշվում է սահմանափակ բառապաշարով (Yates 2001):

Եվ այսպես՝ վերը շարադրվածից հանգում ենք այն համոզման, որ

համացանցային հաղորդակցության իրականացման ձևաչափի որոշարկումը մեծապես կախված է գրավոր կամ բանավոր դիսկուրսին բնորոշ գծերի գերակայությունից:

2.2 Հոնգանշ աննեթի և համացանցային գրաճանաչումը և լեզվաբանական փոխակապակցվածությունը վիրտուալ հաղորդակցության մեջ

Ինչպես արդեն նշել ենք, համաժամանակյա հաղորդակցության ամենամեծ տարածումը ունեցող տիրույթներից են չատ սենյակները (Baym 1993): Չնայած վերջին տարիներին վերջիններս համալրվել են տեսախցիկներով, օգտատերերի մեծամասնությունը նախընտրում է տեքստային միջոցներով արտահայտված ասույթներ, որոնք համացանցի միջոցով ուղարկվում են պորտալներ: Այս պորտալներին բնորոշ են կառուցվածքային որոշակի առանձնահատկություններ, որոնք ուղղորդում են ասույթների մեկնաբանման գործընթացը (Yus 2011:151):

Համաժամանակյա հաղորդակցության մոդելի յուրահատկությունների բնույթը - թյան տեսանկյունից էպես կարևոր է այն հանգամանքը, որ չատ սենյակները ոչ միայն օգտատերերի միջև փոխադարձ կապ հաստատող ոլորտ են, այլև այն առումով նպաստում են վիրտուալ համայնքի ձևավորմանը (Vidal Jimenez 2000): Համայնքային պատկանելության գործոնը կարող է որոշիչ լինել արդյունավետ հաղորդակցության համար², ընդ որում ասույթի մեկնաբանման առաջին փուլը պայմանավորված է վերջինիս պարունակած տրամաբանական իմաստի ընկալմամբ (Wilson & Sperber 1995): Ասույթի բովանդակությունը կարող է մեկնաբանվել արտակա կերպով, կամ հենքային գիտելիքի ակտիվացմամբ՝ ներկայ մտահանգման ճանապարհով: Մարդկային միտքը այս կամ այն տեղեկատվությունը արտակա կամ ներկայ մեկնաբանելիս առաջնորդվում է տեղի ունեցող կարգախոսով. խոսողը պետք է գուշակի, թե արդյոք զրուցակիցը կկարողանա կիրառել հենքային անհրաժեշտ գիտելիք, որի միջոցով էլ կկատարի իր մեկնաբանությունները: (Wilson 1999, 2000): Համացանցային հաղորդակցության համատեքստում ճիշտ մեկնաբանություններ կատարելու համար զրուցակից պահանջվում է դիսկուրսիվ միջարք ռազմավարությունների իմացություն, որոնք սույն տեքստային հաղորդակցական տարատեսակի անբաժանելի մասն են: Այդպիսի

դիսկոլրսիվ մարտավարություններից են հապավումների, հուզանշանների կիրառումը, տեքստը բանավոր խոսքի յուրահատկություններով օժտելը և այլն: Բանն այն է, որ եթե օգտատերերի կիրառած

լեզվական կադապարները միմյանցից կտրուկ տարբերվում են, ապա հաղորդակցությունը կարող է ընդհատվել: Անհատների ակնկալիքները և նրանց հենքային գիտելիքները ոչ միայն ուղղորդում են հաղորդակցության ընթացքը, այլև մեծ ազդեցություն ունեն գրուցակցի որպես անհատորակելու գործում (Fuller 1993: 301): Այլ կերպ ասած՝ օգտատերերը պետք է հմուտ հաղորդակցվողներ լինեն համացանցային միջավայրում, որպեսզի կարողանան խոսքային տեղին մարտավարություն, դիսկուրսիվ նորմեր կիրառել, որոնք իրենց հերթին խիստ տարբերվում են բանավոր խոսքում առկա հաղորդակցական ռազմավարություններից: Այսինքն՝ օգտատերերը պետք է տիրապետեն համացանցային գրագիտության կանոններին³: Թերևս սույն գործոնով է պայմանավորված այն փաստը, որ չատ սենյակների օգտատերերը որոշակի չափորոշիչներ են սահմանում, որոնց հիման վրա էլ խոսքային մարտավարությունները կիրառվում և մեկնաբանվում են: Նշանները, տառային հապավումները համացանցային գրաճանաչության բաղկացուցիչներից են, քանի որ համաժամանակյա փաստական նյութի քննության շնորհիվ ակնհայտ է դառնում, որ օգտատերերը հիմնականում կիրառում են սույն միջոցները որպես համացանցային դիսկուրսիվ մարտավարություն, որն էլ նպաստում է համացանցային հաղորդակցության արդյունավետ կայացմանը:

Ակնհայտ է, որ համաժամանակյա դիսկուրսի սույն նմուշը ճիշտ ընկալելու

համար պետք է տիրապետել համացանցային գրագիտությանը.

MykeHey

ninaHi

MykeHow are you?

ninaFine and

you?? **Myke**Me too

MykeWhere are you from?

ninaUK

MykeIndai

MykeIndia*

Բերված զրույցում հաղորդակցվողները փորձում են ծանոթանալ միմյանց հետ՝ կիրառելով ողջունի ծիսականացված արտահայտություններ: Չրույցը եզրափակող հատվածում կա աստղանշան, ինչը ունի մի քանի իմաստ՝ և կարող է թյուրիմացություն պատճառ դառնալ համացանցային գրաճանաչությունը չտիրապետող զրուցակցի համար: Այստեղ Մայքը, լեզվական միավորի վերջում աստղանիշ կիրառելով, ուղղում է իր իսկ թույլ տված ուղղագրական սխալը: Եվ եթե Նինան նորելուկ լիներ համացանցային տիրույթում, ապանրահամար սույն նշանի կիրառումը անհասկանալի կլիներ:

Համացանցային գրաճանաչություն
կարևորությունն ակնհայտ է նաև
համացանցային համաժամանակյա դիսկուրսից քաղված հաջորդ
օրինակում: Այսպես՝

<euro-> hi

<lulu> hi

<euro-> how are u

<euro-> **asl**/pls

Այս զրույցը եզրափակող հատվածը պարունակում է **asl** տառային հապավումը, ինչը համացանցային նոր ձևավորվող լեզվում նշանակում է **age, sex, location**: Այսինքն՝ սույն հապավման կիրառմամբ *euro*-ն տեղեկատվություն է հայցում *lulu* անունով զրուցակցի տարիքի, սեռի և բնակության վայրի մասին:

Հաջորդ երկխոսության մասնակիցներից Sebas*G –ն կրկին կիրառում է աստղանիշ, որպեսզի չվտանգի իր հեղինակությունը և մյուս զրուցակիցների վրալավ տպավորություն թողնի.

Sebas*G : all on all , life can be such a bitch01/07/2017 9:34:am

Sebas*G : in all*01/07/2017 9:34:am

iceheart : true01/07/2017 9:34:am

maniac*G : true

Այստեղ խոսքը **on** կապի մասին է, մասնավորապես՝ նա ուղղում է կատարում

ասույթում՝ իր կողմից սխալ կիրառված **on** կապը փոխարինելով **in**-ով: Սխալ ն ուղղելով՝ Sebas*G –ն փորձում է իցույց դնել

անգլերենի իր իմացումը անմակարդակը:

Համացանցային հաղորդակցական ակտերը ճիշտ մեկնաբանելու համար գրուցակիցներից պահանջվում է ընկալել ստորագման բովանդակությունը, այսինքն՝ ստորագյալի արտահայտած գործողությունը վերագրել ենթակային՝ խոսողին, քանի որ ցանկացած հաղորդակցական իրադրությունում խոսողի արտաբերած ասույթը կարող է պարունակել որոշակի իլլոկուտիվ իմաստներ, ինչպես օրինակ՝ խորհուրդ, ախոս-սանք, հրաման արտահայտող տարրեր: Ընդ որում՝ վերոնշյալ վերաբերմունքը կարող է տարբեր կերպ արտահայտվել: Օրինակ՝ ձևաբանական մակարդակում այն կարող է դրսևորվել բայի եղանակային ձևով, բառային մակարդակում՝ վերաբերմունք արտահայտող լեզվական միջոցներով, ինչպիսիք են *“I suppose that”*, *“I wish that”*, ինչպես նաև *“unfortunately”*, *“probably”* և այլ եղանակավորող մակբայներով (modal words):

Կարելի է նկատել, որ ոչ լեզվական միջոցները նույնպես կարող են խոսողի արտաբերած ասույթը ճիշտ ընկալելու գործիք դառնալ: Այսպես օրինակ՝ ժպիտ արտահայտող հուզանշանի միտումնավոր կիրառումը խոսողի հեզնանքի դրսևորում է: Առերես հաղորդակցության ժամանակ գրուցակիցները ջանք չեն ինչպես ընկալելու և հասկանալու խոսակցի վերաբերմունքը խոսողի կողմից արտաբերվող ասույթի նկատմամբ և բացահայտելու նրա հաղորդակցական իրական նպատակները: Սույն գործընթացում խոսակիցները ակտիվացնում են իրենց ճանաչողական մեխանիզմները, որպեսզի ճիշտ մտահանգում կատարեն: Հատկանշական է, որ շատ հաճախ մտավոր գործունեությունը տեղի է ունենում մեխանիկորեն, այսինքն՝ խոսող անհատը ինքն էլ չի գիտակցում, որ նման գործունեություն է ծավալում (Sperber 1995):

Նման տրամաբանական մտահանգումը, այսինքն՝ երբ խոսակիցը փորձում է տեղին մեկնաբանել խոսողի փոխանցած տեղեկատվությունը, համատարած է, քանի որ այն կենսաբանորեն առկա է մարդ եակի հոգեբանության մեջ: Սույն մտահանգման մեխանիզմները, որոնց օգնությամբ արտաբերված ասույթի վերաբերմունքային գործառույթն է որոշարկվում, լայն կիրառություն են գտնում չատ սենյակներում: Ներքոբերյալ օրինակը պարունակում է վերաբերմունքային տարրեր, որոնք նպաստում են հաղորդակցական նպատակի ճիշտ ընկալմանը: Այսպես՝

idk how fat girls have soooo much confidence and put the pic online as pretty girls but they aren't lmfao it

Այս դեպքում ևս հաղորդակցական իրադրության մասնակիցներից որոշակի հմտություն է պահանջվում, որպեսզի կարողանան ընկալել ասույթի հաղորդակցական նպատակը, հակառակ դեպքում հաղորդակցությունը կձախողվի, քանի որ խոսակիցը չի կարողանա պատշաճ կերպով արձագանքել: **Idk (I don't know)** տառային հապավումը վերաբերմունքային գործառույթ է իրացնում, ընդ որում գրուցակիցներից մեկն իր բացասական վերաբերմունքն է հայտնում կեղծ նկարների տակ հանդես եկող իգական սեռի ներկայացուցիչների նկատմամբ, քանի որ վերջիններս մոլորության մեջ են գցում մյուս օգտատերերին: Բացասական վերաբերմունքը արտահայտված է **idk** ժխտական ասույթով, որի պերլոկուտիվ իմաստը քննադատությունն արտահայտելն է, այլ ոչ թե չիմացությունը:

Դիսկուրսի հետևյալ հատվածում նման վերաբերմունքային գործառույթ ունի նաև մեկ այլ ասույթ.

<Ariana> we re all seeing attention, otherwise we wouldnt be here lol

<ChatMaven001> **wow** ariana

<TravelGirl> Ariana **sure** but some take it to extremes :)

<Ariana> seeking

Չամառեքստային ցուցիչների վերլուծությամբ կարելի է պարզել, որ գրուցակից-ները քննարկում են անհատների՝ ուշադրություն գրավելու ցանկությունը: Արիանան պնդում է (*we re all seeing attention, otherwise we wouldnt be here lol*), որ նման ձգտումը հատուկ է բոլորին, իսկ տվյալ գրույցը ուշադրություն գրավելու միտում ունի: Արիանայի հետ համակարծիք է *ChatMaven001* օգտատերը, որը, ի նշան համաձայնության, կիրառում է հարալեզվական **wow** միավորը: Չրույցին է միանում *TravelGirl* օգտատերը, որը, կիրառելով **sure** վերաբերական լեզվական միավորը, նույնպես համաձայնում է նրա հետ, սակայն նշում, որ ինքն ամենևին էլ համամիտ չէ այն օգտատերերի հետ, որոնք ծայրահեղ միջոցների են դիմում ուշադրություն գրավելու համար:

Լեզվական նյութի մեր վերլուծությունը
թույլ է տալիս եզրակացնելու,

գրուցակիցները համացանցային գրույցների ընթացքում կարող են
կիրառել և եզվական

տարբեր միավորներ, որոնք կուղղորդեն դիմացինին՝ ճիշտ մտահանգում կատարելու և ընկալելու ասույթում իրացվող հաղորդակցական նպատակը:

Յամացանցով հաղորդակցվողները, կիրառելով
տեքստային միջոցներ,

հետապնդում են այնպիսի նպատակներ, որոնք գոյություն ունեն առերես հաղորդակցության մեջ, քանզի վիրտուալ միջավայրում հաղորդակցվողները նույնպես ձգտում են գրավել զրուցակցի ուշադրությունը, փորձում են բացահայտել վերջինիս հաղորդակցական նպատակը: Սակայն եթե տեքստային միջոցների կիրառման մարտավարությունը մյուս հաղորդակցվողի համար ընկալելի չէ, ապա, փոխանցված տեղեկատվությունը սովորաբար սխալ է մեկնաբանվում և հաղորդակցությունը կարող է ձախողվել: Նման իրավիճակից խուսափելու համար չատսենյակի օգտատերերը ջանում են տիրապետել համաժամանակյա հաղորդակցությանը նպաստող որոշակի նորմերի (Savas 2011: 308): Երբեմն օգտատերը, օգտագործելով մեծ քանակությամբ հապավումներ կամ հուզանշաններ, ակամայից ցույց է տալիս, որ ինքը վիրտուալ աշխարհում հմուտ հաղորդակցվող է, ընդ որում՝ կրճատ և հագեցած տեղեկատվությունը համացանցային համաժամանակյա խոսքային մարտավարությունների տիրապետման վկայություն է (Yus 2011: 155): Ստորև բերվող օրինակը պարունակում է համաժամանակյա հաղորդակցության զարգացման դրսևորումներ.

ty dear

Սույն **ty** (thank you) տառային հապավումը քաղված է համաժամանակյա հաղորդակցական իրադրությունից և այժմ փոխարինում է նախկինում ավելի լայն գործածություն ունեցող **tnx** կամ **10x** կրճատագրություններին, որոնք ավելի լայն կիրառություն ունեին 21-րդ դարի առաջին տասնամյակում: Յնարավոր է, որ համացանցային վերջին հաղորդակցական մարտավարություններին ոչ իրազեկ օգտատերը չկարողանա ընկալել սույն հապավումների իմաստը, ինչն էլ իր հերթին կխոչընդոտի հաջող հաղորդակցության իրականացումը:

Յամաժամանակյա դիսկուրսի վերջին միտումները տեսանելի են նաև համաժամանակյա ասույթներում, որտեղ օգտատերը տառային

հապավումների միջոցով իր տեսակետն է հայտնում քննարկվող
թեմայի շուրջ:

Ուսումնասիրությունը վկայում է, որ, ի տարբերություն առերես հաղորդակ-ցության, համացանցային հաղորդակցության մեջ ընդհանուր առմամբ զգալի սահմանափակումներ կան իրականացվող խոսողական ակտը հասցեատիրոջը լիարժեք հասանելի դարձնելու առումով: Խնդիրն այստեղ այն է, որ համացանցը տեղեկատվություն փոխանցողին զրկում է ձայնային և տեսողական միջոցներ կիրառելու հնարավորությունից, մի բան, որ առերես հաղորդակցության շրջանակներում մեծապես օգնում է արագ կողմնորոշվելու հաղորդակցական ակտի ճիշտ ընկալման և մեկնաբանման հարցում: Սակայն հետաքրքրական է, որ նշված հանգամանքը դժգոհության պատճառ չի դառնում օգտատերերի համար, որոնք իրենց մտքերը արտահայտելու և վիրտուալ աշխարհում ազատ ու անկաշկանդ շփվելու համար հաճախ օգտվում են ծածկանուններից: Մասնավորապես չատ սենյակներում էլեկտրոնային զրույցներ իրականացնելիս, այսինքն՝ համաժամանկյա մոդելով հաղորդակցվելիս նրանց համար հաճախ նախապատվելի են անանունությունն ու տեսախցիկից խլասափելը, քան ի որ, ըստ Բ. Քալդուելի և Լ. Թահանի (Taha & Caldwell 1993, տե՛ս նաև Becker & Stamp 2005; Peter et al. 2007), օգտատերերի համար դժվար է կառավարել և դասակարգել լեզվական ու ոչ լեզվական տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ տեքստային հաղորդակցությունը չատ սենյակների յուրահատուկ դրսևորումներից է, որը բնութագրելու համար հարկ է կիրառել դիսկուրսի վերլուծության մեթոդներ՝ հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ դիսկուրսը պարունակում է բանավոր խոսքի առանձնահատկություններ: Օգտատերերի համար հետաքրքրական է հետևել, թե ինչպես են զրուցակիցները, անտեսելով եղած սահմանափակումները, տեքստային միջոցներով ինքնաարտահայտվում:

Հայտնի է, որ վիրտուալ հաղորդակցական տարատեսակները մեկ նպատակ են

հետապնդում, այն է՝ տեղեկատվություն փոխանցելով հանդերձ՝ ազդել զրուցակցի ճանաչողական գիտելիքների համակարգի վրա (Suler 1997c): Չատ սենյակները կարելի է համարել մի տարանցիկ միջավայր, որտեղ օգտատերերը հակված են միմյանց հետ

հաղորդակցվել՝ կիրառելով ոչ պաշտոնական, առօրյա խոսք: Չատ
սենյակների փոխգործուն միջավայրն օգտատերերին
հնարավորություն է ընձեռում ներկայացնելու ոչ միայն իրենց
մտքերն ու գգացմունքները, այլև կատարելու ճիշտ

մեկնաբանություններ և համաձայնություն գալու հաղորդակցությունը նույն թեմատիկ ուղղությամբ տանելու վերաբերյալ (Bellamy & Hanewitz 1999):

Ակնհայտ է, որ եթե առերես հաղորդակցության ընթացքում գրուցակիցների

ֆիզիկական ներկայությունը կարող է հանգեցնել խոսընթացի պարբերական ընդհատումների, չատ սենյակներում իրականացվող համաժամանակյա հաղորդակցությունն օգտատերերից պահանջում է պահպանել ուղարկվող հաղորդագրությունների հաջորդականությունը (Giese 1998): Կարևոր է նաև այն հանգամանքը, որ չատ սենյակներում հաղորդակցվելիս տարածական և ժամանակային սահմանափակումները կրճատում են հաղորդակցական այլ ընտրանքների հնարավորությունը և խոսընթացը դարձնում արհեստական: Համաժամանակյա հաղորդակցության գործընթացն էլ ավելի խնդրահարույց է դառնում, երբ երրորդ հաղորդակցվողն է ներգրավվում գրույցի մեջ: Այնուամենայնիվ, վիրտուալ միջավայրում, որտեղ կատարվում է միջոցներով իրականացվող հաղորդակցություն, տեղի ունեցող վերջին զարգացումները օգտատերերի մոտ ձևավորում են համաժամանակյա նույն ժամանակի զգացում: Օրինակ՝ որոշ համացանցային ծրագրեր օգտատերերին թույլ են տալիս բառ առ բառ կարդալ, թե ինչ է գրում գրուցակիցը, և ճիշտ մտահանգումներ կատարել⁵:

Ինչպես արդեն նշել ենք, տարածամանակյա հաղորդակցությունը, ըստ էության, ժամանակային, տարածական և հարատեքստային առումներով շատ մեկուսացված է: Նկատելի է գրեթե միաժամանակյա հաղորդակցություն, որը տեղի է ունենում բազմանդամ չատ սենյակներում, երբ օգտատերերը պատասխանում են հաղորդագրությանը՝ դրանք ստանալուն պես, և համացանցային հաղորդակցման երրորդ տեսակը, որը բնորոշվում է համաժամանակյա նույն ժամանակի բարձր աստիճանով (սույն տարատեսակը իրականանում է UNIX ծրագրի միջոցով), երբ հաղորդագրությանն անմիջապես հետևում է գրուցակցի պատասխանը, իսկ հաղորդակցական/խոսքային ակտերը շատ հաճախ համընթաց են (Anderson et al. 2010): Այսպես օրինակ.

He doesn't limit to above 16. He was creeping on a 14 yo two days

ago

Sherm 7 (07:49)

Wow!!! Did we cam together Kaityln??

(07:49)

Համաժամանակյա դիսկուրսից վերցված օրինակում հաղորդակցական խոսքահերթը համընկնում է այստեղ գրուցակիցը արձագանքում է նախորդ ասույթին, մինչդեռ թեյթլին անունով օգտատերը նոր հաղորդակցական ակտ է իրականացնում: Առաջին հայացքից թվում է, թե հաղորդակցական ակտերի համընկնումները կարող են թյուրիմացությունների պատճառ դառնալ, բայց համատեքստը (co-text) օգնում է գրուցակիցներին ճիշտ մտահանգում կատարել:

Համացանցային հաղորդակցության մերձակցությունը բանավոր խոսքին նկատելի է նաև այն առումով, որ երկու դեպքում էլ կիրառվում են նույն խոսքային մարտավարությունները, որոնք հնարավորություն են տալիս գրուցակցին ճիշտ մտահանգումներ կատարելու, թեև դրանց կիրառման մոդելները որոշակիորեն տարբերվում են. չատսենյակի օգտատերերը նախընտրում են կիրառել որոշակի լեզվական միջոցներ, որոնք լիովին կարտահայտեն իրենց հաղորդակցական նպատակը՝ դրդելով խոսակցին ճիշտ մեկնաբանել փոխանցվող տեղեկատվությունը: Չրուցակիցներն այս դեպքում պետք է ծանոթ լինեն համացանցային հաղորդակցությանը բնորոշ օրինա-չափունքներին: Այլ կերպ՝ նրանք պետք է կարողանան ընկալել հապավումներին, հուզանշաններին ներհատուկ իմաստները և ի վիճակի լինեն հարթելու ցանկացած ծրագրային խնդիր, որը կարող է առաջանալ հաղորդակցության ընթացքում: Կարևոր է նաև այն, որ տեղեկատվությունը օգտատերերի ճանաչողական համակարգի մաս կազմի (Yus 2011: 152), այսինքն՝ չատսենյակների օգտատերերը պետք է ունենան համապատասխան համացանցային գրագիտություն:

Հուզանշանները, որպես համացանցային դիսկուրսի կարևորագույն բաղադրիչներ, կարող են բազմաթիվ հաղորդակցական գործառնություններ ունենալ: Դրանք, ըստ էության, փոխարինում են հարալեզվական ու ոչ լեզվական միջոցներին և, խոսքային իրադրությունամբ պայմանավորված, կարող են արտահայտել տարբեր իմաստային նրբերագներ: Լայն առումով՝ հուզանշանները շարժական հուզապատկերների հետ մեկտեղ բացահայտում են խոսակիցների հոգեվիճակը:

Համացանցային լեզվաբանությունամբ զբաղվող մասնագետները գտնում են, որ չատսենյակներից հղվող հաղորդագրությունները

բանավոր խոսքի գրավոր դրսևորում են, իսկ մենք կարծում ենք,
որ հաղորդակցության սույն տարատեսակը գրավոր

տեքստի և բանավոր խոսքի միաձուլում է: Այստեղ հաղորդակցվողները միտումնավոր խեղաթյուրում են գրավոր տեքստը, քանի որ հաղորդակցվողի գերնպատակն է տեղեկատվության գրավոր փոխանցումը առավելագույնս մոտեցնել բանավոր խոսքին⁶: Եվ սա չի կարելի պատահականություն համարել, քանի որ օգտատերերի համար չատը գրուցելու այլընտրանքային միջոց է և հենց լեզվական որը այս կամ այն միջոցներին նախապատվություն տալն է որոշում, թե չափի ընթացքում ինչպես են հաղորդակցվողները խոսում: Չատում արվող տեքստի միտումնավոր խեղաթյուրումը նշան է այն բանի, որ օգտատերերը ցանկանում են շրջանցել գրավոր խոսքում սահմանված գրական կադապրները, նորմերը, կանոնները (Kataoka 2003):

Ստեղնաշարի	հարստությունը	շատ
հաճախ	հաղորդակցվողներին	հնարավորությունն է

ընձեռում գրավոր տեքստին լրացուցիչ իմաստ հաղորդել (Reid 1991, Ruedenberg et al. 1994), իսկ ընտրված միջոցների ամբողջությունը որակվում է որպես հուզատեքստ (emotext), որը ներառում է ուղղագրական կանոնների մտացածին խեղաթյուրումներ, մեծատառերի նպատակային կիրառություններ, հուզանշաններ և այլն:

Այն, որ լեզվական և ոչ լեզվական հաղորդակցությունը միաժամանակ չեն

դրսևորվում, և հաղորդակցվողները ստիպված են այն հերթականությամբ ստեղնաշարել, կարելի է համարել չատ սենյակներում տեքստաստեղծման առանձնահատկություններից: Բայց և այնպես, այդ միջոցները տեքստում փոխազդում են: Կարելի է նկատել, որ ոչ լեզվական միջոցների կիրառությունը լրջորեն ազդում է ասույթի՝ լեզվական միջոցներով արտահայտված իմաստի վրա (օրինակ՝ անհատը կակազելով ասում է՝ ես լարված եմ), սակայն դրանց առկայությունը տեքստում կարող է նաև հակասել լեզվական միջոցներով արտահայտված տեղեկատվությանը (օրինակ՝ երբ անհատը կակազելով ասում է՝ ես նյարդայնացած չեմ, ապա այս դեպքում ոչ լեզվական միջոցները հերքում են արտաբերված ասույթի իսկությունը): Ոչ լեզվական միջոցների միտումնավոր կիրառումը կարող է շեշտադրել ասույթի արտահայտած իմաստը,

հերքել այն և այլն (օրինակ, երբ անհատը աչքով է անում հեզնական ասույթ արտաբերելիս):

Այսպիսով, նկատելի է, որ չատսենյակներում իրականացվող տեքստային հաղորդակցության ընթացքում ցանկացած միտումնավոր և նպատակադրված կիրառվող ոչ լեզվական տարր, որն արտահայտում է ոչ լեզվական տեղեկատվություն, այս-

ինքն՝ օգտատերերին համակած զգացումները, հիմնականում ի հայտ եկավ իս հոլզա- նշանների տեսքով: Ուրախությու- ն կամ տխրությու- ն արտահայտող հոլզանշաններն ամենալայն կիրառությու- նն ունեն համացանցային դիսկուրսում: Հետաքրքրական է, որ հոլզանշաններն ի սկզբանե գործածվել են չատ սենյակներում, այնուհետև սոցիալական այլ կայքերի օգտատերեր սկսել են դրանք կիրառել համացանցային հաղորդակցության այլ միջավայրերում (Walther & D' Addario 2004 Quinion 1996, Witmer & Katzman 1997):

Նշենք, որ մեր հետազոտության մեջ հոլզանշան եզրույթը կիրառվում է որպես

համացանցային emoticon միավորի համարժեք: Այս բառի ծագումնաբանության հիմ- քում ընկած է հոլզ և պատկեր (նշան) բառերի համադրությու- նը, և այն հաճախ կիրառ- վում է համացանցային դիսկուրսի համաժամանակյա տարատեսակում՝ հիմնականում ժպիտի տեսքով:

Հոլզանշանները համացանցային կիրառության մեջ հայտնվել են 1982-ին

Կառնեգի Մեյնս համալսարանի գիտնական Սքոթ Ֆալմանի շնորհիվ: Նա առաջինն էր, որ իր հաղորդագրության մեջ կիրառեց շրջված :-) ժպիտը և խոժոռ :-(: դեմքը: Հատկապես նորարարական տեխնոլոգիաների անդադար զարգացման շնորհիվ է, որ ի հայտ եկան անսահման թվով հոլզանշաններ՝ որպես անձի հոլզական ներաշխարհի վառ դրսևորումներ: Հոլզանշանների լայն ու ընդգրկուն կիրառությու- նը և դրանց կարևորագույն գործառույթը զգալիորեն խթանեցին նաև վերջիններիս մուտքը բառարաններ (տե՛ս, օրինակ, Godin 1993):

Ինչպես արդեն նշել ենք, հոլզանշանները իրենց իմաստային յուրահատկությու- ներով և ձևով բազմազան են: Խոսելով դրանց բազմազանության մասին՝ պետք է նշել որ վերջիններս հիմնականում ստեղծվում են տառաթվային նիշերի (ASCII) օգնությամբ, մինչդեռ այսպես կոչված հոլզանշան- նորաբանությու- նները պատկերային փոփոխու- թյու- նների են ենթարկվել, ինչպես օրինակ՝ ☺: Հոլզանշանների աճող քանակը ընդգրկում է իրական աշխարհից վերցված տարբեր առարկաներ՝ սրտի, բաժակի կամ շենքի նման, սակայն գերակշռող մասը դիմախաղի

արտահայտչամիջոցներն են:

Միջմշակութային հաղորդակցական ոճերի
տարբերություններ կան անգամ

հուզանշանների տարատեսակներում, ինչպես օրինակ՝ շրջված
ժպտացող նշանը, որը

ծագել է արևմտյան մշակույթում և հիմնականում գործածվում է այդ մշակույթը ներկայացնող անհատների խոսքում: Մինչ դեռ արևելյան հուզանշանների տարատեսակներից kamoji-ն, արտահայտում է արևելյան դիմագծերի առանձնահատկություններ՝ ^_^: Ժպտացող և խոժոռ դեմքի հուզանշաններն այս դիմային հուզանշանի տարբերակներն են, որոնք գործածվում են թե՛ համաժամանակյա և թե՛ տարածաժամանակյա համացանցային դիսկուրսի տարատեսակներում: Այսօր հուզանշաններն տարածում են գտել նաև համացանցային դիսկուրսից դուրս՝ ձեռագիր գրառումներում, գովազդներում, հրավիրատոմսերում և այլն:

Հուզանշաններն ի սկզբանե դիմախաղ արտահայտող նշաններ են եղել, որոնց նպատակն էր հաղորդել ոչ լեզվական տեղեկատվություն՝ մի բան, որ առերես հաղորդակցության ընթացքում կատարվում է դիմախաղային և շարժաբանական ցուցիչների միջոցով:

Հուզանշանները տեսողական բնույթի ցուցիչներ են, և դրանց հիմքում ընկած են

տիպաբանական նշաններ: Այս նշանները շրջելիս արտահայտում են դիմախաղ, զգացմունք և այլն (Rezabek, Cochenour 1998, Walther 2004): Ա. Ուոլֆը, մեջբերելով հաբերների բառարանը, նշում է, որ հուզանշանները որպես տառաթվային նիշեր, գործածվում են անհատին համակած հույզերն արտահայտելու նպատակով (Wolf 2000): Դրամասին է վկայում այդ բառի հույզարմատը:


Հուզանշանները, որոնք ըստ էության տարբեր նշանների համակցությունն են, կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ ամբողջ հաղորդագրության բովանդակության վրա: Յետևաբար, հարց է ծագում, թե ինչ հուզական արժեք կարող են ունենալ այս նշանները, երբ դրանք համադրվում են լեզվական հաղորդագրությունների հետ: Ինչպես Ս. Յերինգը, այնպես էլ Ռ. Փրովայ-նը էական են համարում հուզանշանների հուզական գործառնությունը: Նրանք վստահ են, որ հուզանշանները գրեթե երբեք չեն խոչընդոտում հաղորդագրության փոխանցումը, ինչպես, օրինակ, ծիծաղը չի ընդհատում զրույցը բանավոր խոսքում (Herring 2010): Ընդ որում՝ այս երևույթը բացատրվում է

Լեզվական միավորների տեղին կիրառությունը, քանի որ միայն
անհատի հոլգական դաշտի արտահայտումը բավարար չէ
համապատասխան գործառնություն իրացնելու համար:


Ուսումնասիրությունների նոր ու հետաքրքիր դաշտ է բացում հոլզանշանների քննության գեոդերային մոտեցումը: Այս բնագավառում իշխող կարծիքի համաձայն՝ կանայք ավելի են հակված արտահայտելու իրենց հոլյզերը, քան տղամարդիկ⁸: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս տարբերությունը չնչին է, և որ ամենակարևորն է, հաղորդագրության հոլզական ներիմաստը միայն հոլզանշանների կիրառումից չի կախված: Այստեղ կարևոր նշանակություն ունի համացանցային հաղորդակցության ինչպես է գովական, այնպես էլ արտալեզվական հենքը:

Հոլզանշանների արտահայտած իմաստի և վերջիններիս կատարած գործառույթի

լուսաբանմամբ կարելի է տարբերակել հոլզանշանների երկու տիպ՝ մեկ և ավելի հոլյզեր արտահայտող և առհասարակ հոլյզ չարտահայտող: Օրինակ՝ Ս. Յերինգի

համոզմամբ՝ էզոլն ցույց տվող դեմքի նշանը (:-P ) ամենևին էլ մեկ հոլյզ արտահայտելու միջոց չէ: Նա գտնում է, որ սույն նշանների համադրությունը պարունակում է տարբեր իմաստներ ու իմաստային նրբերանգներ՝ հեզանք,

սիրախաղ, սադրանք, որոնք, անշուշտ, գլխավորապես վերաբերում են անհատի հոլզական վիճակին, բայց և այնպես չեն կարող ամոռջովին

որպես հոլյզ որակվել: Վերլուծելով այս հոլզանշանը ;) , Ս. Յերինգը այն կարծիքն է հայտնում, որ պայմանադրականորեն այն, իհարկե, ցույց է տալիս, որ գրոհակիցը կատակում է,

սակայն չի բացառվում, որ սույն հոլզանշանը կիրառելիս հաղորդակցվողը կարող է նաև առաջնորդվել միանգամայն այլ հոլզական կամ արտալեզվական խթանով (Herring 2010:252): Իհարկե, մարդիկ կարող են կատակել թե՛ ուրախության և թե՛ տխրության պահին, այնպես որ երջանկության զգացում ցույց տալը ժպիտարտահայտող հոլզանշանի միակ գործառույթը չի կարող լինել:

Չի կարելի չհամաձայնել, որ հեզանքը, դիմացինին միտումնավոր զայրացնելը պարունակում են որոշակի հոլյզեր,

սակայն համացանցային հաղորդակցության մեջ դրանց հուզանշանները կարող են նաև այլ գործառույթներ ունենալ, ասենք, օրինակ՝ կիրառվել հաղորդակցության ընթացքն անխափան պահելու նպատակով կամ այլ կերպ՝ խոսքի ընթացքում առաջացած բացը և ցնող ավելորդ բառի կամ հնչյունի գործառույթ կատարել :

Հուզանշանները կարող են դիտարկվել նաև որպես քաղաքավարության ցուցիչներ, ուստի դրանց սոցիալ-ճանաչողական յուրահատկությունները չափորոշիչների բաղադրիչներից են: Ինչպես արդեն նշել ենք, հուզանշանների կիրառումը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված այնպիսի արտաբերական գործոններով, ինչպիսիք են անհատի սեռը, տարիքը և հասարակական դիրքը, ռասայական պատկանելությունը և այլն: Մեր քննությունը ցույց է տալիս, որ զրուցակիցների սեռը որոշակի դեր, այնուամենայնիվ, խաղում է հուզանշանների ընտրության հարցում: Եթե արական սեռի զրուցակիցը հաղորդակցվում է իգական սեռի ներկայացուցչի հետ, նա հակված է ավելի շատ հուզանշաններ կիրառել, ինչպես համացանցային դիսկուրսի հետևյալ հատվածում.

Օր.Արական: Վասայ



Տվյալ նմուշում զրուցակիցները խոսում են որոշակի թեմայի շուրջ: Արական սեռի

օգտատերը, կիրառելով ծիծաղ արտահայտող հուզանշաններ, վերաբերմունք է արտահայտում քննարկող հարցի շուրջ: Վերը արդեն նշել ենք, որ ըստ որոշ լեզվաբանների՝ արական սեռի ներկայացուցիչները հակված են ավելի հուզանշաններ օգտագործել, որպեսզի խոսքն առավել հեգնական դառնա, սակայն դժվար է նկատել, որ բերված օրինակում զրուցակիցը ի ցույց է դնում իր դրական հույզերը, ինչի ապացույցն էլ հուզանշանների և հարաբերական միջոցների բազմակի կիրառությունն է: Հատվածում կանառ ձայնավորի կրկնություն:

Ստորև բերվող օրինակը նույնպես, հուզանշանի բազմակի կիրառություննից բացի, պարունակում նաև ձայնավորի կրկնություն, որը միտված է լրացնելու համացանցային դիսկուրսում հարաբերական միջոցների բացակայության ամբողջացած բացը.

Արական: Չէէէէէ

Հանձնել ահանրային դատին


Սույն օրինակում ձայնավորի կրկնությունը ասույթն ավելի տպավորիչ դարձնելու նպատակադրություն կա: Մասնավորապես





Կիրառվում է տեքստին՝ բանավոր խոսքին, բնորոշ հնչերանգային
նրբերանգներ հաղորդելու համար, որը համացանցային

դիսկուրսում նաև շեշտի գործառույթ է կատարում: Մեկ այլ օրինակում կարելի է նկատել, որ օգտատիրոջ խոսքում ձայնավորի կրկնությունը այս պարագայում փոխարինում է երկարացման կետադրական նշանին: Հոլզանշանները ցույց են տալիս, որ օգտատերը, արտահայտելով իր անհամբերությունը, սպասում է խոսակցի արձագանքին.

Նասասասասան  

Ակնհայտ է, որ հաղորդագրությունն ուղարկողը, իր հույզերն արտահայտելով, ցանկանում է որքանով հնարավոր է իր խոսքը մոտեցնել առերես հաղորդակցությանը: Մեկ այլ օրինակում նկատում ենք, որ արական սեռի օգտատիրոջ խոսքում նկատելի է հոլզանշանների բազմակի կիրառությունն՝ հեգնանք և ուրախությունն արտահայտելու համար.

Իգական սեռի օգտատեր. Հնեղվես նյարդերդեմ ուտում 

Արական սեռի օգտատեր. Նյարդերդ     ոնց որ Հ1 ի թարգմանած կինոնայեմ էն որ հայ հոյանք են տալիս թարգմանում են- գրողը տանիիիիի

Այս դեպքում ասույթի լեզվական միավորների բովանդակությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ հոլզանշանները հեգնական նրբերանգներ են արտահայտում, քանի որ գրողացակցը, մատնանշելով հաղորդակցվողի գրական հայերենը (**Նյարդերդ**), ծաղրում է հաղորդակցվողի խոսելաճը: Ըստ օգտատիրոջ՝ սույն հաղորդակցական միջավայրում գրական հայերենի կիրառումը տեղին է, քանի որ իրենք մտերիմ ընկերներ են, հետևաբար, վերջիններս կարող են ավելի խոսակցական բառապաշարով շփվել: Այսպիսով՝ լեզվական միավորների մեկնաբանության շնորհիվ հասկանալի է դառնում, որ կիրառված հոլզանշանները հեգնական են:

Հոլզանշանների՝ որպես հոլզական պատկերների ընկալման դժվարությունները ցույց են տալիս, որ դրանք համացանցային փոխներազդման մեջ կիրառվում են որպես լեզվից անկախ գործոններ: Ըստ այդմ՝ ոչ լեզվական միջոցների մեկնաբանությունը կարող է ազդել լեզվական միջոցների ընկալման վրա: Վերլուծելով հեգնանք

արտահայտող հոլգանշանը՝ ակամա հարց ես տալիս. արդյոք դա
լեզվական միջոց չէ՞: Քննությունը ցույց է տալիս, որ
վստահության կամ ճշվածության դրսևորումներ

արտահայտող հեզնական հուզանշանները նպաստում են ընկալել ու հաղորդագրու - թյան լեզվական բովանդակությունը, ուստի հուզանշանների այսօրինակ կիրառությունը կետադրական նշանների հետդառնում է տեքստի մասնաթանձրացնում հեզնանքը:

Կան նաև այնպիսի դեպքեր, երբ համացանցային դիսկուրսի ընկալման համար առաջնային կարևորություն է ձեռք բերում հաղորդակցական իրադրություն հաշվառումը: Դիտարկենք հետևյալ հատվածը.

ucant handle dat much power ithnk 🤔

Օգտատերը being alone has a power that very few people can handle
աֆորիզմին

հետևող մեկնաբանության մեջ գործածել է ծիծաղ արտահայտող հուզանշանը, որն այս պարագայում հեզնանքի նշան է: Այս նմուշում կարելի է նկատել, որ օգտատերը դիտավորյալ խախտել է կետադրական և ուղղագրական կանոնները, որպեսզի խոսքն ավելի կենդանի և ազդեցիկ դարձնի: Իսկ հուզանշանի կիրառությունը ցույց է տալիս նրա՝ տվյալ աֆորիզմին տված գնահատականը:

Տարածամանակյ ադիսկուրսից քաղված ներքոհիշյալ
մեկնաբանությունը բացասական հույզերի
դրսևորում է.

Ինչու են տարեցտարի ուսման վարձերը բարձրացնում, ու
բարձրագույն

կրթությունը բազմաթիվ խելացի պատանիների

համար մնում է երազանք: 😞😞😞😞

Չարալեզվական միջոցների՝ հուզանշանների սաստկացնող գործառնությունն ակնհայտ է համացանցային դիսկուրսի տարածամանակյա հաղորդակցության տարատեսակից վերցված տվյալ օրինակում: Խոսքային ակտի իլլոկուտիվ իմաստը (բողոք, ախոսանք) ավելի համոզիչ է դառնում հուզանշանների շնորհիվ, որոնց բազմակի կիրառմամբ ավելի ընկալելի է դառնում նրա հաղորդակցական նպատակը. խոսողը ցանկանում է արտահայտել իրեն համակած բացասական հույզերը և քննարկման առարկա դարձնել սոցիալական խնդիրը: Պետք է նշել, որ հուզանշանները, ի տարբերություն այլ դեպքերի, որտեղ դրանք կարող են ունենալ

հեջավորման գործառույթ, այս ասույթում կատարում են միայն հարալեզվական միջոցների գործառույթ:

Ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցային դիսկուրսում հույզերը կարող են արտահայտվել տարբեր ձևերով, ինչպես օրինակ հետևյալ երկու ասույթներում.

If you don't love kids, please don't become a teacher 🙄🙄🙄

Противно смотреть!!!! 🙄🙄🙄

Երկու ասույթներն էլ քննադատական ներիմաստ են պարունակում, սակայն հուզանշանները, որոնք միտված են սաստկացնելու ասույթի բովանդակությունը, տարբեր են: Սաթերևս պայմանավորված է հաղորդակցվողի մշակութային պատկանելությամբ, քանի որ առաջին դեպքում խոսողը արևմտյան մշակույթի կրող է, իսկ երկրորդ դեպքում՝ արևելյան: Այնուամենայնիվ, նույն հույզն արտահայտվելու նպատակով տարբեր հուզանշանների գործածումը պայմանավորված չէ միայն մշակութային գործոնով, որի ապացույցը կարող է լինել հետևյալ ասույթը.

Տեսնես մի օր կկշտանա՞ն է տանխիղճները մեզ թալ անելուց 🙄🙄🙄🙄🙄

Հաղորդակցվողը, մեկնաբանություն կատարելով կոռուպցիային վերաբերող հոդվածի

ներքո, իր քննադատական ասույթում կիրառում է զայրույթ արտահայտող հուզանշան-ների այլ տեսակ, որոնք ավելի ակնհայտ են դարձնում ասույթի իլլոկուտիվ իմաստը: Ուշագրավ է այն փաստը, որ ասույթի հեղինակը արևելյան մշակույթի կրող է, սակայն նա նախապատվությունը տալիս է նույն հուզանշանին, ինչ անգլալեզու հաղորդակցվողը: Ուստի, այս դեպքում մենք թերևս կարող ենք բացառել մշակութային գործոնի ազդեցությունը հուզանշանների գործածման համատեքստում: Հատկանշական է, որ այստեղ նկատվի է բանավոր խոսքի տարր, քանի որ հաղորդակցվողը «այդ» ցուցակն դերանվան փոխարեն կիրառել է «էտ» խոսակցական տարբերակը:

Անդրադառնալով դրական հույզերին՝ տեսնում ենք, որ հուզանշաններն այս դեպքում ևս փոխարինում են հարալեզվական միջոցներին՝ սաստկացնելով խոսքային ակտի իլլոկուտիվ կամ պերլոկուտիվ իմաստները: Հետևյալ նմուշներում առկա է ուրախություն արտահայտող հուզանշանների բազմակի կիրառություն.

Ու խոխմեն են ա, որ ես լոռեցու բարբառով եմ սա

Կարդում 😊 😊 😊

Հա ազիզ, Էնա թեևց Էլ գրածա

😊 😊 😊

Յաղորդակցվողները մեկնաբանություն են կատարում զվարճալի բովանդակությամբ հոդվածի ներքո, որը ներկայացված է Լոռու մարզին բնորոշ բարբառով, որը համացանցային դիսկուրսում բուռն հրճվանքի պատճառ է դառնում:

Ամփոփելով կարելի է հանգել այն կարծիքին, որ հուզանշանները միայն հույզարտահայտելու միջոց չեն, դրանց իմաստի մեկնաբանությունը հաճախ կախված է լեզվական և արտալեզվական գործոնների ազդեցությունից և ընթերցողի՝ դրանք վերլուծելու կարողությունից: Այլ կերպ՝ համացանցով հաղորդակցվողները պետք է կարողանան ներդաշնակություն պահպանել հուզանշանների և լեզվական միավորների միջև: Կարևոր է նաև այն, որ թեև հուզանշանները չեն կարող պարունակել բառային կամ ձևաչարահյուսական նոր բաղադրիչ, դրանք շատ հաճախ տեղ-տեղ բառերին ամբողջությամբ փոխարինելու կարողություն ունեն:

Փաստական նյութի վերլուծությունը վկայում է, որ չատ դիսկուրսը գրավոր տեքստի և բանավոր խոսքի խառնուրդ է: Յետևաբար՝ չատ դիսկուրսն ունի բանավոր խոսքին բնորոշ յուրահատկություններ: Այստեղ գերիշխում են խոսակցական արտահայտություններ, ընդ որում՝ խոսակցության թեման կարող է լինել խիստ անձնական, որի քննարկման ընթացքում հաղորդակցվողները ստիպված են կիրառել նորմից դուրս ուղղագրական կաղապարներ, ինչպես նաև իրենց հուզական վիճակը ներկայացնելու համար հաճախ դիմել հուզանշանների օգնությանը: Յաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ համացանցային հաղորդակցությունը կարելի է որակել որպես բանավոր խոսքի դրսևորում, թեև այն պարունակում է նաև գրավոր խոսքին բնորոշ գծեր: Իսկ գրավոր խոսք կառուցելու գործընթացը կառավարում է հասցեագրողը, և գրուցակիցը չի կարող միջամտել: Յամացանցային դիսկուրսի նմուշներում կարելի է հանդիպել բարդ շարահյուսական կաղապարների, և այստեղ, իհարկե, ակնհայտ է օգտատիրոջ՝ տեքստը խմբագրելու հնարավորությունը մինչ այն գրուցակցին փոխանցելը: Յենց այս՝ չատ դիսկուրսին բնորոշ բանավոր և գրավոր խոսքի յուրահատկությունները այն դարձնում են նոր ձևավորված դիսկուրսի տարատեսակ, որը լեզվի միանգամայն

որակապես նոր տեսակ է: Պատահական չէ հետևաբար, որ տարբեր հետազոտողներ տարբեր որակումներ են տալիս չատ դիսկուրսին¹⁰: Մասնավորապես հետաքրքրական է Լ. Ֆրակա դե Բառեռայի բազմախոսությունը

(pluridialogue) եզրույթը (Fracca de Barrera 2007 տե՛ս նաև Yus 2011:175), սակայն այս բնորոշման պարագայում չի հստակեցվում բազմախոսական չատդիսկուրսի՝ տեղեկատվության փոխանցողի դերը: Հայտնի է իհարկե, որ գրույցի սկզբում տեղեկատվության փոխանցողը մեկն է, բայց խոսքնթացի ծավալմանը զուգընթաց հաղորդակցության մեջ կարող են ներգրավվել նաև այլ օգտատերեր: Հասկանալի է, թե այս դեպքում ինչ որակում պետք է տալ չատդիսկուրսի մենախոսական տարբերակին, երբ խոսողը մեկն է, իսկ ուկնդիրը՝ մեկ կամ ավելի, և, որ կարևորն է, վերջինս հիմնականում չի արձագանքում հաղորդվող տեղեկատվությանը, որը կարող է փոխանցվել ինչպես առերես, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցներով՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով, գրքերով, դասախոսությաններով, և այլն: Երկխոսության դեպքում հաղորդակցվողները երկուսն են, որոնք հաղորդակցվում են առերես՝ նամակների կամ հեռախոսի միջոցով:

Ինչպես արդեն նշել ենք, գոյություն ունեն տարբեր մարտավարություններ,

որոնց կիրառմամբ համացանցով հաղորդակցվողները ցանկանում են ինչ-որ կերպ փոխհատուցել ձայնային և տեսողական ցուցիչների բացակայությունը չատսենյակ-ներում: Այս կերպ փոփոխության է ենթարկվում ստեղնաշարված տեքստը, և հետևաբար, նախնական վարկածի համաձայն՝ համացանցով հաղորդակցվողները կկարողանան ճիշտ մտահանգում կատարել և տեղին մեկնաբանել օգտատիրոջ փոխանցած տեղեկատվությունը: Տեքստային միջոցներով իրականացվող հաղորդակցության մեջ օգտատերերը հաղորդակցվողներից ակնկալում են ասույթին հարող հարատեքստի համապատասխան ընկալում և տեղին մեկնաբանություն: Ծառ հաճախ հաղորդակցվողները նախընտրում են չկիրառել տեքստային չեզոք միջոցներ. այս պարագայում մյուս օգտատերերը պետք է ջանք չինայեն և ակտիվացնեն իրենց ճանաչողական ու մտավոր կարողությունները՝ փոխանցված տեղեկատվությունն ընկալելու համար:

Տեքստային միջոցների աղավաղման դրսևորումներից են ուղղագրական սխալները: Չատդիսկուրսը պարտադրում է ոչ պաշտոնական, ազատ հաղորդակցական մթնոլորտ:

Յաղորդակցվողները, ստիպված լինելով որքան հնարավոր է արագ ստեղծաշարել տեղեկատվությունը, շատ հաճախ ուղղագրական սխալներ են

թույլ տալիս՝ երբեմն ակամայից, սակայն չատ հաճախ՝ միտումնավոր՝ ելնելով վերջիններս համացանցային էզզվական հնարներ համարելու դրույթից (Mayas 2002b): Այլ կերպ՝ չատ սենյակների օգտատերերը նման սխալները ընդունում են որպես տեքստային հաղորդակցությանը ներհատուկ դրսևորումներ¹¹:

Մեր ուսումնասիրությանը թույլ է տալիս վեր հանել տեքստային այսօրինակ

միջոցների տարաբնույթ դրսևորումներ: Հատկապես էլայն տարածում ունեն բառ-միավորների արտասանական դժվարություններ ներկայացնող ուղղագրական սխալները, ինչպես, օրինակ, imail (e-mail [!:'meil]), ded room (dead room [dedru:m]), առօրյա-խոսակցական ոճին բնորոշ գրառումները (what d'yu wanna do? (What do you want to do), բարբառային տարրեր պարունակող գրառումները, որոնցով օգտատերերին հաջողվում է տեքստային միջոցներով փոխանցել բարբառի հնչյունական առանձնահատկությունները, ինչպես օրինակ «Կսեթ թեման ակտուալ չէ, ի՞նչնչդ ակտուալ չէ,»,

«Ախմախ է ագոդ վախտերս: Ճիշտն ասած նկարը նոր ուղարկեցին, ես էրիվ մոռացել էի, ձախինը ես եմ: 😊» , «ԷԷԷԷ հ սիտս հովցավ տո» և այլն), ձայնի առոգանական նրբերանգները փոխանցող ուղղագրական դրսևորումները, որոնք արտահայտվում են կետադրական նշաններով, մեծատառերի գրությունամբ, տառակրկնությունամբ: Էլայն տարածում ունի նաև բառերի փոխարինումը հիմնված համանմանության սկզբունքով ever1(everyone), c u, (see you) l8er (later): Քիչ չեն նաև հապավումներով և համառոտագրություններով փոխարինման դեպքերը, որոնք չատ սենյակներում իրականացվող էլեկտրոնային դիսկուրսը ըստ էության վերածում են նշանային յուրօրինակ հաղորդակցության, որն էլ հաղթահարելի չէ համացանցային հաղորդակցական պայմանադրություններին անտեղյակ օգտատերերի համար: Այսպես՝ HIFW (How I felt when), TL (too long), DR (didn't read):

Քննությանը ցույց է տալիս, որ համառոտագրությունների համատարած գործածումը համացանցային հաղորդակցության մեջ էլ ավելի խնդրահարույց է դարձնում տեքստային միջոցների ընկալումը, քանի որ դրանք բանավոր և գրավոր խոսքի խառնուրդ են, հետևաբար սույն համառոտագրությունների ապակողովորումը

պարտադրում է համացանցային գրագիտություն: Համացանցային հաղորդակցության վերջին միտումների վրա հիմնվելով՝ վստահաբար կարելի է ասել, որ

կիրառությունը համացանցային դիսկուրսում ընդհանրապես և չատ
սենյակներում իրականացվող դիսկուրսում մասնավորապես
բացահայտում է բանավոր խոսքի տարաբնույթ

Նմուշների առկայություն, որը միտված է արտահայտելու հասցեագրողի վերաբերմունքը փոխանցվող տեղեկատվության առնչությամբ, հատկապես եթե փոխանցվող հաղորդագրության բովանդակությունը ներակա է դրսևորվում: Այս միջոցների կիրառությունը օգնում է հասցեատիրոջը համապատասխանաբար ընկալել հասցեագրողի արտահայտած վերաբերմունքն ու հոլյզերը, ընդ որում համացանցային տեքստի տարաբնույթ ձևափոխումները մեծապես պայմանավորված են արտահայտվող վերաբերմունքի կամ հոլյզի ուժգնությամբ և կարող են որոշակի դեր խաղալ վերաբերմունքի սաստկացման հարցում:

2.3 ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ, ՂՐՈՒՅ ԳՆԵՐԻ և ՄԵԿՆԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅ ԻՆ ՅՈՒՐԱԽԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ տնի է, որ ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ իրականացնում են տարաբնույթ հաղորդակցական նպատակներ՝ որոշակի տեղեկատվության փոխանցում, գործարար կապերի հաստատում, այս կամ այն առարկայի կամ երևույթի գովազդում, պարզապես զրուցելու ցանկության բավարարում և այլն¹²: Հայ տնի է, որ ըստ հաղորդակցության դինամիկայի՝ ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ կարող են բնութագրվել տարածամասկյա հաղորդակցության հատկանիշներով կամ դրսևորվել համաժամանակյա հաղորդակցության յուրահատկություններով: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, առաջին դեպքում ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ գերակայում են գրավոր խոսքին բնորոշ ձևեր, երկրորդ դեպքում բնութագրական են բանավոր խոսքի յուրահատկությունները:

Ատենախոսության այս բաժնում նպատակ ունենք քննել ու և վեր հանել ու ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ զարգացման միտումները, ինչպես նաև պարզաբանել ու, թե ինչ ազդեցություն ունեն տարածական և ժամանակային գործոնները խոսքի տվյալ տարատեսակի ժանրային յուրահատկությունների ձևավորման հարցում:

Երբ անցյալ դարի 80-ականների սկզբին ԷԼ ԵԿՏՐՈՆԱՅ ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ մուտք

գործեցին համացանցային հաղորդակցության ոլորտ, դրանք բնութագրվում էին պաշտոնական նամակների հատկանիշներով: Ստեղծված համակարգչային ծրագրերի միջոցով ձևավորվել էր այնպիսի միջավայր, որը հնարավորություն էր տալիս ուղարկել ու ոճաժանրային առումով խիստ կանոնակարգված նամակներ, որոնք ունեին այդ տեսակին հատուկ չափորոշիչներ, ինչպիսիք են հասցեագրողը, հասցեատերը և թեման, որը ներկայացվում է հստակ ձևավորված տեքստով: Ուրիշ խոսքով՝ ժանրի

գարգացման սկզբնական փուլում խոսք անգամ չի ներկայացրել կարող ոչ պաշտոնական հաղորդակցության և խոսակցական տարրերի առկայության մասին: Սա հաստատվում է նաև այն փաստով, որ երիտասարդ օգտատերերի ճնշող մեծամասնության կարծիքով էլեկտրոնային նամակները շատ հարմար են և կարող են լավագույնս ծառայել միայն

ուսուցիչների հետ հաղորդակցությունն իրականացնելիս: Նրանց համոզմամբ՝ հասակակիցների հետ պաշտոնական հաղորդակցությամբ շփվելը անընդունելի է, քանի որ այս դեպքում նախընտրելի են հաղորդակցության այլ միջոցներ (chat, viber, what's app, newgroups և այլն):

Էլեկտրոնային նամակների զարգացման հետագա փուլերում էական

կարևորությունն ձեռք բերեց ժամանակի խնայողության գործոնը, որն էլ աստիճանաբար որոշիչ ազդեցությունն թողեց էլեկտրոնային նամակների ոճաժանրային յուրահատկությունների վրա: Ինչպես ցույց է տալիս փաստական նյութի մեր քննությունը, էլեկտրոնային նամակներում խոսքի գրական լեզվին հատուկ ձևերն իրենց տեղը զիջեցին բանավոր, խոսակցական, ոչ պաշտոնական ձևերին, և այս փոխակերպումները նամակը ընդհուպ մոտեցրին էլեկտրոնային հաղորդակցության ժանրին՝ այն օժտելով ակնհայտ դինամիկայով և որոշակիորեն կրճատելով հաղորդակցությանը տրամադրվող ժամանակը: Բերենք մի օրինակ.

Phillip,

We have been working on different apartments today and having to listen to different, people about what Mary is saying should i be worried? ants seem to be invading my apartment. You got my other fax's Wade is working on the bulletin board that I need up so that I can let tenants know about what is going on. Gave #25 a notice about having to many people staying in that apt and that problem has been resolved. Also I have a tenant in #29 that is complaining about #28 using fowl language. I sent #28 a lease violation we will see how that goes call you tomorrow

Thanx Lucy

Վերլուծելով էլեկտրոնային հաղորդակցության սույն նմուշը՝ կարող ենք փաստել, որ այն պարունակում է բանավոր խոսքի որոշ հատկանիշներ: Նախ և առաջ խախտված է նամակներին հատուկ ձևաչափը. Դրանում բացակայում է ողջունի խոսքը: Նամակում

հասցեագրողը կիրառում է *have to* մոդալ բայի ներկա վաղակատար

շարունակականի ձևը, որը, լեզվում ակտիվ չէ: Ուշադրություն է գրավում *fax's* գործածությունը *fax* գոյականի հոգնակի *faxes* ձևի փոխարեն, որը խոսքի անփուլյթ կիրառության նշան է, թեև այդ կիրառության հիմքում հարկ է տեսնել այդ երկու ձևերի նույնահնչության փաստը: Կետադրական նշանները սույն նամակում սխալ են կիրառված. հեղինակը ստորակետ է դրել *different people* որոշիչ-որոշյալ կապակցության մեջ (*different, people*), որը լիովին հակասում է որոշիչ որոշյալ շարահյուսական կապի սերտության դրույթին, իսկ *I sent #28 a lease violation* նախադասության վերջում բացակայում է վերջակետը: Ստորակետ չի դրված նաև երկու համադաս նախադասություններն իրար կապող շաղկապից առաջ, ինչը անհրաժեշտ է, եթե երկրորդ նախադասության ենթական փոխված է (*many people staying in that apt and that problem has been resolved*): Կետադրված չեն նաև հաջորդող նախադասությունները, որոնցից վերջինում բացակայում է նաև ենթական (*I sent #28 a lease violation / we will see how that goes / call you tomorrow*): Փորքատառով գրված *I* անձնական դերանունը նույնպես պաշտոնական գրագրության մեջ անընդունելի է: Տեսանելի է նաև, որ սույն հատվածում ճիշտ չեն կիրառված մակբայերը: *Also* մակբայը տեղադրված է նախադասության սկզբում, որն ըստ էության ընդունելի չէ անգլերենի շարահյուսության սահմանված կանոնով: *Gave #25 a notice about having to many people staying in that apt and that problem has been resolved* սույն խալ է նաև *to* միավորի կիրառությունը (*to many people staying...*). Ասույթի բովանդակությունից կարելի է կռահել, որ այստեղ պահանջվում է *too* մակբայի գործածությունը, քանի որ հասցեագրողի նպատակն է շեշտել կենվորների անթույլատրելի կուտակումը հյուրատան տվյալ համարում, ինչն էլ, ըստ երևույթին, առիթ է դարձել հյուրատան խաղաղ ու անաղմուկ մթնոլորտի խաթարման և հարուցել է մյուս կենվորների դժգոհությունը: Էլ եկտրոնային հաղորդակցության այս նմուշում նկատելի է խոսակցական և համացանցային սլենգի այնպիսի տարրերի առկայություն, ինչպիսիք են *thanx* և *fowl language*:

Չեղջ ու մները, հասարակաբանությունները, շարահյուսական պարզ կառույցները, որոնք բնորոշ են համացանցային լեզվի նախնական փուլերին, ինչպես նաև կրկնաբանություններ

պարունակող
ի հարկե,

նախադասությունների

հերթագայությունը,

բանավոր խոսքի գերակայության վկայությունն են տվյալ ասույթում: Լեզվական նշված փաստերի առկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խոսքի տվյալ հատվածը ձևավորված է բանավոր խոսքին բնորոշ յուրահատկություններով:

Հաջորդ օրինակը նույնպես էլ եկտրոնային հաղորդակցության նմուշ է.

Marie,

Just wanted to drop you a line and check and see if this is a good e-mail address. I haven't sent you any corny jokes in a while. Love, your older adopted brother, Carroll

Այստեղ զեղչված է ենթական, որը պետք է արտահայտված լիներ առաջին դեմքի անձնական դերանվան եզակի թվով: Ինչ վերաբերում է հաջորդ ասույթին, ապա ընթերցողի համար այն կարող է երկիմաստ լինել. կամ զեղչված է նախադասության ենթական, և կամ այն հրամայական եղանակով է: Ավելի ին՝ այն կարող է մեկնաբանվել նաև որպես տվյալ հաղորդակցությունն ամփոփող հրաժեշտի խոսք: Այս ամենը ակնհայտորեն տրամադրում են ընթերցողին նամակը ընկալելու որպես բանավոր խոսքի բնութագրական գծերով հագեցած էլեկտրոնային հաղորդակցություն:

Տեսագործնական ծավալուն նյութի քննությունն էլեկտրոնային հաղորդակ-

ցության մեջ, բացահայտելով որոշակի ընդհանրություններ, առաջ է քաշում էլեկտրոնային ասույթների խոսքային իրադրությունը կարևորելու և բնութագրական հատկանիշները դասակարգելու անհրաժեշտություն: Հասկանալի է, որ ցանկացած խոսքային իրադրությունում անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ հաղորդակցության ժանրը, թեման, բովանդակությունը, նպատակը, ասույթի խոսքաստեղծման առանցքը (ինչպես և ինչպիսի վերաբերմունքով է իրականում հաղորդակցությունը), փոխներազդման մասնակիցներին, ինչպես նաև ասույթի կառուցվածքը (Saville-Troike 1989): Այս բոլոր կարևոր կողմերի հաշվառումը թույլ է տալիս նկատել, որ.

- Էլ Եկտրոնայ Ին
ն Երկա
կարող
հաղորդակցության ժամրը գարգացման
փուլում գլխավորապես
Է պարունակել ինչպես
խառնածին Է.
պաշտոնական

նամակներին, այնպես էլ առօրյա-խոսակցական խոսքին բնորոշ
յուրահատկություններ:

- Էլեկտրոնային հաղորդակցության թեմաների ընտրությունը
սահմանափակվում է

մասնակիցների առաջադրած թեմաներով, որոնց շուրջ
օգտատերերը պետք կարծիքներ փոխանակեն որոշակի
ժամկետներում: Յենց թեման է, որ միմյանց անձանոթ
մասնակիցների միջև կապող օղակ է դառնում:

- Էլեկտրոնային հաղորդակցության նպատակը կամ իրացվող
գործառույթը նույնպես կարող է տարբեր լինել, թեև ամեն
դեպքում այն հարստացնում է քննարկվող թեմայի շուրջ
օգտատիրոջ գիտելիքը:

- Բանավոր խոսքի յուրահատկությունների հետզհետե
ընդլայնվող կիրառությունը

Էլեկտրոնային հաղորդակցության մեջ բացատրվում է
տարաբնույթ հարատեքս-տային (ոչ լեզվական) ցուցիչներ
օգտագործելու անհնարինությունը, թեև քննարկ-վող թեմայի
նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտելու նպատակով
հաղորդակցվողները հաճախ դիմում են հուզանշանների և այլ
լեզվական (կետադրական նշաններով առոգաբանական
յուրահատկություններ, տառային հապավումներ և այլն) ու ոչ
լեզվական միջոցների (հաղորդակցվողների միջանձնյա
հարաբերություններ, զգացմունքային տարբեր նրբերանգներ
արտահայտող հուզա- նշաններ, շարժական հուզապատկերներ և
այլն) գործածությունը:

- Կառուցվածքային առումով Էլեկտրոնային ժամանակակից
հաղորդակցությունը հիմնականում շրջանցում է նամակի համար
պարտադիր համարվող ողջունյի և հրաժեշտի խոսքերը, թեև այս
երևույթը գլխավորապես պայմանավորված է ազգա-մշակութային
յուրահատկություններով, գրուցակիցների հասարակական
դիրքով, ծանոթության աստիճանով և համացանցային
քաղաքավարության մասին նրանց տեղեկացվածությամբ:

Յետևյալ Էլեկտրոնային նամակում, հեղինակը ծննդյան օրվա
առթիվ հրավեր է

ուղարկում իր ընկերներին.

Subject: 30th B-day Invite
Hope you folks can make it.

Վերլուծելով նմուշը՝ դժվար չէ նկատել, որ այստեղ բացակայում է ողջունի խոսքը, միայն հաղորդակցության թեմայով ենք կողմնորոշվում, որ այն հրավեր է, քանի որ գերակշռող մասում այդ մասին հուշող ոչ մի տեղեկատվություն չկա: Հաղորդակցության ոճը ամբողջովին խոսակցական է. հեղինակը կիրառել է *B-day* հասվածումը և *invite* գոյականը, որը *invitation* լեզվական միավորի խոսակցական տարբերակն է: Տեքստում զեղչված է նախադասության ենթական, որը պիտի արտահայտվեր առաջին դեմքի / անձնական դերանվամբ: *Folks* միավորի իմաստափոխված խոսակցական տարբերակն այստեղ արտահայտում է **ընկերներ** իմաստը: Տեքստի բանավոր յուրահատկությունների առկայության վկայություն է նաև **make** լիմաստ բայի խոսակցական ձևը **հաքողել**, կարողանալ ժամանել իմաստով: Այնտեղ չկան հրաժեշտ արտահայտող լեզվական տարրեր:

Հետազոտողները հակված չեն էլեկտրոնային հաղորդակցությունը առանձին կիբերժանր համարելու, քանի որ, ինչպես ցույց տվեցին վերոբերյալ օրինակները, էլեկտրոնային հաղորդակցությունն իրականացնելիս այսօր արդեն նախընտրությունը տրվում է բանավոր խոսքին բնորոշ մարտավարություններին, որոնք էլ առավել ապես հատկանշական են վիրտուալ գրույցներին, մասնավորապես՝ չատերին (Yates & Orlikowski 1998): Հետևաբար՝ միանգամայն արդարացված է էլեկտրոնային հաղորդակցությունը որպես առանձին ժանրային դրսևորում չընդունելը, չնայած դրա՝ նամակին բնորոշ կառուցվածքային և լեզվական որոշակի յուրահատկություններին: Ըստ երևույթին, դա հնարավոր կլինի անել միայն այն դեպքում, երբ փորձարարական ուսումնասիրությունները հաստատեն այդ յուրահատկություններին կայունությունն ու լայնատարած բնույթը: Սակայն սա էլ միանշանակ ակնկալիք չէ, եթե չանտեսենք այն հանգամանքը, որ հաղորդակցության այս տեսակը աչքի է ընկնում լեզվական բնութագրի տարափոփոխում և «հոսունություն ամբ»: Դիտարկենք հետևյալ օրինակը.

kenneth.lay@enron.com

To: *pamela.j.allison@dynegy.com*

Subject: Re: Jeff's Leaving

Cc:

Bcc:

Date: Wed, 29 Aug 2001 06:26:10 -0700 (PDT)

Dear Pam:

Thank you for your e-mail of August 15th. It is always a pleasure to hear from former employees. Thank you also for calling attention to instances which, on the surface, do not appear to be representative of our expectations of Enron leadership.

Part of our continuous improvement involves an on-going review of our management and the diversity of styles therein. True, not everyone is agreeable to Enron's culture or the many different management styles at Enron. We do, however, expect all of our employees - not just management - to adhere to our core values of respect, integrity, communication and excellence. These values become even more significant as we continue to grow and expand our scope of business, and more critical as we become a more culturally diverse workforce.

We enjoy our status as one of the best places in America to work according to Fortune and other sources thanks in part to our willingness to examine our organization and make needed change. Our employee surveys, belief in open communication, and exit interview process for employees choosing to leave Enron are examples of our efforts to seek out feedback and scrutinize the way we do business. Your feedback will help play a role in that process.

Sincerely,

Ken Lay

Բերված էլեկտրոնային նամակը առանձնանում է պաշտոնական նամակների բնորոշ կառուցվածքով, քանի որ հասցեագրողը, հետևելով պաշտոնական նամակների կանոններին, պատշաճ կերպով ներկայացնում է թեման և ողջույնի խոսքը: Բուն նամակում որպես ներածական խոսք հասցեագրողն իր շնորհակալական խոսքն է

հղում հասցեատիրոջը իր նախորդ նամակին պատասխանելու համար:
Նոր պարբերությունն սկսելով՝ հասցեագրողը անցնում է իրեն
հուզող թեմայի քննարկմանը:

Հատկանշական է, որ սույն նամակի պաշտոնական
յուրահատկությունները

դրսևորվում են նաև շարահյուսական կառույցների և
կետադրության ընտրությամբ. մասնավորապես՝ *We do, however, expect all
of our employees.....* նախադասության մեջ համոզմունքը շեշտող,
ընդգծող շարահյուսական շարահյուսական կառույցը (*we do expect*),
ինչև առօրյա, խոսակցական անգլերենում այդքան էլ լայն
տարածում չունի, մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ
հասցեագրողի՝ սույն կառույցի նախընտրությունը
պայմանավորված է ուղերձն ավելի տպավորիչ ու ազդեցիկ
դարձնելու մտադրությամբ: Քննությունը պարզում է, որ
հասցեագրողը, խստիվ հետևելով պաշտոնական նամակների ձևաչափին,
չի անտեսում անհրաժեշտ կետադրական նշանների գործածությունը
(միջադաս նախադասությունը անջատված է գծիկներով): Ավելին՝
օգտատերերը նամակն ամփոփելիս հաճախ հետևում են
նամակագրության ավան-դական ոճին: Այսպես՝

From: sandra.brawner@enron.com

To: byoung@prebon.com

*Subject: **Re:***

Cc:

Bcc:

Date: Mon, 11 Sep 2000 08:55:00 -0700 (PDT)

Hello Bill,

*It was great to get your note today. I also think of you often. Thanks for the complements concerning Enron, as always I am very proud of Enron where we've been and where it seems we are going. Work is going well, Business with Prebon is still null. Has nothing to do with Cathy I think she is a great person and a good broker, it just doesn't seem like they (Prebon) **has** any good information and markets anymore. It is sad actually, ever since you left the group things have never been the same. **YOU** made a big difference there.*

*Yes I would love to try and meet with you. I need more information though. Things are **kinda** hectic here and at home so timing is everything for me these days. Lunch is out of the question. So we are looking at drinks or dinner. the week of the 20th is better. The week of the 25th is not going to be easy **CUZ** it is settlement week.*

Pam is doing fine. Still looking for a job. Hopefully something will happen soon. She had mentioned that you wrote a note, I guess I got the impression she had replied. She is a little stressed in trying to get things settled in her life so just give her some time.

Բերված էլեկտրոնային նամակում միանգամայն տեսանելի են բանավոր խոսակցական և եզրվի դրսևորումները, որոնք, ինչպես նշել ենք, բնորոշ են էլեկտրոնային զրույցներին (չատերին): Վերջիններս ընդհանուր առմամբ ավելի նման են հեռախոսազրույցների, չնայած զրուցակիցները հաղորդակցվում են ստեղնաշարի միջոցով: Ինչպես տեսնում ենք, հապավումները տարածված են նաև էլեկտրոնային նամակներում, թեև դրանք առավել բնորոշ են զրույցներին: **CUZ U kinda** հապավումների կիրառությունը տվյալ էլեկտրոնային նամակը վերածում է էլեկտրոնային հաղորդակցության նմուշի: Այստեղ նույնպես էլեկտրոնային հաղորդակցությունը, բավականին մեծ ծավալով հանդերձ, այդուամենայնիվ տարածությունն և ժամանակ ինայելու միտում է դրսևորում՝ նշված երկու հապավումները կիրառելով: Սույն ասույթում աչքի է զարնում ևս մի հետաքրքիր իրողություն. YOU անձնական դերանվան բոլոր տառերը գրված են մեծատառերով, ինչը, ըստ համացանցային քաղաքավարության ամրագրված նորմերի, սովորաբար համարվում է գոռոց և չի խրախուսվում: Նշված հատվածի համակողմանի քննությունից համոզվում ենք, որ տվյալ դեպքում **You** –ի այսպիսի գործածությունը, ստանձնելով հարալեզվական միջոցների գործառնությունը, նպատակադրված է շեշտադրելու հասցեատիրոջ կարևորությունը: Բերենք մեկ այլ օրինակ.

From: sandra.brawner@enron.com

To: kennethbrawner@email.msn.com

*Subject: **Re: thinking of you***

Cc:

Bcc:

Date: Thu, 19 Oct 2000 07:33:00 -0700 (PDT)

Thank you for the message - *i need it today . It is 2:35 and i am exhausted - i need a cig and a beer. I love you.*

Այստեղ օգտատիրոջ՝ / անձնական դերանունը փոքրատառով կիրառելը ակնհայտորեն խոսակցական անգլերենի վառ օրինակ է: Խոսակցական ոճի գերակա-յ ությունը հաստատվում է նաև այլ կիրառություններով. *a cig* հապավման գործածու-թյունը, *beer* անհաշվելի գոյականի կիրառությունը անորոշ հոդով:

Տարածություն և ժամանակի խնայման հիմնական նպատակի իրականացման

ձգտումն առկա է համացանցային հաղորդակցության գրեթե բոլոր նմուշներում: Բերենք ևս մեկ օրինակ՝

From: sandra.brawner@enron.com

To: s.schnitzer@worldnet.att.net

Subject: **Re:**

Cc:

Bcc:

Date: Thu, 28 Sep 2000 09:02:00 -0700 (PDT)

*sounds great - but i am too conservative. That is alot of \$\$ for three days. **And** it is close to **x-mas**. Sorry - maybe later in the year? I had a nice time at Bens party. Thank you for being you.*

Էլեկտրոնային նամակի սույն նմուշը հագեցած է խոսակցական անգլերենի տարրերով. *dollar* բառի փոխարեն **\$\$** նշանների գործածությունը, *Christmas* միավորի փոխարինումը **x-mas** տարբերակով, **and** համադասական շաղկապի կիրառությունը նախադասության սկզբում (որը սովորաբար ընդունված է անգլերեն նորմատիվ խոսքում) *moreover* մակբայի փոխարեն, հարալեզվական միջոցի գործառնությունը կատարող հարցական նշանի կիրառությունը: Ընդունված նորմի ակնհայտ խախտում է

Նաև բանավոր խոսքի մեկ այլ դրսևորում՝ ապաթարցի բացակայությանը վերաբերող - թյունն արտահայտող (Possessive Case) *Ben's* հատուկ գոյականի *s*-ից առաջ (*Bens party*):

Ստորև բերվող էլեկտրոնային նմուշը գործնական հաղորդակցության համա-

տեքստի օրինակ է.

To: pallen@enron.com

cc:

Subject:

Phillip,

How are you and how is everyone? I sent you the rent roll #27 is moving out and I wknow that I will be able to rent it real fast.All I HAVE TO DO IN there is touch up the walls .Four adults will be moving in @130.00 a wk and 175.00 deposit they will be in by Thursday or Friday.

Thank You , Lucy

Էլեկտրոնային այս հաղորդակցության մեջ բաց է թողնված ողջուն պարունակող մեկնարկային ասույթը՝ չնայած այն փաստին, որ վերջինս իր բնույթով գործնական է: Բացակայում է նաև նամակի բուն թեման ստեղծող ասույթը: Վերլուծությանը հավաստում է, որ այստեղ էլ առկա են բանավոր խոսքի յուրահատկություններ: Հասցեագրողը՝ Լյուսին, լեզվական տնտեսման նպատակով ոչ ամբողջությամբ է կիրառում *want (wknow)* բայը, որի իմաստը պարզ է դառնում միայն հաղորդակցական ակտի հարա- տեքստի շնորհիվ: Բանավոր խոսքի դրսևորումներից է նաև մեծատառերով կիրառված *ALL I HAVE TO DO IN* լեզվական միավորների շարքը, որը վկայում է Լյուսիի՝ հասցեատիրոջ ուշադրությանը հաղորդվող տեղեկատվության վրա հրավիրելու ցանկության մասին: Նկատելի է, որ սույն մարտավարությանը գոռոց կամ զայրույթ արտահայտելու նպատակով չի գործածվում: “*wk*” կրճատագրությանը (որն այս դեպքում նշանակում է *week*) կարող է թյունրիմացության առիթ դառնալ, քանի որ այն լայն կիրառության չունի: Նմուշի քննությանը կարգվում է, որ հասցեագրողը հակված է գործածել

բանավոր դիսկուրսին բնորոշ խոսել առճ անգամ այն դեպքում, երբ
իրականում է գործնական հաղորդակցություն:

Ստորև ներկայացված էլեկտրոնային հաղորդակցական նմուշում աչքի են զարնում խոսակցական և եզրին բնորոշ մի քանի և եզրական միավորներ և կառույցներ.

From: **phillip.allen@enron.com**

To: **andy.zipper@enron.com**

Subject:

Cc:

Bcc:

Date: Tue, 24 Oct 2000 07:50:00 -0700 (PDT)

Andy,

I spoke to John L. and he ok'd one of each new electronic system for the west desk. Are there any operational besides ICE and Dynegy? If not, can you have your assistant call me with id's and passwords.

Thank you

Phillip

Հասցեագրողը տվյալ նմուշում գործածել է *okay* բայը, որը խոսակցական անգլե-րենի բացահայտ դրսևորում է: Հատկանշական է, որ դա կրկին կիրառվել է գործնական նամակում, ինչից կարելի է ենթադրել, որ տվյալ միտումը ավելի ևայնատարած դրսևորում ունի: Հաջորդ *If not, can you have your assistant call me with id's and passwords* ասույթը ներառում է գեղջված միավոր (*there are not*-ի փոխարեն հասցեագրողը ընտրել է *if not* տարբերակը), ինչպես նաև հարցական ասույթներին բնորոշ շրջուն շարադասություն, որի վերջում բացակայում է հարցական կետադրական նշանը: Սույն ասույթը (*if not, can you have your assistant call me with id's and passwords*) կարելի է որակել որպես ինքնաբուխ և դինամիկ, քանի որ \$իլիպը անտեսում է գրավոր խոսքի նորմերը՝ անգամ գործածելով քերականական սխալ կաղապարներ, մասնավորապես՝ ապաթարցի կիրառումը *id's* միավորում, որը ակնհայտորեն չի համապատասխանում անգլերենի ապաթարցի կիրառման կանոններին:

Մեկ այլ նմուշում տեսնում ենք, որ հասցեագրողը միանգամից անցել է բուն թեմային՝ խախտելով էլեկտրոնային նամակներին բնորոշ ձևաչափը: Այսպես՝

Here are the actual utility bills versus the cap. Did we collect these overages? Let's discuss further? Remember these bills were paid in July and August. The usage dates are much earlier. I have the bills but I can get them to you if need be.

Հասցեագրողի խոսքը կարելի է բնորոշել չկապակցված, քանի որ սույն հաղորդակցական նմուշն ընկալելու համար մեզ անհրաժեշտ է հենքային գիտելիք: Դեռ ավելին՝ առկա են ասույթներ, որոնք բանավոր խոսքի վառ դրսևորում են, ինչպես օրինակ՝ *Let's discuss further?* հրամայական ասույթի հետ հարցական նշանի կիրառումը: Սույն համադրությունն անսովոր է այնքանով, որ բանավոր խոսքում հրամայական ասույթներին բնորոշ է իջնող տոն, սակայն այս պարագայում հարցական նշանի առկայությունը վկայում է բարձրացող տոնի մասին: Լեզվական քաղաքավարության նորմերի խախտում է նաև *Remember these bills were paid in July and August* հրամայական ասույթը, քանի որ, ինչպես հայտնի է, գործարար անգլերենում գերիշխում է քաղաքավար խոսքը: Փաստական նյութի քննությանը ցույց է տալիս, որ էլեկտրոնային նամակների սահմանումն ու ոճաժանրային որոշարկումը դրանց զարգացման ներկայիս փուլում դեռևս խնդրահարույց են: Այդուհանդերձ, մեր ուսումնասիրությանը հիմք է տալիս փաստելու, որ էլեկտրոնային նամակները, որոնք տարածամասակյա հաղորդակցության լայնորեն կիրառվող միջոցներ են, հիմնականում խառնածին բնույթ ունեն, քանի որ առանձնանում են թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքին հատուկ գծերով¹³:

Անշուշտ իրավացի է ն. Բերոնը, որը բանավոր և գրավոր դիսկուրսի տարա-

տեսակները սահմանելիս հատուկ շեշտադրում է, որ կարճ բառերը և բառակապակցությունները հիմնականում կիրառվում են բանավոր խոսքում, մինչդեռ գրավոր դիսկուրսը բաղկացած է լեզվական բարդ միավորներից: Խոսքահերթը բնորոշ է միայն գրույցներին:

Հապավումները լայնատարած կիրառություն են գտնում գրավոր դիսկուրսում և հիմնականում գործածելի չեն

բանավոր խոսքում: Ցուցային արտահայտությունների
առկայությունը բանավոր դիսկուրսում պայմանավորված է
բանավոր

խոսքին հարող իրադրային հարատեքստով, ինչը հնարավոր է դարձնում վերջիններիս մեկնաբանությունը (Baron 2009):

Քննելով գրավոր և բանավոր դիսկուրսի սահմանումները և դրանց փոխ-

կապակցվածությունը համացանցային դիսկուրսի համատեքստում՝ հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ համացանցի լայն տարածման շնորհիվ, բազմալեզու հաղորդակ-ցական միջավայրի ի հայտ գալու և զուգընթաց, աստիճանաբար պայմանավորված հաղորդակցվողի սոցիալական ինքնությունն արտահայտելու ցանկությունը, սկսեցին անտեսվել տվյալ լեզվի ուղղագրության կանոնները: Ինչպես գիտենք, անգլերենի ուղղագրությունը խիստ կանոնակարգված է, որտեղ հստակ ուրվագծված են դրա օրինաչափությունները: Համացանցային դիսկուրսում կիրառվող՝ անգլերենի ուղղագրական առանձնահատկությունների քննությունը փաստում է, որ վերոնշյալ օրինաչափությունները մեծապես ենթակա են փոփոխության, և դա հիմնավորվում է հաղորդակցվողների՝ առօրյա խոսքին ավելի մոտ ինտելեկտումով: Եվ իրոք, դժվար չէ նկատել, թե ինչպես է անգլիախոս համացանցային օգտատերը բայի *-ing* վերջավորությունը փոխարինում *-in*-ով, *you* անձնական դերանունը *ya* կամ *ye ձեռքով*, իսկ *the* որոշյալ հոդը՝ դարձնում *de* կամ *da*¹⁴:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցային տիրույթում ընդհանրապես հաղորդակցվողները հակված չեն թաքցնելու իրենց ազգային և տարածքային պատկանելությունը: Օրինակ, դիսկուրսի այս հատվածում կիրառվող լեզվական միավորների բարբառային դրսևորումները բացահայտում են անհատների էթնիկ և տարածքային ինքնությունը, ինչպես ստորև բերվող օրինակում, որտեղ գործ ունենք աֆրո-ամերիկյան անգլերենին բնորոշ տարրերի հետ: Այսպես՝

but dats new school not old school !

Օգտատերը, քնարկելով հիպ-հոպ երաժշտության երկու ուղղությունները, *that* ցուցական դերանունը դիտավորյալ խեղաթյուրում է, որպեսզի հաղորդի աֆրո-ամերիկյան անգլերենին հատուկ արտասանական յուրահատկությունները: Հատկանշական է, որ աֆրոամերիկացիները հիմնականում [ծ] շփական հնչյունը սխալ են

արտաբերում:

Չաջորդ նմուշում նկատելի է շոտլանդական անգլերենի կիրառությունը.

YASS

Չավանություն հեղինակը արտահայտող մեկնաբանության ցանկացել է

մատնանշել իր շոտլանդական ինքնությունը: Նրանք, ովքեր ծանոթ են բրիտանական անգլերենի տարատեսակներին, անմիջապես կհասկանան օգտատիրոջ էթնիկ պատկանելությունը: Իսկ Yes լեզվական միավորի մտածված խեղաթյուրումը հետապնդում է հաղորդակցական մեկնաբանակ՝ հաղորդակցությունը հնարավորինս մոտեցնել բանավոր խոսքին:

Չամացանցային տարաժամանակյա դիսկուրսից վերցված մեկ այլ նմուշում օգտատերը, կրկին խախտելով գրավոր դիսկուրսին բնորոշ նորմերը, ցանկանում է, որ իր մեկնաբանությունը դառնա ավելի կենդանի. նույնական լինի բանավոր խոսքին.

YASSSSSS ANOTHA ONE <3

Տվյալ ասույթը youtube սոցիալական կայքից է, և դրա միջոցով օգտատերը իր ուրախությունն է արտահայտում, քանի որ իր երկրպագած խումբը նոր երգ է թողարկել: Ինչպես նախորդ նմուշում, այս դեպքում էլ ընտրված լեզվական միջոցները երևան են հանում օգտատիրոջ արտասանական յուրահատկությունները: Ամբողջ ասույթը գլխատառերով է, որը մատնանշում է խոսողին համակած ուրախության խիստ դրական հույզերը: Ասույթում նկատելի է, որ օգտատերը, հետևելով բրիտանական անգլերենի հնչյունաբանության կանոններին, սղում է [r] հնչյունը՝ միևնույն ժամանակ միտումնավոր աղավաղելով լեզվական միավորի ուղղագրությունը՝ **ANOTHA** (Another): Այս հնարքը թերևս պայմանավորված է տեքստային միավորներին բանավոր խոսքի շունչ հաղորդելու գործոնով: Դրական հույզերի մեկ այլ արտահայտություն է **Yayy** ձևը, որը նույնպես խոսակցական անգլերենի բաղադրիչներից է և փոխարինում է yes - ին և ստիպում է եզրակացնել, որ տեքստային միջոցները այս դեպքում զուտ գործիք են առերես հաղորդակցության առանձնահատկություններն ընդգծելու համար:

Բանավոր խոսքի դրսևորումներից կարելի է համարել նաև

հետևյալ նմուշը.

This is so friggin good

Նկատում ենք, որ օգտատերը նախև առաջ կարևորել է Լեզվական քաղաքա-վարու թյան նորմերը՝ կիրառելով (*friggin*) մեղմասությունը, որը երբեմն փոխարինում է

F* միավորով նշվող գռեհկաբանությանը: Յետաքրքրական է, որ միավորը մասամբ կորցրել է իր հիմնական իմաստը և հաղորդակցության ժամանակ ավելի հաճախ կարող է արտահայտել մի քանի իմաստ և կատարել տարբեր գործառնություններ: Մասնավորապես՝ այն գործածվում է որպես հույզերի արտահայտման միջոց կամ պարզապես որպես հեջավորում: Վերը բերված օրինակում բանավոր խոսքին հատուկ տարրը տեսանելի է *frigging* բառի *-ing* վերջավորության աղավաղման մեջ (*friggin*), որը ըստ էության փորձ է պատճենելու *[xŋ]* ռնգային ձևը: Անգլերենի հնչյունաբանական օրենքների համաձայն՝ *[-ing]* վերջավորությունը (վերջածանցը) անհրաժեշտ է արտասանել որպես ռնգային *[ŋ]* հնչյուն: Այսպիսով, օգտատերը ցանկացել է ոչ թե գրել, այլ արտաբերել սույն լեզվական միավորը:

Անգլերենի բարբառային դրսևորում կարելի է նկատել նաև հետևյալ նմուշում.

ain't coming (am not coming): Այս ասույթն առանձնանում է գրական անգլերենի քերականական կանոնների խախտմամբ: Ինչպես գիտենք, *ain't* բայը ամերիկյան անգլերենի խոսակցական դրսևորում է, որի համարժեքն է *am+not* ժխտական քերականական ձևը: *ain't* ժխտական օժանդակ բայի ծագումնաբանության հիմքում ընկած է աֆրոամերիկյան անգլերենը, սակայն վերջինս այժմ խոսակցական անգլերենի անբաժանելի մաս է դարձել: Վերլուծությունը բացահայտում է նաև զեղչված կառույց (զեղչված է / ենթական), ինչն էլ բանավոր խոսքի մեկ այլ դրսևորում է:

Փաստական նյութի քննությունը վկայում է, որ բանավոր դիսկուրսի յուրահատ-

կությունները տեսանելի են նաև համացանցային տիրույթի համաժամանակյա տարա-տեսակում, ինչպես համացանցային զրույցից վերցված հետևյալ օրինակում.

im not angry ya cow (I am not angry you cow)

Տվյալ օգտատերը բացասաբար է տրամադրված խոսակցի նկատմամբ, սակայն փորձում է հակառակը համոզել: Ասույթում նկատելի են քերականական կանոնների խախտում՝ *im (I'm)* քերականական կառույցում / անձնական դերանունը փոքրատառ է, բացակայում է նաև ապաթարցը: *You* անձնական դերանվան դիտավորյալ

Խեղաթյ ու ըմամբ (յժ) օգտատերը նպատակ է ունեցել իր խոսքն ավելի իրական և պատկերավոր դարձնել :

Ստորև ներկայացվող համաժամանակյա հաղորդակցական նմուշը նույնպես կարելի է որակել որպես առերես հաղորդակցության դրսևորում.

wanna hear that maniac (do you want to hear that maniac?)

Այս ասույթի մեկնաբանությունը կարող է խնդրահարույց լինել, քանի որ առանց հարատեքստի ընկալելի չէ ասույթի իլլոկուտիվ իմաստը, այն է՝ արդյոք խոսքը առաջարկի՞ մասին է (այս դեպքում օգտատերը պետք է առնվազն հարցական կետադրական նշանի միջոցով արտահայտեր իր հաղորդակցական նպատակը՝ առաջարկը), թե՞ սապարճապես հաստատական ասույթ է: Հենքային գիտելիքի շնորհիվ հնարավոր է դառնում եզրակացնել, որ օգտատերը խոսքը նկերոջը առաջարկում է լսել ինչ-որ կատարողի երգ: Այստեղ բանավոր հաղորդակցության առանձնա-հատկություններից է *wanna* խոսակցական միավորը: Այսինքն՝ օգտատերը նախընտրում է հաղորդակցվել այնպես, ինչպես առերես հաղորդակցության ժամանակ: *wanna* լեզվական միավորը նույնպես ի սկզբանե աֆրո-ամերիկյան անգլերենին է բնորոշ, սակայն այժմ գործածվում է խոսակցական անգլերենին տիրա-պետող գրեթե բոլոր անհատների կողմից:

Հետևյալ ասույթում նկատելի են ոչ նորմատիվ անգլերենի առանձնա-հատկություններ՝ *Gtta teanslate*

Առաջին հայացքից բերվածը բառերի անիմաստ կուլյտ է թվում, սակայն եթե խորանանք դրա իմաստի մեջ, կտեսնենք, որ, ցանկանալով հնարավորինս արագ ստեղնաշարել իր միտքը, այս օգտատերը ոչ դիտավորյալ ուղղագրական սխալներ է թույլ տալիս: Դա թերևս բացատրվում է այն փաստով, որ այս անհատի խոսքն անկառավարելի է և չալ անավորված: Այսինքն՝ օգտատերը փորձում է ստեղնաշարել նույնքան արագ, որքան խոսում է:

Հաջորդօրինակը	տարածամանակյա
հաղորդակցական	նմուշ է youtube

սոցիալական կայքից.

damn dis some dope songs.

Այս ասույթով օգտատերն իր հիացմունքն է արտահայտում, քանի որ, ըստ նրա, երգն ուղղակի սքանչելի է: Քննությունը ցույց

Է տալ իս, որ բանավոր խոսքի առանձնա-

հատկություններն ավելի քան նկատելի են: Նախ օգտատերը *damn* բացականչություն ամբ և *dope* ածականի միջոցով իրեն համակած դրական հույզերն է արտահայտում: Առկա է նաև *to be* օժանդակ բայի զեղչում, ինչպես նաև [ծ] հնչյունի խեղաթյուրում:

Եվ այսպես՝ գրավոր և բանավոր դիսկուրսի համեմատական վերլուծության դիրքերից վեր հանելով համացանցային հաղորդակցության մեջ խոսքի այդ ձևերի փոխներթափանցման դեպքերը՝ եզրահանգում ենք, որ համացանցային հաղորդակցությունն առանձնանում է բանավոր խոսքի յուրահատկություններով, չնայած այն իրականանում է ոչ առերես շփման գործընթացում: Տարածամանակյա և համաժամանակյա հաղորդակցական նմուշների քննությունը թույլ է տալիս պաշտպանել այն դրույթը, որ նորի հայտեկած հաղորդակցական սույն միջավայրում բանավոր դիսկուրսին բնորոշ գծերը գերիշխում են: Արդյունքում գրավոր հաղորդակցության մեջ գոյություն ունեցող չափանիշները խեղաթյուրվում են: Դրամասին են փաստում դիտավորյալ խեղաթյուրված ուղղագրական, քերականական, արտասանական տարրեր պարունակող ասույթները:

Ամփոփելով սույն գլուխը՝ կարող ենք եզրակացնել, որ համացանցային

դիսկուրսը բանավոր և գրավոր հաղորդակցության միաձուլում է, որտեղ, անկախ հաղորդակցական մոդելի տարատեսակից, գերիշխում է բանավոր խոսքն՝ իր բոլոր դրսևորումներով: Մեր կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ հաղորդակցվողներն արդեն ստեղծել են որոշակի խոսքային մարտավարություններ (ուղղագրության դիտավորյալ խեղաթյուրում՝ բարբառային յուրահատկություններ արտացոլելու նպատակով, կետադրության յուրահատուկ գործածություն և այլն): Այս արդեն իսկ սահմանված մարտավարությունները համացանցային գրագիտության արգասիք են: Բազմիցս քննարկվել է հարալեզվական միջոցների բացակայության խնդիրը համացանցային դիսկուրսում, և դիսկուրսի սույն տարատեսակը համարվել է աղքատիկ, սակայն մեր կատարած հարցումներից պարզ է դառնում, որ հուզանշանները հիմնականում փոխարինում են հարալեզվական միջոցներին՝ այսպիսով վիրտուալ հաղորդակցությունն ավելի մոտեցնելով

բանավոր խոսքին:

Հատկանշական է, որ էլեկտրոնային նամակները և
մեկնաբանությունները,


լինելով տարաժամանակյա հաղորդակցության տեսակ, նույնպես
առանձնանում են

pwuw4_nr tunuppu punrn2 q.obrn4_, brp hw nr w4g4_n ubrl! huwrw4_nrmroJm'u mubu rrbug tunup[! uwtuornp uuuw4_nrbLm u tuupwq.rbLm:

Uumru pbr4_nq.owlLIWU14br[! wu4'ln4'l ubr4wJwgumu t ubr 4wllwrwo hwrguwu wr Jm'upubr[!.


1. Նշեք Ձեր տարիքը

88 responses



2. 'L2bQ Qb(l ubno

89 n!ponses




3. Մտնե՞ք

10


l)w6wituw won L(\W llp tp i4 rwnmu e;nLqwt12wllutp(smiley, emoticon • -)

88 responses




4. n""r t;nLqwtQwuubru b!2 w4_bLr 2wLn 4rrwnnu5

88 responses




5. Հուզանշանները արտահայտում են

88 responses




6. Ո՞րն է հետ հաղորդակցվելիս եք կիրառում հուզանշաններ

89 réponses




7. Սույն հուզանշանը արտահայտում է

89 réponses




8. արտահայտում է

88 réponses




9. արտահայտում է

87 réponses



10. Հուզանշանները ավելի հաճախ կիրառում եք

88 responses



ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Ու. Չեյֆը առաջին լեզվաբաններից է, որը գտնում է՝ արժեք լուսաբանել գիտակցության մեխանիզմների տարբեր գործառնությունները բանավոր և գրավոր դիսկուրսի ստեղծման համատեքստում (Chafe 1994):
2. Ինչպես նշում է Պաոլիլոն, ջատ սենյակները խթանում են սոցիալական հարաբերությունների ձևավորումը, որն առկա է ոչ վիրտուալ իրական աշխարհում (Paolillo 2001: 185): Չատ սենյակների օգտատերերը միմյանց հետ շփվելիս որոշակի ժամանակ են հատկացնում, և այս գրույցները նպաստում են նոր մի-ջանձնյա հարաբերությունների ձևավորմանը: Նրանք, լեզվական որոշակի մարտավարությունների նախապատվություն տալով՝ ընդգծում են իրենց՝ այս կամ այն համայնքին պատկանելու փաստը, և հենց այդ լեզվական միջոցներն են օգնում ճանաչելու տվյալ համայնքից դուրս գտնվողներին: Տվյալ համայնքի լիարժեք անդամ համարվելու համար անձինք պետք է տիրապետեն տվյալ վիրտուալ համայնքում մեծ տարածում ունեցող լեզվական մարտավարություններին (Peris et al. 2002: 44):
3. Արևմտյան գրականության մեջ շրջանառվող *cyberliteracy* գիտաբանը կիրառվում է միայն համացանցային հաղորդակցական մարտավարությունները բնութագրելու համատեքստում անհատի՝ համակարգչից ու համացանցից օգտվելու կարողությունները գնահատելու համար (Simpson 2005; Yus 2011):

4. * Աստղանիշը՝ [*]համացանցային դիսկուրսում կարող է կիրառվել տարբեր

նպատակներով: Այն գլխավորապես ցույց է տալիս, որ նախորդ հաղորդագրության մեջ հասցեագրողը ուղղափարական սխալ է արել և, կիրառելով աստղանիշ, ուղղում է իր իսկ կատարած սխալը: Աստղանիշը օգտագործվում է նաև որևիցե բառ ընդգծելու համար այն դեպքում, եթե համակարգչային ծրագիրը թույլ չի տալիս բառը թավ ներկայացնել: Առցանց գովազդներում տվյալ կետադրական նշանը ցույց է տալիս, որ գովազդի հաղորդած

տեղեկատվությունը իրականությունը չի համապատասխանում:

5. Անդրադառնալով համաժամանակայնության խնդրին՝ Անդերսոնը նշում է, որ համացանցային հաղորդակցության բնույթը որոշվում է հենց համացանցային ծրագրերով (Anderson et al. 2010):

6. Փ. Սավասի ուսումնասիրությունները վկայում են, որ համացանցով հաղորդակց-

վողները էլեկտրոնային գրույցն ընկալում են որպես բանավոր խոսքի դրսևորում

(Savas 2011):

7. Յետաքրքրական է, որ հուզանշաններն ի սկզբանե գործածվել են չատսենյակ-ներում, այնուհետև սոցիալական այլ կայքերի օգտատերեր սկսել են դրանք կիրառել համացանցային հաղորդակցության այլ միջավայրերում (Quinion 1996, Witmer & Katzman 1997):

8. Այս համոզման է հանգում Ն. Բերոնը՝ ուսումնասիրելով իր կորպուսի հաղորդա-

գրությունները: Նա կանանց խոսքում արձանագրել է հուզանշանների մեծ թվով կիրառություն: Ա. Ուոլֆի ուսումնասիրությունը, սակայն, փաստում է, որ տղամարդիկ նույնպես հակված են կիրառելու հատկապես հեգնական իմաստարտահայտող հուզանշաններ (Wolf 2000): Անդրադառնալով Դ.

Յուլիանի և Ս. Կլավերտի (2005) քննությանը, որը կենտրոնանում է արական սեռի դեռահաս բլոգերների հաղորդակցական վարքագծի վերլուծության վրա, նկատում ենք, որ վերջիններիս համացանցային հաղորդակցական ոճը ինչ-որ առումով տարբերվում է նույն տարիքային խումբը ներկայացնող իգական սեռի բլոգերներից: Մասնավորապես՝ արական սեռի ներկայացուցիչներն ավելի շատ են գործածում սիրախաղ և տխրություն արտահայտող հուզանշաններ:

9. Եվ իրոք, Ն. Բերոնի դիտարկումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

համացանցային հաղորդակցության տարատեսակները տեխնիկապես գրավոր խոսքի դրսևորում են, սակայն դրանց մեծամասնությունն օժտված է բանավոր խոսքին բնորոշ գծերով, իսկ կետադրական և տպագրական միջոցների կիրառությունը միտված է արտահայտելու հարալեզվական, շարժաբանական առանձնահատկություններ (հմլլտ.

Baron 2009):

10. Ք.Ու Երին, օրինակ, չառ դիսկուրսը ինտերակտիվ գրավոր
տեքստ (interactive

written text) համարելու կողմնակից է (Werry 1996), մինչդեռ
Ֆ. Էլմերը այն

համարում է որպես գրավոր խոսք (written speech) (Elmer-Dewitt 1994):
9. Մըրչընթը և Բլանկո Ռոդրիգեսը այն բնութագրում են որպես գրավոր միջոցներով իրականացվող զրույց (written conversation) (Merchant 2001; Blanco Rodriguez 2002), իսկ մյուսները համոզված են, որ չառդիսկուրսը բանավոր խոսքի գրավոր նմանակում է (written simulations of oral conversations):
Լ. Ֆրակա դե Բառեռան առաջարկում է այն բնորոշել բազմախոսության (pluridialogue) գիտաբանով (Fracca de Barrera 2007):

11. Ակնհայտ է, որ չառ սենյակներում տեղի ունեցող հաղորդակցությունը պարտադրում է մի շարք մարտավարություններ, որոնց միջոցով փոխանցվող հաղորդագրությունները վերածվում են բանավոր խոսքի՝ գրավոր արձանագրված նմուշների:
12. Այսօր արդեն իրականություն է դարձել երբեմնի այն կանխատեսումը, որ Էլեկտրոնային նամակները կարող են արդյունավետորեն որոշակի գործառույթ իրականացնել նաև կրթական դաշտում՝ Էլ ավելի սերտացնելով դասախոս-ուսանող կապը, բարձրացնելով ուսուցման արդյունավետությունը (Wilkinson 1998, տե՛ս նաև Մադոյան 2016):
13. Սույն ատենախոսության մեջ մենք արդեն անդրադարձել ենք Դ. Բայբերի՝ գրավոր և բանավոր խոսքը սահմանող դրույթներին: Չարկ է նշել, որ նրա կատարած ուսումնասիրությունները լուսաբանում են ռեգիստրի չորս տեսակ (զրույցներ, արձակ, թերթեր և ակադեմիական գրվածքներ), որոնք որոշակի տարբերություններ ունեն: Նրա համոզմամբ՝ որոշյալ հոդը հիմնականում կիրառվում է ակադեմիական գրվածքներում, ակադեմիական դիսկուրսին բնորոշ են նաև *-tion* և *-ity* վերջածանց ունեցող գոյականները, մակբայերի որոշ տեսակներ, ինչպիսիք են *often, usually, significantly, relatively, especially*, և այլն ավելի գործածելի են ակադեմիական դիսկուրսում, քան բանավոր խոսքում (Biber 1988):
14. Չամացանցով հաղորդակցվողների գրեալ ոճը շատերը բնութագրում են որպես

«խոսել գրելով» (talking in writing) կամ Էլ փոխազդող գրավոր դիսկուրս (interactive written discourse) (Werry 1996: 48): Շոի կողմից ուսումնասիրությունը փաստում է, որ տարածքային

բարբառները Facebook սոցիալ ական կայքում համառարած են

(Shaw 2008): Ինքը Շոն ուղղագրական կանոնների խախտումը որակում է որպես ուղղագրական ապստամբություն (spelling rebellion), որը կիրառելով, օգտատերը ընդգծում է իր բարբառին բնորոշ արտասանությունը (Shaw 2008):

ԳԼՈՒԽՅ

ԼԵԶԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ ՄԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

3.1. Ձեղչ ու մը որպես Լեզվական տնտեսաման միջոց

Սույն ենթագլխի խնդրո առարկան զեղչման դրսևորումների քննությունն է համացանցային դիսկուրսում: Հարկ է նշել, որ շարահյուսական զեղչմանը բազմիցս անդրադարձել են տարբեր տեսանկյուններից և տարբեր գիտակարգերում: Ձեղչ ու մը բնական Լեզուներին բնորոշ յուրահատկությունն է, սակայն դրա դրսևորումները էապես տարբեր են մի շարք Լեզուներում: Որպես Լեզվական երևույթ՝ զեղչ ու մն առանձնանում է իրեն բնորոշ բարդությամբ, և թերևս դա է պատճառը, որ զեղչման առանձնահատկությունների Լուսաբանումը միշտ է, որ միանշանակ է: Այսպես՝ շարահյուսական զեղչ ու մը կարելի է սահմանել որպես նախադասության որևէ անդամի բացակայություն դրա շարահյուսական կառուցվածքում: Օրինակ՝ «Աննան ստացավ 20, իսկ Նելլին՝ 14» նախադասության երկրորդ մասում «ստացավ» բայը զեղչված է: Ձեղչ ու մը սահմանող դրույթների Լուսաբանումը ենթադրում է անդրադարձ ոչ միայն շարահյուսությանը, այլև բառային իմաստաբանությանը, դիսկուրսին, առոգաբանությանը, իմաստաբանությանը Լայն առումով և ոճագիտությանը:

Օրինակ՝ շարահյուսագետները շարահյուսական զեղչման մեջ երկու անհրաժեշտ գործոն են կարևորում՝ զեղչման պոտենցիալ հնարավորությունը (licensing) և զեղչված Լեզվական միավորը վերականգնելու հնարավորությունը (recoverability) (McShane 2005:4): Մինչդեռ դիսկուրսի տեսաբանները զեղչ ու մը դիտարկում են թեմայի և ռեմայի տեսանկյունից (McShane 2005:4): Այս մոտեցումներում մեկ ընդհանրություն կա՝ դրանք անդրադառնում են զեղչման ու շագրավ դրսևորումներին և կարող են Լուսաբանվել թե՛ տեսական և թե՛ գործնական առումներով:

Ձեռնարկում միավորների քննությունը պահանջում է սույն
լեզվական տարրերի համակողմանի դիտարկում: Հաճախ ձեռնարկում
տարրերը կարելի է շարահյուսական դասակարգման ենթարկել:
Այսպես, գրականության մեջ շարահյուսական ձեռնարկում

շրջանակներում տարբերակում են հայցական հոլովով կիրառված խնդրի գեղջում, որն ունի այդ հոլովով դրված հարաբերյալ (accusative antecedent), հայցական հոլովով կիրառված խնդրի գեղջում, որին բնորոշ է ուղղական հոլովով հարաբերյալը (nominative antecedent), հայցական հոլովով կիրառված խնդրի գեղջում, որը պարունակում է անուղղակի հոլովով դրված հարաբերյալ, անուղղակի հոլովով դրված խնդիր (oblique object), որտեղ առկա է ցանկացած հարաբերյալ, գոյականի (head noun) գեղջում, բացակ (gapping), համադասական նախադասության միավորների գեղջում՝ բացի մեկ բաղադրիչից (stripping), մասնավոր հարցերի ամբողջական գեղջում, որտեղ պահպանվում է հարցական դերանունը (sluicing), բայի գեղջում (verb phrase ellipsis) շաղկապի և հարաբերական դերանվան գեղջում, նախդիրի գեղջում, պայմանական իմաստ արտահայտող բառ-մասնիկների գեղջում (conditional particles), անդրադարձ և փոխադարձ բառ-մասնիկների գեղջում, ենթակայի գեղջում, խնդրի գեղջում, որին բնորոշ է արտալեզվական հարաբերյալ, անդեմ բայածներ պարունակող նախադասություններ:

Գոյություն ունի նաև շարահյուսական գեղջման մեկ այլ տեսակ, որին բնորոշ է են

շարահյուսական հարաբերյալները. խնդիրների գեղջում պայմանավորված՝ նախադասության եղանակավորմամբ (clause modality), խնդիրների գեղջում, որոնց բնորոշ է ընդհանրացված մարդկային նշանակյալ (with a generalized human referent), խնդիրների գեղջում՝ պայմանավորված մի շարք գործողություններով, բայերի բազմաշերտ գեղջում (multicensor verbal ellipsis), շաղկապների գեղջում, հարաբերական դերանունների գեղջում, ենթակայի գեղջում, որին բնորոշ է մարդկային ընդհանրացված նշանակյալ (with a generalized human referent) և այլն (McShane 2005:

7):

Չեղջման մեկ այլ տարատեսակ է իմաստային գեղջումը, որի դեպքում գեղջվում են նախադասության իմաստակիր տարրերը, սակայն դաչի հանգեցնում շարահյուսորեն թերի նախադասության (syntactic gap): Իմաստային գեղջում կատարելիս կրավորական սեռով կիրառված նախադասության գործողության անհայտ կատարողը բաց է թողնվում: Իմաստային գեղջման տարատեսակներից են նաև

ներգործող անդամ

նախադասությունները (agentive impersonals), անհայտ գործողություն կատարողները, ածանցավոր գոյականական նախադասությունների անհայտլրացումները:

Ձևույթները զեղչելիս սղվում են կրկնվող վանկերը (haplology), կամ ձևույթները:

Լեզվական մարտավարությունների շարքին են պատկանում երկխոսությունների, նախադասության հատվածների զեղչումը, անվանական նախադասությունները (nominal sentences), անդամ նախադասությունները (unagentive impersonals), որտեղ բացակայում է գործողություն կատարողը:

Պետք է նշել, որ զեղչված միավորները վերաբերում են իրական աշխարհում

գոյություն ունեցող ինչ-որ հասկացության, հետևաբար անհրաժեշտ է սահմանել կանոններ, որոնց միջոցով կբացահայտվի տվյալ նշանակյալը: Չեղչման՝ որպես լեզվական երևույթի քննություն իրականացնելիս հարկ է դիտարկել մի շարք այնպիսի դրույթներ, ինչպիսիք են՝ ո՞ր շարահյուսական միավորները կարող են զեղչվել, կամ ինչպե՞ս է ընկալվում զեղչված նշանակյալը:

Չեղչումը բազմիցս լուսաբանվել է շարահյուսական, գործաբանական տեսությունների շրջանակներում: Լեզվաբանները հիմնականում կենտրոնանում են այն հարցի վրա, թե ո՞ր շարահյուսական տարրերը կարող են զեղչվել՝ անտեսելով զեղչման հիմքում ընկած կանոնները, որոնց շնորհիվ զեղչվում և գործնականում կիրառվում է այս կամ այն լեզվական միավորը: Չեղչման օրինաչափությունների վերհանումն ու լուսաբանումը կարևոր են, հատկապես ոչ լեզվակիր հանրության համար: Լինելով լեզվական բարդ երևույթ՝ զեղչումը պետք է դիտարկվի նաև գործնական տեսանկյունից, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր համապարփակ ներկայացնել զեղչման թե՛ տեսական և թե՛ գործնական առանձնահատկությունները: Չեղչումը երկրորդական լեզվական երևույթ է, քանի որ այն երևույթը առավել դյուրին է դարձնում խոսքաստեղծման գործընթացը:

Չեղչումը, որպես լեզվական երևույթ, փոխկապակցված է նշանակյալի հետ:

Նշանակյալի շնորհիվ խոսող անհատները կապ են հաստատում

զեղչված միավորի և իրականում գոյություն ունեցող հասկացության տարրի միջև: Սույն միավորների լեզվական անդրադարձը տեղի է ունենում մի շարք արտահայտչական միջոցներով:

Ատենախոսության այս ենթագլխի շրջանակներում փորձ է արվում ներկայացնել ու սույն արտահայտչամիջոցը, որպեսզի զեղչման՝ որպես լեզվական միավորի լուսաբանումը լինի համակողմանի: Այսպես՝ այդ արտահայտչամիջոցներն են (McShane 2005: 13).

□ ուղիղ անվանական անդրադարձ, ինչպես օրինակ՝ *Last week Secretary of State*

Collin Powell went to Belgium,

□ դերանվանականացում կամ այլ ցուցային միավորներ, ինչպես օրինակ՝ *The goal of his visit there was to take part in a meeting of the foreign ministers of the NATO countries,*

□ տարատեսակ լեզվական նկարագրություններ, որոնք իրենց բնույթով կարող են

լինել հստակ և անորոշ, ինչպես օրինակ՝ *This was the Secretary's third overseas trip in less than two months,*

□ այլ աբերական լեզվական միավորներ (փոխաբերություններ, փոխանունություններ և

տարբեր դարձույթներ): Օրինակ՝ *The White House (փոխանունություն) hopes that the visit will tip the balance (փոխաբերություն) of European opinion in favour of sending NATO forces to Iraq:*

Նախադասության իմաստային ամբողջական բնութագիրը տալու համար բավարար չէ միայն տեքստային միավորները միմյանց կապակցելը:

Զեղչված միավորին վերաբերող արտահայտությունները պետք է կապակցվեն իրական աշխարհում գոյություն ունեցող հասկացությունների հետ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է, որ խոսող - անհատը կապակցի նախադասության մեջ տեղ գտած *his* դերանունը և *Collin Powell* անհատի իրական աշխարհում գոյություն ունեցող քաղաքական գործչի և վերջինիս վերաբերող տարատեսակ տեղեկությունների հետ:

Շարահյուսական զեղչումը կարելի է սահմանել որպես շարահյուսական պարտադիր միավորի բացթողում, որի նշանակյալը հնարավոր է ընկալել շարահյուսական կանոնների և դիսկուրսի ցուցիչների շնորհիվ: Շարահյուսական պարտադիր բաղադրիչներից են այլ լեզվական միավորով արտահայտած բայը կամ ստորգյալը, նաև այլ լեզվական տարրեր, որոնք երկրորդական խոսքի մասեր են,

ինչպես օրինակ՝ շարկապը: Օրինակ՝ *The dog is running* և իսկազմ
նախադասություն է, քանի որ վազել

բայն պահանջում է միայն մեկ լրացում՝ գործողություն կատարողին: Մենք իհարկե կարող ենք ավելացնել ցանկացած որոշիչ, ինչպես օրինակ՝ *The dog is running like the wind along the beach*, սակայն սույն լեզվական միավորները քերականության տեսանկյունից անհրաժեշտ չեն, դրանք զեղչման ենթակա չեն: Շարահյուսական զեղչումը համընդհանուր լեզվական երևույթ է, այնուամենայնիվ առկա են որոշակի օրինաչափություններ և սահմանփակումներ, որոնք ըստ լեզվի յուրահատկությունների կարող են տարբերվել:

Սույն օրինաչափությունները և սահմանփակումները հաշվի առնելով՝ փորձենք

լուսաբանել այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են այս կամ այն լեզվական միավորը զեղչելու համար: Շարահյուսական զեղչում իրականացնելու համար կատարվում են նախապայման, լեզուն ինքնին պետք է զեղչման հնարավորություն ընձեռնի կոնկրետ փոխառյալություն համատեքստում, և զեղչված միավորի բովանդակությունը պետք է ընկալելի լինի: Ամենատարածված թույլատրելի մարտավարություններն են որոշակի բառային միավորի զեղչումը և շարահյուսական գուգահեռ կառույցների առկայությունը: Անգլերենում բայի զեղչումը հնարավոր է դառնում օժանդակ բայի կամ գուգահեռ կառույցների շնորհիվ: Ստորև ներկայացվող օրինակները պարունակում են զեղչված լեզվական միավորներ.

1. *If you are going to fall behind, I **will** ^{e1} too.*
2. *[The speaker looking at two chocolate muffins] **Shall** we ^e?*
3. *By midnight Ann **had finished** her term paper and James ^e his physics homework.*

Շարահյուսորեն զեղչված միավորների նշանակյալներն ընկալելի են լեզվական համատեքստի շնորհիվ (1 –ին և 3-րդ օրինակներում), ինչպես նաև արտալեզվական հարատեքստի շնորհիվ (2-րդ օրինակում):

Չեղչում իրականացնելու և վերջինս ընկալելու մարտավարությունները թերևս

հարկ է քննարկել ոչ միայն նախադասությունը սահմանող շարահյուսական տեսությունների շրջանակներում, այլ նաև դիսկուրսի քերականության (discourse grammar) տեսանկյունից: Առաջին դեպքում քննության են առնվում նախադասության գուտ շարահյուսական յուրահատկությունները, մինչդեռ դիսկուրսի

քերականությունը լեզվի նկատմամբ կիրառում է ավելի
համապարփակ մոտեցում, քանի որ սույն

մոտեցման խնդրո առարկան այնպիսի հարցերի քննությունն է, ինչպիսիք են հաղորդ- դակցության հարատեքստը, գրուցակիցների կանխենթադրույթը, վերջիններիս բնորոշ արժեհամակարգը, դիսկուրսի քերականական, իմաստային և հնչերանգային առանձնահատկությունները և բոլոր այն գործոնները, որոնք կարող են ազդել լեզվի կիրառման վրա: Դիսկուրսի տեսության որոշ հետևորդների համոզմամբ՝ դիսկուրսի քերականությունը միակ ուղղությունն է, որն առաջադրում է կիրառելի մոտեցումներ՝ սահմանափակվելով համատեքստում լեզվական միավորների լուսաբանմամբ: Չուտշարահյուսական մոտեցումը իր բնույթով նեղ է, և միայն դրա շրջանակներում չենք կարող լիարժեք պատասխաններ ստանալ այս կամ այն լեզվական խնդիր մեկնաբանելիս: Ինչպես Ջ. Մորգանն է նշում, նախադասությունն քննող տեսական, քերականական դրույթները պետք է դիտարկվեն դիսկուրսի քերականությունից զատ, քանի որ սույն լեզվաբանական ուղղության բնորոշ օրենքների որոշարկումը և կիրառումը խնդրահարույց, եթե ոչ՝ անհնար գործընթաց է (Morgan 1982): Սա թերևս պայմանավորված է այն գործոնով, որ մեզ համար անհնար կլինի չափորոշել խոսող - անհատի կանխենթադրույթները: Ջ. Մորգանը այս կապակցությամբ նշում է, որ դիսկուրսի քերականությունը սահմանող դրույթներ առաջադրելը դեռևս հեռահար նպատակ է, քանի որ խոսքաստեղծման մեր մտավոր ունակությունները իրենց բնույթով բարդ և հարաշարժ են (Morgan 1982:202): Այսպիսով, ավելի նպատակահարմար և արդյունավետ է դառնում բազմաթիվ լեզվական երևույթների մեկնաբանելիս առաջնորդվել նախադասության քերականական և դիսկուրսի քերականության մոտեցումների համալիր կիրառության սկզբունքով²: Դիսկուրսի մեթոդների կիրառումը լեզվական երևույթների քննության համատեքստում շատ ավելի արդյունավետ կարելի է դիտել, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու բազմաթիվ լեզվական երևույթներ՝ միաժամանակ չբացառելով դիսկուրսից անկախ գործոնների առկայությունը, որոնք իրենց բնույթով դժվար են կանոնակարգվում: Դիսկուրսի մեթոդների արդյունավետությունը պայմանավորված է նաև բնական լեզուների բնորոշ յուրահատկությամբ, ըստ որի՝ որոշ լեզուներ

բաժանվում են երկու դասի՝ դիսկուրսային ուղղվածության և ոչ
դիսկուրսային լեզուներ: Առաջին խմբի լեզուների քերականական
կառույցները դիսկուրսի ազդեցության տակ են: Նման
լեզուներին

հատուկ են թեմառեմայի, ազատ շարադասության, հոլովների և զեղչման լայն կիրառություն: Սույն յուրահատկությունների հաշվառումը թույլ է տալիս նկատել, որ անգլերենին բնորոշ է ուղղվածություն դեպի դիսկուրսը, հետևաբար այս լեզվում զեղչման կառույցների մեծ բազմազանություն չկա: Այն լեզուները, որոնց հատուկ է դեպի դիսկուրսը բնական ուղղվածություն, ունեն զեղչման բազմաթիվ կառույցներ, ինչի շնորհիվ մենք կարող ենք լուսաբանել զեղչումը տարբեր քերականական կադասարներում: Այդ լեզուներում զեղչումը շատ հաճախ նույնիսկ պարտադիր է, քանի որ միայն զեղչման շնորհիվ է դիսկուրսի կառուցվածքը դառնում ամբողջական:

Փորձ անելով ներկայացնել զեղչման յուրահատկությունները՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև այնպիսի երևույթների, որոնք անմիջական կապ ունեն սույն լեզվական երևույթի հետ: Այսպես՝ ուղիղ և հակադիր վալենտականության միջոցով հաղորդակցության ընթացքում խոսքնկերներին հաջողվում է ընկալել զեղչված միավորը: Ուղիղ վալենտականության դեպքում առկա է այնպիսի փոխդասավորվածություն, երբ զեղչվում է կառույցի երկրորդական բաղադրիչը, և գլխավոր բաղադրիչի շնորհիվ կարողանում ենք ընկալել նախադասության իմաստը, մինչդեռ հակադիր վալենտականությունը պարտադիրում է այնպիսի փոխդասավորվածություն, երբ զեղչվում է կառույցի գլխավոր անդամը, և նախադասության իմաստը ընկալելի է դառնում երկրորդական բաղադրիչների շնորհիվ:

Անգլերենում լայն կիրառություն ունեն բայի բաղադրիչի զեղչումը (VP Ellipsis), երբ օժանդակ բայը ընկալելի է դարձնում զեղչված բաղադրիչը, ինչպես նաև ենթակայի զեղչումը, երբ դիմավոր բայածևը բացահայտում է գործողություն կատարողի ինքնությունը: Սրանք ուղիղ վալենտականության դրսևորում են: Հակադիր վալենտականության դեպքում կառույցի գոյական - անդամն է զեղչվում, և զեղչված նախադասությունը հասկանալի է դառնում լրացման միջոցով: Ուղիղ և հակադիր վալենտականության դրույթը լայն կիրառություն չունի անգլերենում, քանզի այն առաջ է քաշվել ռուս լեզվաբանների կողմից և առավել ասես կիրառվում է

ռուսական տեսություններում (Mcshane 2005:132):

Չեղջ ման	քննարկումը	առանձնահատկությունների	պարտադրում	է նաև
զուգահեռ	քերականական	կառույցների	վերլուծություն:	
Ուսումնասիրությունը	ցույց է			

տալ իս, որ զուգահեռականությունը կարող է միաժամանակ մի քանի տարբեր մակարդակներում գործել: Ինչպես գիտենք, զուգահեռ քերականական կառույցներում այս կամ այն լեզվական միավորը համատեքստում զեղչելու համար կան շարահյուսական և իմաստային որոշ սահմանափակումներ: Այսպես՝ երկու համադաս նախադասության մեջ, օրինակ, միշտ չէ, որ կարելի է բայը զեղչել դրանցից երկրորդում: Օրինակ՝ *John rides his bike in the park and Mary is on the boardwalk* կառույցում *ride* բայի զեղչումը քերականորեն ճիշտ է, մինչդեռ *John rides his bike in the park and Mary is with pleasure* նախադասության մեջ սույն բայի զեղչումը ճիշտ չի դիտվի, քանի որ նախդիր պարունակող կառույցները իմաստային տարբեր խմբերի են պատկանում (Mcshane 2005:20):

Սույն ենթագլխում հարկ ենք համարում անդրադառնալ նաև շաղկապային

համադասությամբ կառույցների զեղչման վերլուծությանը, քանի որ զեղչված միավորների յուրահատկությունների քննարկումը մեզ թույլ կտա ավելի լավ պատկերացնել սույն երևույթը: Շաղկապային համադասություն ունեցող նախադասություններում զեղչում իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ շարահյուսական և իմաստային որոշակի զուգահեռ կառույցներ: Որոշ լեզվաբաններ նշում են, որ ըստ ավանդական մոտեցման՝ շաղկապները պետք է պատկանեն նույն դասին: Ինչպես ուսումնասիրություններն են վկայում, սույն մոտեցումը չի կարելի ընդունելի համարել (Sag, Gzdar, Weisler 1985: 140): Յետևյալ նախադասության մեջ համադաս շաղկապը միավորում է առաջին հայացքից անհամատեղելի թվացող միավորներ՝ *She teased me and you know what else? She pulled my hair*:

Ինչպես գիտենք, համադաս նախադասությունները կարելի է բնորոշել շաղկապավոր և անշաղկապ: Անգլերենում հիմնականում ուսումնասիրության առարկա են շաղկապավոր համադասություն ունեցող նախադասությունները, մինչդեռ մյուս լեզուներում գերիշխում են անշաղկապ համադաս նախադասությունները: Մ. Միթընն իր միջլեզվական ուսումնասիրության արդյունքում հանգում է այն համոզման, որ որոշ լեզուներին հատուկ է համադաս շաղկապների պարտադիր կիրառությունը, իսկ ուրիշներում

համադասությունը ձևաբանորեն է դրսևորվում, մինչդեռ կան
լեզուներ, որոնք զուրկ են համադասության շարահյուսական
ցուցիչներից: Այն լեզուները, որոնք

ի սկզբանե չեն ունեցել շաղկապներ և հարադրել են նախադասությանը միայն հնչերանգի միջոցով, ժամանակի ընթացքում փոխառել են դրանք այլ լեզուներից (Mithun 1988:331-332): Այդ միտումը պայմանավորված է գրավոր խոսքի զարգացմամբ և դրա բանավոր խոսքին ազդելու ձգտմամբ, քանի որ գրավոր խոսքով չենք կարող վերարտադրել դադարները, հնչերանգը, ձայնի բարձրությունը, հետևաբար ստիպված ենք կիրառել շաղկապներ: Միթընի հետազոտությունը կարևոր է այնքանով, որ այնտեղ հնչերանգը համարվում է համադասության դրսևորման միակ ձև: Ռ. Քըրքը, Ս. Գրինբաումը, Ջ. Լիչը և Ջ. Սվարթրիքը սույն խնդրի լուծումը տեսել են *and* շաղկապի կիրառության մեջ, որը, ըստ նրանց բավարար է, որպեսզի առաջադրված միավորները դիտվեն որպես անշաղկապ համադասություն ունեցող քերականական կառույցներ (Quirk, Greenbaum, Leech, Svartrik 1972): Ըստ վերոնշյալ ձևաչափի՝ հետևյալ նախադասություններից երկրորդը պետք է պարունակի առանց շաղկապի կապակցված մակաբայներ.

- a. *Slowly and stealthily, he crept towards his victim.*
- b. *Slowly, stealthily, he crept towards his victim* (Quirk et al. 1972: 550).

Չեղջման տեսական ամբողջական նկարագիր ներկայացնելու համար անհրաժեշտ է կարևորել համադասությանը վերաբերող երեք իրողություն (Mcshane 2005:23).

1. Թեև զեղչումը լուսաբանող բոլոր տեսությունները նշում են, որ համադաս

նախադասությունները միավորվում են շաղկապի միջոցով, ոչ միշտ է, որ դա այդպես է, և շաղկապի ազդեցությունը միավորների զեղջման վրա դեռ համակողմանի քննարկման կարիք ունի:

2. Շատ հաճախ խնդրահարույց է շաղկապավոր և անշաղկապ համադաս նախադասությունների տարբերակումը:

3. Խնդրահարույց է նաև բոլոր զեղջված լեզվական միավորների վերականգնումն ու դրանց ընկալումը, որպեսզի ամբողջական պատկերացում կազմենք զեղջման երևույթի մասին:

Չեղջման ավանդական սահմանումները պարտադրում են զեղջված միավորի վերականգնում: Օրինակ՝ *Mary went to the cinema and Tom o to the theatre* ասույթում

went գեղջված միավորը պետք է հնարավոր լինի վերականգնել հակառակ դեպքում չկաշարահյուսական գեղջում:

Չեղջման՝ որպես լեզվական երևույթի
առնաձևահատկությունների քննությունը

պահանջում է անդրադառնալ նաև իմաստային գեղջմանը, քանի որ դա նույնքան կարևոր է, որքան շարահյուսականը: Իմաստային գեղջմանը բնորոշ է երկույուրահատկություն, որոնց շնորհիվ էլ հնարավոր է դառնում տարբերակել այն շարահյուսական գեղջման տարատեսակներից: Ճարահյուսական գեղջման դեպքում անհրաժեշտ է նախևառաջ հարաբերակցել գեղջված միավորը և որևէ հարատեքստային ցուցիչ, մինչդեռ իմաստային գեղջումը պարտադրում է միայն կապ տեսնել գեղջված միավորի և իրական աշխարհից վերցված նշանակյալի միջև: Ի տարբերություն շարահյուսական գեղջման՝ իմաստային գեղջումը խթաններ է պարունակում, որոնք հնարավոր են դարձնում նշանակյալի ընկալումը: Սույն իմաստային խթաններից կարող են համարվել այն բառակապակցությունները, որոնք մեկնաբանություն են պահանջում, ինչպես նաև շարահյուսական կառույցներ, որոնց մեջ որոշ միավորներ բացակայում են: Նման իմաստային խթանների շարքին են դասվում նաև գոյաբանական հասկացություններում բացթողնված միավորները:

Ինչպես արդեն նշվել է, սույն ենթագլխի շրջանակներում քննության են առնվում շարահյուսական գեղջման տարատեսակները՝ համացանցային դիսկուրսի համատեքստում, քանի որ գեղջումը առանցքային լեզվական երևույթ է համացանցային հաղորդակցությունը արդյունավետ և անխափան իրականացնելու առումով: Փաստական նյութի վերլուծության մեջ կփորձենք լուսաբանել հետևյալ խնդիրները.

- որքանով է համացանցային հաղորդակցության ժամանակ գեղջումն արդյունավետ լեզվական տնտեսման տեսանկյունից,
- հատկապես ո՞ր լեզվական միավորներն են հիմնականում գեղջվում, և համացանցային դիսկուրսի հաղորդակցական ինչպիսի՞ իրադրություններում է գեղջումը կիրառվում որպես լեզվական տնտեսման միջոց,
- արդյո՞ք սույն միավորները հեշտ ընկալելի են և թյուրիմացությունների, հաղորդակցական ձախուղումների առիթ

չ են դառնում:

Քննության առնելով շարահյուսական զեղչման՝ որպես լեզվական երևույթի առանձնահատկությունները՝ կարելի է վստահաբար ասել, որ այն կանոնակարգված որոշակի չափորոշիչների ենթարկվող երևույթ է: Շարահյուսական տեսությունների շրջանակներում սահմանվում են զեղչման հետևյալ տարատեսակները՝ նախադասության զեղչում, բայի և վերջինիս լրացման զեղչում, գոյականների զեղչում (Halliday 2000): Շարահյուսական զեղչման թվարկված միավորներն իրենց հերթին բաժանվում են մի քանի տարատեսակների: Համացանցային դիսկուրսից քաղված փաստական նյութի քննությամբ կփորձենք պատասխան գտնել մեր կողմից առաջադրված հարցադրումներին, ինչպես նաև համակողմանի վերլուծությամբ համակարգել զեղչման տեսակներն ու դրանց առանձնահատկությունները:

Նախադասության զեղչումը անմիջականորեն առնչվում է նախադասության եղանակի, մասնավորապես՝ հաղորդակցության ժամանակ այն/ոչ հարց ու պատասխանի հետ: Այսպես՝ կարող ենք տարբերակել զեղչման երկու տարատեսակ՝ **այն/ոչ** հարցերի զեղչում և “*wh*” հարաբերական դերանվամբ կազմվող մասնավոր հարցերի զեղչում:

Ինչպես արդեն նշել ենք, անգլերենում առկա են չորս քերականական կադապարներ, որոնցում բացի մեկ բաղադրիչից (stripping) հնարավոր է բայի զեղչում իրականացնել, մասնավոր հարցերի ամբողջական զեղչում, որտեղ պահպանվում է հարցական դերանունը (sluicing) և բայի լրացման զեղչում (VP): Քննենք դրանք:

Բացակը (*gap*) սահմանվում է որպես զեղչման գործընթաց, որտեղ բայը և


վերջինիս լրացումներից մեկը զեղչվում են համադասական նախադասության մեջ (Johnson 2001): Օրինակ՝ *The soprano sang the high and the tenor = the low tones* նախադասության մեջ կան քերականական գուգահեռ կառույցներ, որոնք էլ հնարավորություն են տալիս զեղչել ու բայը և վերջինիս խնդիրը, քանի որ գուգահեռ կառույցի բայը նախադասության սկզբում բացահայտում է գործողության բնույթը: Այլ կերպ ասած՝ զեղչում ցույց տվող բացակի կողքին պետք զետեղված լինեն նախադասության այնպիսի միավորներ, որոնք թյուրիմացությունների տեղիք չեն տա: Այս դրույթի վրա

հիմնվելով՝ կարելի է ասել, որ զեղչման բացակ (elliptical gapping)
հնարավոր է գտնել միայն համադասական նախադասություններում
և ձևի պարագա


ուսեցող կառույցներում: Չեղջման բացակը հնարավոր է միայն այն դեպքում, եթե նախորդող նախադասության հարաբերյալը բացահայտէ: Քննենք համացանցային դիսկուրսից վերցված հետևյալ նմուշը.

The Raven was always my favorite01/08/2017

 7:52:am guest*G : 🍌01/08/2017 7:52:am

 guest*G : Mine too01/08/2017 7:52:am

 Pepsi*G : 🍌01/08/2017 7:52:am

 maniac*G : mine golden bug01/08/2

Դիսկուրսի վերոնշյալ հատվածը համաժամանակյա հաղորդակցական նմուշ է,

որտեղ զեղչված միավորի իմաստն ընկալելի է նախորդող հարաբերյալի շնորհիվ: Լայն հարատեքստի ընդգրկմամբ հասկանում ենք, որ հաղորդակցվողները քննարկում են Է. Ա. Պոյի ստեղծագործությունները, և ի պատասխան սույն մեկնարկային ասույթի (*The Raven was always my favorite*)՝ անանուն օգտատերը նույնպես իր հավանությունն է տալիս մյուս անանուն օգտատիրոջ գրական նախասիրություններին՝ կիրառելով *mine too* զեղչված ասույթը, որտեղ բացակայում է *is* բայ հանգույցը: *maniac*G* անունով օգտատերը կրկին կիրառում է զեղչված ասույթ, որի իմաստը նույնպես հասկանալի է մեկնարկային ասույթում բայ հանգույցի առկայության շնորհիվ:

Լեզվական տնտեսման ակնհայտ նմուշներ են ստորև ներկայացված

ասույթն
երը.

*CREEPERS
EERYWHERE*



angie:D

(20:41)

EVERYWHER

E

angie:D անունով օգտատերը, ցանկանալով ինչայել ժամանակը, ինչպես նաև իր խոսքն ավելի ազդեցիկ դարձնելու նպատակով, զեղչված

ասույթ է ներկայացնում գլխատառերով, որով իր բողոքն է հայտնում իրեն թաքուն հետևող օգտատերերին:

Յատկանշական է, որ երկու ասույթներում էլ զեղչվել է *are* բայ - հանգույցը: Այլ կերպ՝ սույն ասույթներում տեղ է գտել զեղչման տարբերակը, որը մեր ատենախոսության մեջ կոչել ենք բացակ (gapping): Բացակի օրինակի հանդիպում ենք համաժամանակյա հաղորդակցության մեկ այլ նմուշում.

(Melvin123): @Nicchi, have you met tat chief personally3:02:am

□ Nicchi: no lol were just friends3:02:am

□ @Nicchi, friends with any benefits? am always curious when it comes to pretty chics 🤔3:03:am

(Melvin123)-ը անձնական բնույթի տեղեկատվություն է փորձում ստանալ Nicchi-ից,

իսկ վերջինս, իր հերթին կիրառելով *no lol* ասույթը, որտեղ զեղչված են *I haven't met* և զվական միավորները, հերքում է իր սիրային կապը մեկ այլ օգտատիրոջ հետ: (Melvin123)-ը, շարունակելով հետաքրքրվել Nicchi-ի անձնական կյանքով, կիրառում է բացակ պարունակող ասույթ, որտեղ կրկին զեղչված են *are* բայ-հանգույցը և *you* անձնական դերանունը, որը պետք է ստանձներ ենթակայի պաշտոնը:

Բայական զեղչման մեկ այլ տարատեսակ ենք բացահայտում այն դեպքերում, երբ համադասական կառույցներում, բացի մեկ բաղադրիչից, զեղչվում են բոլոր միավորները (*stripping*):

Յնարավոր է զեղչել միայն այն

միավորները, որոնք նախադասության սկզբում չեն (Mcshane 2005:143): Օրինակ՝ *Neighbors often come to visit her and sometimes relatives*՝

Չեղչման սույն տարատեսակը առանձնանում է հետևյալ յուրահատկություններով. հարաբերյալը դրված է զեղչված միավորից առաջ: Նման զեղչում անհնար է իրականացնել

ստորադասական նախադասություններում: Յամացանցային դիսկուրսի հետևյալ նմուշում նկատելի է զեղչված կառույցի մեկ այլ տեսակ, որի բուն գործառույթը կրկին ստեղնաշարը

խնայելն է, ինչպես նաև հաղորդակցության գործընթացն անխափան իրականացնելը.

□ Giggling like a bitch9:43:am

▯ **MoltenIron:** Well who
wouldn't...?

Այս հաղորդակցական նմուշում կա գեղջման երկու տարբերակ: Մեկն արկային ասույթում օժանդակ բայի հետ մեկտեղ գեղջված է ենթական: Համատեքստային և հարատեքստային ցուցիչների շնորհիվ պարզ է դառնում, որ խոսողն իրեն նկատի ունի: Ի պատասխան մեկն արկային ասույթի՝ **MoltenIron**, օգտատերը բազմակետի կիրառմամբ, ինչպես նաև բայի մասնակի գեղջմամբ (*stripping*) իր հավանությունն է տալ իս հաղորդակցական իրադրությունը, քանի որ, ըստ նրա, սույն իրավիճակը իսկապես ծիծաղաշարժ է: Ինչ վերաբերում է բազմակետերին՝ բազմաթիվ շարահյուսագետներ այդ կետադրական նշանի գործառույթը սահմանում են որպես ասույթի գեղջման կամ մեջբերման միջոց: Հատկանշական է, որ այս կետադրական նշանը սույն գործառույթները կարող է ունենալ թե՛ գեղարվեստական տեքստերում, թե՛ համացանցային դիսկուրսում: Ինչ խոսք, բազմակետի՝ գեղջման գործառույթը շատ ավելի լայն կիրառություն ունի համացանցային հաղորդակցությունում:

□ Բայի մասնակի գեղջումը բավականին հաճախակի է համացանցային հաղորդակցություն համաժամանակյա տարատեսակում: Ջ. Ռոսը, ուսումնասիրելով հարցական նախադասության գեղջմանյուրահատկությունները առաջադրում է բացթողում (*sluicing*) գիտաբանը, երբ գեղջվում է հարցական նախադասությունն ամբողջությամբ, և պահպանվում է միայն *wh* հարցական դերանունը (Ross 1969):

Ըստ ՄակՇեյնի (McShane 2005: 160)՝
 շարահյուսական գեղջման այս տիպի

առանցքային հատկանիշներն են.

- *wh*-ով սկսվող լեզվական միավորը սովորաբար ընձեռում է հնարավորություն գեղջում իրականացնել:
- Այլ բառային միավորներ, որոնք ասույթում լրացուցիչ անդամներ են կամ պաշտոն ունեն (that, whether, if, for), չեն կարող գեղջման հնարավորություն ընձեռել:
- Նշանակյալը կարող է նախորդել գեղջված միավորին կամ գետեղված լինել դրանից հետո:
- Նշանակյալը կարող է բացահայտ շարահյուսական միավոր կամ

գործաբանորեն հեշտ ընկալվող ներակալեգվական տարր լինել, երբ հաղորդակցական իրադրության մասնակիցները ցուցայնության միջոցով ընկալելի են դարձնում նշանակյալը: Օրինակ՝ (հաղորդակցությունը տեղի է ունենում հագուստի խանութում) հաճախորդն այսպես է

արտահայտվում իրեն առաջարկվող զգեստի մասին. *If you tell me how much, I'll tell you if I like it.*

□ Չեղչման թիրախը ոչ թե ասույթի գլխավոր անդամն է, այլ ասույթն ամբողջությամբ է զեղչման ենթակա: Օրինակ՝

lol i guess friskers21:56:pm

brent: i couldnt go thru that21:56:pm

brent: i wouldnt

22:00:pm

brent: i feel sorry for smitty in a way22:00:pm

Friskers: @brent, why????

Չամաժամանակյա դիսկոլրսից քաղված տվյալ օրինակում զեղչման մի տարատեսակ է, երբ հարցական *why* դերանունից բացի զեղչված են ասույթի մնացած անդամները՝ *do* օժանդակ բայը, *You* անձնական դերանունը, *feel* բայ-հանգույցը և *sorry* ստորոգելիական վերադիրը:

Ստորև ներկայացվող համաժամանակյա դիսկոլրսից քաղված հատվածը նույն-պես զեղչման վերոնշյալ տարատեսակից է, որը լեզվական տնտեսման արդյունավետ միջոց է. համաժամանակյա հաղորդակցությունն իրականում է առանց որևէ արգելքների.

terry: dont like him?7:10:am

Nicchi: no7:11:am

terry: wow never met anyone that didnt like

him7:11:am terry: *why not?*7:11:am

Nicchi: lol wait whats one of his songs7:12:am

terry: rockin the free world7:12:am

Nicchi: ye no lol7:13:am

Nicchi: *idk why*

Այս հաղորդակցական նմուշի քննության ընթացքում, որ հաղորդակցվողները կիրառում են գեղջման մի քանի տարատեսակներ մեկ խոսքային իրադրությունում: Այսպես՝ մեկնարկային ասույթում գեղջված է ենթական: Հաղորդակցությունը եզրափակող Nicchi: *idk why* ասույթում կա բացթողում (sluicing) պարունակող գեղջում, որտեղ գեղջված է մի ամբողջ ասույթ (*why I don't like him*)՝ բացի *why* հարաբերական դերանունից:

Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ գեղջման սույն տարատեսակին հատուկ

են բնութագրական որոշակի գծեր, որոնց շնորհիվ ավելի հստակ պատկերացում կարելի է կազմել դրա յուրահատկությունների մասին:

Քննելով բայի գեղջման դեպքերը՝ բացահայտում ենք բայական գեղջման մեկ այլ տարատեսակ ևս, որն իր կարևորությամբ չի զիջում վերոնշյալներին: Սույն տարատեսակը առանձնանում է նրանով, որ գեղջվում են թե՛ բայը և թե՛ վերջինիս լրացում խնդիրը: Բայական գեղջման հետևյալ օրինակներում գեղջումը հնարավոր է դառնում միայն անմիջապես նախորդող օժանդակ բայի շնորհիվ: Օրինակ, 1. *Jane doesn't watch football, but Jack does*, 2. *Jane reads French novels, but Jack doesn't*: Բայի և վերջինիս լրացման գեղջումն առանձնանում է հետևյալ հատկանիշներով (Mcshane 2005:146).

□ Եթե հարաբերյալը շարահյուսորեն հեշտընկալելի միավոր է, ինչը բացահայտերևում է ասույթում, ապա անհրաժեշտ է, որ վերջինս նախորդի գեղջված միավոր պարունակող նախադասությանը: Օրինակ, *“I'm not going”*. *“Ok, if you aren't, then I'm not either”*.

□ Եթե հարաբերյալը շարահյուսորեն ըմբռնելի է, ապա բոլորովին պարտադիր է, որ

վերջինս նույնական լինի գեղջված միավորի հետ: Օրինակ, *“Bill defended himself against the accusations because his lawyer couldn't”* (սույն օրինակում հարաբերյալը պարունակում է *himself*, մինչդեռ եթե վերականգնենք գեղջված միավորը, ապա այդ դեպքում կունենանք *him*):

□ Հարաբերյալը կարող է ընկալվել իրական աշխարհի հարատեքստային իրադրության

շնորհիվ: Պատկերացնենք հետևյալ հաղորդակցական իրադրությունը. խոսողը պատրաստվում է ցատկել ջրացանկի

աշտարակից, բայց ընկրկում է և արտաբերում հետևյալ ասույթը՝ *“Oh, I just can't e”*

- Չեղչված բայը կամ վերջինիս լրացումը կարող է և նախորդել հարաբերյալին: Օրինակ, *“It’s your fault. I know that you didn’t mean to ^e, but you did it”*.
 - Չեղչում պարունակող նախադասությունը հնարավոր է ստորդաս հարաբերություն
- ուներևա հարաբերյալ նախադասության հետ: Օրինակ, *“We are not **going to that movie**, because my husband doesn’t want to^e”*:

հնչաբնական է փաստական նյութի
վերլուծությունը, համացանցային

դիսկուրսում գեղջման այս տարատեսակը չափազանց արդյունավետ և կիրառելի միջոց է լեզվական տնտեսման առումով, քանի որ օգտատերերին ստեղծաշարը խնայելու և հաղորդակցական գործընթացը տվյալ համատեքստում անխափան պահելու հնարավորություն է ընձեռում:

3.2 Հապավումների և համառոտագրությունների գործաբանական- հանրալեզվաբանական դրսևորումները

Համացանցային դիսկուրսի մեր քննությունը չի կարող շրջանցել նաև համացանցային հապավումների ստեղծման և կիրառման իրողությունը, քանի որ վերջիններս դարձել են համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցության տարատեսակների անփոխարինելի բաղադրիչներ: Համացանցային տիրույթում նորաբանությունները և հապավումները ստեղծվում են նույն ավանդական սկզբունքներով: Կազմության առումով՝ դրանք նոր համարվել չեն կարող, քանի որ անգամ ամենատարօրինակ նորաբանությունները ստեղծվում են արդեն նախկինում սահմանված որոշակի կանոններով (Crystal 2004):

Ինչպես արդեն նշել ենք, հապավումները եղել են գրավոր լեզվի անբաժան մաս՝ իրենց տեղն ունենալով թե՛ տպագիր, թե՛ ձեռագիր տեքստերում (Baron 2010:98): Կարևոր է շեշտել այն փաստը, որ համացանցային հաղորդակցության ժամանակ դրանց գործառնությունը ժամանակ և էներգիա խնայելն է (Աղաջանյան 2013): Սակայն դրանց լայնատարած կիրառությունը պայմանավորված է նաև հասարակական գործոնով, այն է՝ օգտատերերը վերջիններիս կիրառմամբ նպատակ են հետապնդում ցույց տալու, որ համացանցային դիսկուրսի հմուտ լեզվակիր են կամ գիտակ: Ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցային դիսկուրսում համառոտագրությունները և տառային հապավումները գործածվում են՝ մատնանշելու անհատի՝ որևիցե համացանցային խմբին պատկանելը: Մինչ համառոտագրությունների և հապավումների ծագումնաբանական առանձնահատկություններին անդրադառնալը, խիստ կարևոր է քննել դրանց գործաբանական, հանրալեզվաբանական գործառնությունը՝ համացանցային տարբեր տիրույթներում:

Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների վրա՝ պարզում ենք, որ համա-

ցանցային հաղորդակցությունը առերես շփման նման առանձնանում է որոշակի հաստատված նորմերով, որոնցով ստեղծվում են սոցիալական հարաբերություններ, և ի հայտ է գալիս

հաղորդակցվողների մշակութային ինքնությունը: Թըրլոուն և
Բրաունը,

քննելով համացանցային դիսկուրսի յուրահատկությունները, ներկայացնում են դիսկուրսի սույն տարատեսակը բնութագրող չափորոշիչներ, որտեղ շեշտվում են հաղորդագրությունների հակիրճ լինելու կարևորությունը, հարալեզվական միջոցների բացը լրացնելու տեքստային և կետադրական միավորների կիրառումը, ուղղագրական նորմերի միտումնավոր խեղաթյուրումը, ինչպես նաև համառոտագրությունների և հապավումների հաճախեպությունը (Thurlow & Brown 2003):

Մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս նկատել, որ ինչպես լեզվական միավորները, այնպես էլ հապավումներն ու համառոտագրությունները կարող են օգտատերերի մասին որոշակի տեղեկատվություն հաղորդել: Այսինքն՝ որքան հազվադեպ հապավում, համառոտագրություն է կիրառվում, այնքան ավելի ակնհայտ է օգտատիրոջ հաղորդակցական հմտությունը:

Նախ ներկայացնենք համառոտագրությունների և հապավումների միջև առկա հիմնական տարբերությունները: Նման անդրադարձը պայմանավորված է այն փաստով, որ սույն լեզվական միավորները լայն կիրառություն են գտել համացանցային լեզվական միջավայրում, և դրանց ծագման լուսաբանումը էական է դիտվում նոր ի հայտ եկած հապավումների ու համառոտագրությունների լեզվական առանձնահատկությունների քննության համատեքստում: Ինչպես գիտենք, նորարարական տեխնոլոգիաների զարգացումը մեծ դեր է խաղացել հապավումների տարածման գործում, քանի որ օգտատերերը, ցանկանալով խնայել ժամանակը, դիմել են դրանց օգնությանը:

Կարճ հաղորդագրությունները կարող են համարվել հաղորդակցության դյուրին միջոցներ, քանի որ հաղորդակցվողները, որոնք կատարում են այլ գործողություններ՝ հեռուստացույց են դիտում, դասախոսություն լսում կամ ճամփորդում, կարող են հաղորդակցվել կարճ հաղորդագրությունների միջոցով (Hortstmannshof and Power 2005): Ուստի դրանց դերը մեծ է եղել լեզվի, մասնավորապես համացանցային լեզվի

ձևավորման մեջ: Կարճ հաղորդագրությունների

յուրահատկություններից է գրանշանների սահմանափակումը (160
նիշ), որի պատճառով գրուցակիցները դիմում են հապավումների և
համառոտագրությունների օգնությամբ՝ ժամանակի ընթացքում
ստեղծելով նորերը: Կարճ հաղորդագրությունների սեղմ, խտացված
ձևաչափը և սահմանափակ

գրանշանները պետք համապատասխանեցված լինեն հապավումների և համառոտագրության ներքին կիրառության նորմերին: Ուստի հիմնվելով փորձի և ցանցային տեղեկատվության յուրահատկության վրա՝ պահանջվում էր ստեղծել միատարրություն: Այս առումով պարզվում է, որ հաղորդակցվողները գերադասում են գործածել կարճ հաղորդագրություններ:

21-րդ դարում համացանցից օգտվողների թիվը բազմապատկվել է և հնարավորություն տվել հաղորդակցվողներին տարբեր ծրագրերի միջոցով ուղարկել թե՛ ձայնային, թե՛ կարճ հաղորդագրություններ, ընդ որում, սույն ծրագրերը օգտատերերին հնարավորություն են ընձեռում միաժամանակ կիրառելու վերոնշյալ հաղորդագրությունների երկու տեսակները: Այս ոլորտում կատարված վերջին հետազոտությունները փաստում են, որ կարճ հաղորդագրությունները հիմնականում կիրառվում են տարիքային և մշակութային նույն խումբը ներկայացնող գրուցակիցների՝ տվյալ պարագայում համաժամանակյա տիրույթում հաղորդակցվողների կողմից, որոնք պետք է անհրաժեշտ հենքային գիտելիք ունենան կիրառվող համացանցային հապավումների մասին, որպեսզի վիճակի լինեն վերծանելու դրանց արտահայտած իմաստը: Ուստի հապավումների և համառոտագրությունների զարգացման տեմպը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են համացանցային գրագիտությունը, հենքային գիտելիքը, գրուցակիցների մշակութային պատկանելությունը, նրանց տարիքային խումբը և այլն:

Համառոտագրությունների և հապավումների ծագումնաբանությանը վերաբերող

հիմնախնդիրների քննությունից պարզ է դառնում, որ հապավումներն առաջացել են համառոտագրություններից: Համացանցային լեզվաբանության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները բացահայտում են սույն լեզվական միավորների միջև եղած տարբերությունները, ինչն էլ իհարկե պայմանավորված է համացանցային դիսկուրսի ի հայտ գալու գործոնով: Մի շարք համացանցային բառարանների ստեղծումը դրական խթան դարձավ համացանցային տիրույթում կիրառվող հապավումների և համառոտագրությունների քննությունը

մեթոդաբանական առումով առավել հիմ- նավոր իրականացնելու գործում: Համառոտագրությունների ու հապավումների այնպիսի գլխավոր տարբերությունների բացահայտումը, ինչպիսիք են
լեզվական

միավորների և եզրաքանակական բաղադրիչների ընտրությունը, բառակապակցությունների կրճատումը և այլն, հնարավորություն տվեց մեթոդաքանակական առումով ճիշտ հիմքերի վրա դնել համառոտագրությունների ու հապավումների քննության խնդիրները (Աղայան 1979): Եզրույթներից, հատուկ և հասարականուններից բացի՝ կարող են համառոտագրվել նաև առանձին բառեր: Ինչպես գիտենք, համառոտագրությունները կարդացվում են որպես ամբողջական միավորներ, մինչդեռ հապավումները ներկայացվում են կրճատ ձևով: Յետաքրքական է նաև այն, որ համառոտագրությունները բառեր չեն կազմում, իսկ հապավումներից ստեղծվում են հատուկ տիպի բաղադրյալ բառեր:

Համառոտագրությունները ստեղծվում են, երբ կճատվում է բառի սկզբնամասը,

վեջնամասը կամ միջնամասը: Առցանց հաղորդակցության ժամանակ հապավումները մեծ դեր են խաղում բառաստեղծման գործում: Համացանցային լեզվաքանության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ համացանցային դիսկուրսում գոյություն ունեն կրճատման մի քանի հիմնական ձևեր: Ելնելով արդեն իսկ հաստատված նորմերից՝ կարելի է առանձնացնել համառոտագրությունների և հապավումների ստեղծման հետևյալ օրինաչափությունները.

1. սկզբնամասի կրճատում *u (you), ur(you are կամ your),*
@goki, hahahaha u got that right cause that where we @AsianGirl1987, came so like the other 17 names u use but u will freeze to death brr
2. միջնամասի կրճատում **(Skyhigh):** *Silence for two min plz(please)*
Ինչպես տեսնում ենք բերված ասույթում առկա է թե՛ միջնամասի և թե՛ վեջնամասի կրճատում:
3. վերջնամասի կրճատում:
sheetmetalman: its going bro, be prepared for the new room, its called tardville4:46:am

Բերված համացանցային համաժամանակյա օրինակում դժվար չէ նկատել, որ առկա է բառավերջի կրճատում: Հայտնի է, որ սույն

միջոցը լայն տարածում ունի նույն- իսկ առերես հաղորդակցությունն իրականացնելիս: Համացանցային հաղորդակցության մեջ ի հայտ է եկել քերականական կրճատման նոր ձև, որը գրեթե գոյությունն չունի գրական անգլերենի տարատեսակներից որևիցե մեկում.

y'all niggas fake y'all was just saying NBA Youngboy was involved in this indecent..... WHAT?

Տվյալ նմուշի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է բառավերջի կրճատում ապաթարցի միջոցով, որը կարելի է նորերևույթ համարել քերականական կրճատման մեջ:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր դիսկուրսում տարբեր հապավումներ իրակա-

նացնում են տարբեր գործառույթներ՝ կախված իրադրային նպատակից (Աղաջանյան

2013). Այսպես՝ անվանական կրճատմամբ ստեղծված լեզվական նոր միավորը կարող է դառնալ նոր բառ՝ ընդգրկվելով տպագիր և առցանց բառարաններ: Օրինակ՝ FAQ (frequently asked questions) հապավումն իր տեղն է գտել բացատրական բառարաններում և համարվում է համացանցային գիտաբառ:

Մեղմասական հապավումները հնարավորություն են տալիս գռեհկա-բանությունները փոխարինել հապավումներով հատկապես առցանցային կայքերում: Օրինակ՝ WTF (*what the fuck*) որպես մեղմասություն կարելի է նաև վերծանել որպես *what the fun*: Սակայն պետք է նշել այն փաստը, որ վերջին շրջանում ի հայտ են եկել սույն հապավման այլ ձևեր նույնպես, որոնք կիրառվում են համացանցային հաղորդակցության մեջ: *What* հարցական դերանունը հաճախ փոխարինվում է *why, who, when where* և անգամ *whatever* դերանուններով: Օրինակ՝

Bro drop this when I was sleep wtf.

Սույն օրինակը, համացանցային տարածամասնակյա հաղորդակցության նմուշ է, որտեղ օգտատերը, կիրառելով *wtf* հապավումը, մեկնաբանություն է տալիս աֆրո-ամերիկյան երգչի կատարմանը: Այստեղ *wtf* հապավման ներիմաստը պարզ է, քանի որ, ըստ համատաքեստի և հարատեքստի, մենք չենք կարող կռահել, թե օգտատերը ինչու է գործածել սույն հապավումը: Հետաքրքրական է նաև այն, որ այստեղ չի գործում ժամանակների համաձայնեցում, որը անգլերենում պարտադիր է:

Մեղմասական հապավման օրինակներ կարող ենք գտնել թե՛

համաժամար-

նակյա, թե՛ տարածամանակյա հաղորդակցության տարատեսակներում:

Մեկ այլ մեղմասական հապավման օրինակ է *pos* միավորը: Այսպես՝

Untalented pos that needs his throat slit. Post Malone could've gotten ANYONE else on it. But settled for that fag....

Բերված նմուշում օգտատերը իր բացասական վերաբերմունքն է արտահայտում

Post Malone կատարողի մասին՝ կիրառելով *pos (piece of shit)* հապավումը: Հատկանշական է, որ մեկ ասույթում առկա են մեղմասական նրբերանգներ պարոլ - նակող հապավում *pos-ը* և համառոտագրություն՝ *fag*, ընդ որում վերջինը որոշակի բազմիմաստություն ունի. մի կողմից կարող է կիրառվել որպես գոյական՝ *անուշադիր, ջղայնացնող անձ* իմաստով, մյուս կողմից իրացվել համատեռամուլ նշանակությամբ և արտահայտել խոսողի վիրավորական վերաբերմունքը: Հետաքրքրական է, որ նույն *fag* միավորը որոշ դեպքերում, կախված հարատեքստից, կարող է հանդես գալ որպես *Freaky Alien Genotype-ի* հապավում՝ *այլ մոլորակայինի տարօրինակ ժառանգ* իմաստով:

Մեղմասական հապավումները կարող են նաև ձևաբանորեն խոացնել տեքստը, որն, իհարկե ավելի է դժվարացնում ասույթի արտահայտած իմաստի ընկալումը, ինչպես օրինակ *JFGI (just fucking google it)* ասույթում: Խոացնող հապավման մեկ այլ օրինակ ապացուցում է, որ ասույթի իմաստը կարող է ընկալելի չլինել հաղորդակցվողների համար, քանի որ այն այնքան էլ լայն կիրառություն չունի: Օրինակ, *NOYB (none of your business)* հապավումը ձևաբանորեն խոացնում է տեքստը, քանի որ տվյալ հապավման մեջ կրճատվել են ժխտական և ստացական դերանունների, կապի, ստացական դերանվան և գոյականի վերջավորությունները:

I had to listen to this song 20 times in a roll nbs

Սույն ասույթում հապավումը վերցված է youtube սոցիալական կայքից: Այստեղ *nbs (no bull shit կամ nigger bull shit)* հապավման ներիմաստը պարզ չէ, քանի որ այստեղ կարող է կրճատված լինել ժխտական դերանունը կամ գոյականը:

Տեղեկատվական հապավումները,
լինելով ասույթի բաղադրիչ,
լրացուցիչ տեղեկություն են հաղորդում
ասույթի վերաբերյալ: Օրինակ՝ *YAM (Yet another meeting):*

Մետահաղորդակցական հապավումները, մուտք գործելով ասույթ, հաղորդակցության մաս են կազմում: Դրանց շարքին կարող են դասվել այն հապավումները, որոնք սկզբնապես եղել են տեղեկատվական: Օրինակ՝ *LOL (laugh out loud)*: Մետահաղոր-

դակցական հապավման մեկ այլ օրինակ է *tbh-ը (to be honest)*, որը վերցված է տարածամասակյա հաղորդակցության նմուշից: Այսպես՝
This song deep as hell tbh.....

Պետք է նշել, որ օգտատերերը ինչ-որ չափով կարող են վերծանել հապավմանների ներիմաստը, սակայն սույն լեզվական միավորները կարող են նաև հանդես գալ որպես զուտ դիսկուրսի նշույթներ:

Հապավումները համացանցային հաղորդակցության մեջ չեն սահմանափակվում բառերի կամ արտահայտությունների սկզբնական տառերի կրճատմամբ: Օրինակ՝ գրույցներում կարող են կրճատվել, հապավվել ամբողջական նախադասություններ: Հաղորդակցովողները հիմնականում որոշակի պատկերացում ունեն այդ հապավումների մասին, սակայն դրանց որոշ մասը ժամանակի ընթացքում դուրս է մղվում լեզվից, և իհայտեն գալիս նորերը:

Հաշվի առնելով համացանցային հապավումների բազմիմաստությունը

իրողությունը՝ գտնում ենք, որ հաղորդակցությունը հաջող իրականացնելու համար և հապավումների ներիմաստը ըմբռնելու համար անհրաժեշտ է օգտվել համատեքստային և հարատեքստային ցուցիչների ընձեռած հնարավորություններից: Այնհայտ է, օրինակ, որ *t.c* հապավումը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել (*take care կամ too cool*)՝ կախված հաղորդակցական իրադրությունից: Ինչպես տեսանելի է համատեքստից, *t.c*-ն փոխարինում է հաղորդակցության ավարտ նշող *take care* միավորին, այսինքն՝ հրաժեշտի արտահայտություն է.

iceheart : great 🍷🍷🍷

tc maniac

Սույն համատեքստակյա ասույթում հաղորդակցովողները քննարկում են Հիչբոքի նկարահանած «Խելագարը» գեղարվեստական ֆիլմը: Օգտատերը իր դրական վերաբերմունքն է արտահայտում ֆիլմի վերաբերյալ՝ գործածելով հապավման և հուզանշանի համադրություն: Սակայն եթե ասույթում չլիներ *great* ածականը, այն կարող էր թյուրիմացության պատճառ դառնալ, քանի որ 🍷🍷🍷 *cheers* հուզանշանն էլ իր հերթին բազմիմաստ է: Սույն ասույթում

Կրում է հավանության ներիմաստ, սակայն

ինչպես արդեն նշել ենք, այն կարող է նաև արտահայտել շնորհակալության կամ ցտեսության ներիմաստները:

Մեկ այլ օրինակում տեսնում ենք, որ համացանցային համաժամանակյա

հաղորդակցության լեզուն կարող է դժվարությունն ստեղծել այն օգտատերերի համար, որոնք սույն տիրույթում դեռևս հմուտ հաղորդակցվողներ չեն.

ILY

Bbl

Օգտատերը մեկ ասույթի մեջ կիրառում է երկու հապավում: Առաջինը էլեկտրոնային զրույցներում հիմնականում ունի *I love you* ներիմաստը, սակայն մյուս հապավման իմաստի վերծանմամբ հասկանում ենք, որ այս ասույթում վերջինս արտահայտում է *I am leaving you* իմաստը: Ուստի օգտատերերը պետք է որոշակի գիտելիք ունենան մինչև չատսենյակներում հաղորդակցությունն սկսելը:

Համացանցային համաժամանակյա հաղորդակցության ընթացքում որոշ

հապավումների ի հայտ գալը, իսկ մի քանիսի նաև դուրս մղվելը կախված են օգտատերերի նախասիրություններից, ինչպես նաև դրանց հետագա զարգացման փուլերից:

Համաժամանակյա դիսկուրսից քաղված փաստական նյութի վերլուծությունը

կարող է բացահայտել հաղորդակցվողների համացանցային գրագիտության մակարդակը, նրանց՝ համացանցային նորաբանություններին տեղյակ լինելու փաստը: Նման բացահայտում հնարավոր է հետևյալ ասույթում. *hi wc kimmmy* ասույթում կիրառված *wc (wrong conversation// web camera)* հապավումը կարող է թյուրիմացության հանգեցնել, քանի որ այն բազմիմաստ է: Ուստի հաղորդակցվողները պետք է հաշվի առնեն ավելի լայն հարատեքստ, որպեսզի ընկալելի լինի, թե ինչ է ցանկանում ասել զրուցակիցը: Օգտատերը չի կիրառել որևիցե կետադրական նշան, այդ իսկ պատճառով դժվար է հասկանալ՝ արդյոք ասույթը հարցակա՞ն է, թե՞ հաստատական, սակայն հարատեքստի միջոցով պարզ է դառնում, որ օգտատերը ցանկանում է իմանալ, թե Քիմին տեսախցիկ ունի՞:

Չամացանցայ ին դիսկուրսում հապավումների առկայությունը կարող է թյուրըմբռնման պատճառ դառնալ, եթե օգտատերը նորեկ է: Այսպես՝

sheetmetalmán: *ok, kimmmy, give you the benefit of the doubt, where are you from?3:58:am*

(kimmmy): @sheetmetalsman, PA3:58:am

Սույն նմուշում առաջին օգտատերը ցանկանում է իմանալ գրուցակցի բնակու - թյան վայրը, մինչդեռ վերջինս պատասխանում է նրան հապավման միջոցով: PA հապավումը այստեղ կիրառված է Փենսիլվանիա նահանգը նշելու համար: Սակայն այս հապավումը կարող է նաև ունենալ տղայի կամ ծնողներին խորհուրդ է տրվում իմաստը:

Ստորև բերվող ասույթի երկրորդ մասում երրորդ, օգտատերը գործածելով ներքոնշյալ ասույթը վիրավորում է Քիմի անունով օգտատիրոջը՝ նրան անվանելով ներցեղային խաչասերման արդյունքում ի հայտեկած արարած Փենսիլվանիայից:

Poe: didn't think PA had inbreds

(kimmmy): @juzzy29, WGO 5:00:am

Մեկ այլ օրինակում տեսնում ենք, որ Քիմին կիրառել է WGO (*what's going on*) հապավումը՝ առանց հարցական կետադրական նշանի: Պետք է նշել որ առցանց բառարաններում սույն հապավման բացատրության մեջ հարցական նշանը նույնպես բացակայում է: Ուստի կարող ենք փաստել, որ համացանցային հապավումների դեպքում հարցական նշանը պարտադիր չէ:

hello jazzy how r u4:47:am

I'm good hru4:47:am

Բերված նմուշում տեսնում ենք, որ համաժամանակյա հաղորդակցության մեջ օգտատերերը գործածել են թե՛ համառոտագրության և թե՛ հապավում: Առաջին օգտատերը կրճատել է բայի առաջին և վերջին մասը, որը կարող ենք նաև համարել հարանուն: Կարելի է նկատել, որ երկու օգտատերերն էլ խուսափել են կետադրական նշաններից:

Մեկ այլ օրինակում տեսնում ենք, որ համաժամանակյա հաղորդակցության մեջ հապավումների կիրառումը ոչ միայն տվյալ խմբային պատկանելության դրսևորում է, այլ և հետամուտ է ժամանակ խնայելու: Ինչպես տեսնում ենք, ներքոհիշյալ նմուշում հապավման գործածությունը ժամանակ խնայելու նպատակ է հետապնդում:

(Me Me Pick Me): x0raw0x what u up to5:07:am

x0rawr0x: *@(Me Me Pick Me), nm5:07:am*

Այս տեղ առաջին օգտատերը, կիրառելով սկզբնամասի կրճատում, [u (you)], ցանկանում է իմանալ *Me Me Pick Me*-ի որպիսություները, ընդ որում ասույթում զեղչված է լիիամաստբայը: Օգտատերերը պետք է բավականին հմուտ լինեն, որպեսզի հասկանան համացանցային հաղորդակցության ընթացքում կիրառված հապավումների կամ համառոտագրության ներքին իմաստը: Տվյալ օրինակում երկրորդ օգտատերը գործածել է *nm (not much/ nothing much)* հապավումը, որը ուրիշ խոսքային իրադրություններում կարող է նշանակել բոլորովին այլ բան: Ստորև ներկայացված նմուշը դրավառապացույցն է.

Don't worry when kids say u r ugly, it's not only u... including their mom, Give them what they want, n u will.be the most beautiful girl in their world

Սույն ասույթը քաղված է տարածամասկյա հաղորդակցության նմուշից, որտեղ ի հայտ է գալիս համառոտագրության ներքին բազմակի կիրառում: Ինչպես տեսնում ենք, օգտատերը կրճատել է դերանվան և բայ հանգույցի սկզբնամասերը, որպեսզի խնայի ստեղնաշարը և ժամանակը: Ակնհայտ է, որ վերոնշյալ օրինակում *n* տառը կարող է հանդես գալ թե՛ որպես հապավում և թե՛ համառոտագրություն: Այս նմուշում վերջինս գործածվել է որպես բառավերջի համառոտագրություն, որը փոխարինում է *now* ժամանակի մակբային: Ամփոփելով սույն գլուխը՝ հանգում ենք այն երզրակացության, որ համաժամանակյա հաղորդակցության մեջ զրուցակիցները կիրառում են զեղչում ժամանակը խնայելու, ինչպես նաև ավելի շատ տեղեկատվություն փոխանցելու նպատակով: Հատկանշական է, որ համատեքստի և հարատեքստի շնորհիվ հնարավոր է վերականգնել ասույթի զեղչված միավորը:

Լեզվական տնտեսման խիստ արդյունավետ միջոցներից են հապավումներն ու համառոտագրությունները: Այս լեզվական միավորները համացանցային դիսկուրսի անբաժան մասն են, և դրանց հիմնական նպատակն է խնայել ժամանակը և ցույց տալ օգտատիրոջ՝ որևիցե խմբին պատկանելը: Որոշ դեպքերում դրանք կիրառվում են բանավոր խոսքի նրբերանգները շեշտադրելու նպատակով:

ՆԱՆՈՒԹԱԳՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Օրինակում նշանը սովորաբար մատնանշում է զեղչված միավորը:
2. Պատահական չէ, հետևաբար, որ Կուլնոն, ինդիքը մեկնաբանելիս նշում է, թե գործառական շարահյուսությունը (դիսկուրսի քերականությունը) և սերող քերականության տեսությունը հակընդդեմ կողմեր չեն: Ենթադրենք՝ որևէ լեզվական երևույթ կարող է մեկնաբանվել միայն շարահյուսական գործոնների օգնությամբ: Այդ դեպքում թե՛ սերող քերականությանը հարողները և թե՛ դիսկուրսի քերականագետները այդ երևույթը կվերլուծեն միայն շարահյուսական բաղադրիչի հիման վրա: Եթե որևէ լեզվական երևույթ կարելի է մեկնաբանել և՛ դիսկուրսի, և՛ շարահյուսության տեսանկյունից, ապա ճիշտ կլինի շարահյուսական բաղադրիչը քննել շարահյուսության տեսանկյունից, մինչդեռ դիսկուրսիվ գործոնները, որոնք ուղղակիորեն առնչվում են այդ շարահյուսական առանձնահատկությանը, պետք է լուսաբանել դիսկուրսի բաղադրիչի հայեցակետից: Այլ կերպ՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ շարահյուսության ուսումնասիրության տիրույթից դուրս գտնվող երևույթների քննությունը սահմանափակել շարահյուսական տեսանկյունով սկզբունքորեն սխալ է (Kuno 1987: 1-2):

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Ամփոփելով մեր հետազոտությունը՝ եզրակացնում ենք, որ 21-րդ դարում նորարական տեխնոլոգիաների, մասնավորապես համացանցի և այնատարած կիրառումը չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ և եզրվի վրա: Համացանցի շնորհիվ իհայտ եկած հաղորդակցական նոր ձևաչափերը փոխեցին հաղորդակցության ավանդական միջոցները՝ դրանով ուսումնասիրության նոր դաշտ բացելով և եզրափակների, հանրաքանների, հոգեբանների համար:

Ուսումնասիրությունը պարզում է, որ համացանցային հաղորդակցությունն ընդհանրապես և անգլերեն հաղորդակցությունը մասնավորապես, դեռևս զարգացման փուլում և լինելով, արդեն իսկ առանձնանում է հստակ սահմանված նորմերով և հաղորդակցական մարտավարություններով, որոնք կարևորում են համագործակցային բաղադրիչը՝ այսպիսով խթանելով միջանձնյա հաջող հաղորդակցության իրականացումը:

Ինչպես առերես, այնպես էլ համացանցային հաղորդակցության ընթացքում

անկարելի է անտեսել հաղորդակցական ակտերի սոցիալ-հոգեբանական առանձնա-հատկությունները, քանի որ անհատ-խոսողները համացանցի միջոցով անգլերեն հաղորդակցվելիս առաջնորդվում են իրենց իսկ սոցիալական արժեքներով, իրականացնում են իրենց հաղորդակցական նպատակը: Համացանցային հաղորդակցության յուրահատկությունների քննությունը անհնար կլիներ առանց սոցիալական կեցվածքի ուսումնասիրության, քանի որ այն ներառում է օգտատերերի՝ համացանցում բարձրացվող տարբեր թեմաները մեկնաբանելու կարողությունը, ինչպես նաև համացանցում որևէ տեղեկատվություն նպատակային ներկայացնելու հմտությունը:

Ինչպես ցույց են տալիս անգլերեն համացանցային հաղորդակցության մեր

ուսումնասիրության արդյունքները, թյուր են այն կարծիքները, որ համացանցային հաղորդակցության մեջ բացակայում են սոցիալական ցուցիչներ, որոնք օգնում են օգտատերերին գործադրելու ճիշտ

հարոթդակցական մարտավարություն: Թերևս սույն

արժևորումը կարելի էր ճշմարտացի համարել համացանցային հաղորդակցության զարգացման սկզբնական փուլերի համար, սակայն, այժմ համացանցով հաղորդակցվողները չեն անտեսում հարատեքստային ցուցիչները, իսկ տվյալ հաղորդակցությունն էլ չի իրականանում սոցիալական վակուումում: Այլ կերպ ասած՝ համացանցով հաղորդակցվողները, մասնավորապես՝ անգլերեն հաղորդակցվողները ունեն ինքնաարտահայտման որոշակի միջոցներ, որոնց հիմքում ընկած են համացանցային քաղաքավարության նորմերը:

Մեր կատարած ուսումնասիրությունը վկայում է, որ համացանցում հաղորդակց-

վելիս անգլալեզու անհատների սոցիալական փոխազդեցության հիմքում ընկած է համագործակցության սկզբունքը, որը նպաստում է արդյունավետ հաղորդակցության իրագործմանը:

Սույն ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել .

1. Ինչպես առերես հաղորդակցության ժամանակ, այնպես էլ համացանցում անգլերեն հաղորդակցվելիս կարևորվում է հարատեքստը, քանի որ, լինելով հարաշարժ, այն անընդհատ փոփոխվում է, և հաղորդակցական ակտերը դասավորվում ու վերադասավորվում են՝ ըստ այդմ ստեղծելով համացանցային «սոցիում»: Վիրտուալ տիրույթում արդյունավետ հաղորդակցությունը և ճիշտ մտահանգումներ կատարելը մեծապես պայմանավորված են անհատ-հաղորդակցվողների հենքային գիտելիքներով, մշակութային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, ինչպես նաև համացանցային գրաճանաչությունը:
2. Համացանցային դիսկուրսի տեսական սահմանումների միջգիտակարգային քննությունը, ինչպես նաև անգլերեն փաստական նյութի վերլուծությունը ցույց են տալիս, որ համացանցային հաղորդակցական միջավայրում գերիշխում են բանավոր խոսքի յուրահատկությունները: Լեզվական միավորների կիրառության այս պատկերը բացահայտվում է էլեկտրոնային զրույցներում, նամակներում, այդ թվում՝ պաշտոնական, որտեղ գերիշխողը խոսակցական անգլերենի լեզվաոճական տարրերն են:

3. Բանավոր խոսքային տարրերի գերակայ ության ակնհայտ դրսևորում են համաժա-

մանակյա և տարածամանակյա համացանցային անգլերեն դիսկուրսում, հատկապես՝ Էլեկտրոնային գրույցներում: Յաճախ կիրառվող սլենգային միավորները և բարբառայնացման դեպքերը, որոնք ոչ միայն նպաստում են օգտատերերի էթնիկ և տարածքային ինքնության բացահայտմանը, այլև հանդես են գալիս որպես բանավոր խոսքին բնորոշ հատկանիշներ:

4. Յամացանցում հաջող հաղորդակցության իրականացման գործում քաղաքավարության գործոնի դերը նույնքան մեծ է, որքան առերես հաղորդակցության ժամանակ: Ներկայումս տեխնոլոգիական նորամուծությունների լայն ընդգրկումը համացանցային հաղորդակցության ոլորտ նոր հնարավորություններ է ստեղծում հաղորդակցվողների խոսքահերթի պահպանման համար՝ դրանով իսկ ապահովելով քաղաքավարության նորմերի կիրառումը: Այդուհանդերձ, ինչպես ցույց է տալիս փաստական նյութի մեր վերլուծությունը քաղաքավարության նորմերի պահպանումը կամ ոտնահարումը մեծապես պայմանավորված է հաղորդակցվող անհատի ինքնության զգացողության առկայությամբ կամ բացակայությամբ:

5. Յամացանցային դիսկուրսում հարալեզվական միջոցների փոխարեն հուզանշան-

ների, շարժական հուզապատկերների կիրառումը բացահայտում է հաղորդակցվող-ների հոգեբանական, զգացմունքային ներաշխարհը: Դրանց կիրառությանյուրահատկությունները մեծապես պայմանավորված են հաղորդակցական իրադրությամբ, գրուցակիցների սեռով և տարիքով:

6. Յամացանցային հաղորդակցության մեջ զեղչման դեպքերի (բայական զեղչում,

բացակայվել) համառոտագրությունների և հապավումների լայն կիրառությունը ընդհանրացված ձևով կարող է որակվել որպես լեզվական տնտեսման մարտավարություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Ժամանակակից հայերենի հապավանքային բաղադրությունները // Լրագր, Եր., № 6, 1979, էջ 13-28:
2. Աղաջանյան Ա. Հապավումների և համառոտագրությունների էզվածական առանձնահատկություններն անգլալեզու առցանց հաղորդագրություն-ներում մեկնաձուլական ատենախոսություն, Եր., 2013, 180 էջ:
3. Մադոյան Ն. Առցանց ուսուցման և գնահատման յուրահատկությունների շուրջ // Լեզուն և գրականությունը գիտական իմացություն ժամանակակից հարացույցում, № 7, Եր., Լուսակն, 2016, էջ 153-160:
4. Abrams D. & Hogg M.A. Social Identity Theory, Hemel Hempstead: Harvester Wheatsheaf, 1990. – 298 p.
5. Akinnaso F. N. On the Differences between Spoken and Written Language // Language and Speech 25(2), University of California, Berkeley 1982. – Pp. 97–125.
6. Anderson J., Beard F. and Walter J. Turn-taking and the Local Management of Conversation in a Highly Simultaneous Computer-Communication System // Language-@Internet 7, 2010.<http://www.languageatinternet.org/articles/2010/2804/Anderson.et.-al.pdf> 06.09.2014
7. Antaki C. Explaining and Arguing: The Social Organization of Accounts. London: Sage Publications, 1994. – 222 p.
8. Aronoff M. Orthography and Linguistic Theory: The Syntactic Basis of Masoretic Hebrew Punctuation // Language, Vol., 61, no. 1, 1985. – Pp. 28-72.
9. Baron N. S. Alphabet to Email: How Written English Evolved and Where it's Heading. NewYork: Routledge, 2000. – 336 p.
10. Baron N. S. Computer Mediated Communication as a Force in Language Change // Visible Language, XVIII 2, 1984. – Pp. 118-141.
11. Baron N. S. The Myth of Impoverished Signal: Dispelling the Spoken-Language Fallacy for Emoticons in Online Communication // Electronic Emotion, Jane Vincent and Leopoldina Fortunati (eds.), Berlin: Peter Lang, 2009. – Pp. 107–

136.

12. Baron N. Discourse Structures in Instant Messaging: The Case of Utterance Breaks,
2010, <http://www.languageatinternet.org/articles/2010/2651> 07.07. 2013.
13. Baym N.K. Agreements and Disagreements in a Computer-Mediated Discussion // Research on Language and Social Interaction, Vol. 29, 1996. – Pp 315-346.
[http:-
//citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.839.6404&rep=rep1&type=pdf](http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.839.6404&rep=rep1&type=pdf)
12.09. 2010.
14. Baym N. Interpreting Soap Operas and Creating Community: Inside a Computer- mediated Dan Culture // Journal of Folklore Research, 30(2/3), Indiana University Press, 1993. – Pp. 143-76.
15. Beaman K. Coordination and Subordination revisited // Syntactic Complexity in Spoken and Written Narrative' // D. Tannen (ed.,) Coherence in Spoken and Written Discourse. Norwood, NJ: Ablex, 1984. – Pp. 45-80.
16. Becker J. A. H. & Stamp G. H. Impression Management in Chat Rooms: a Grounded Theory Model // Communication Studies, 56(3), 2005. – Pp. 243-260.
https://www.researchgate.net/publication/232868566_Impression_Management_in_Chat_Rooms_A_Grounded_Theory_Model 20.01.2015.
17. Bellamy A. and Hanewicz Ch. Social Psychological Dimensions of Electronic Communication // Electronic Journal of Sociology 4 (4), 1999. – Pp. 1-22.
<https://www.sociology.org/ejs-archives/vol004.001/bellamy.html> 07.08.2013.
18. Blanco Rodriguez M. J. El Chat: La conversación escrita // Estudios de Lingüística 16:
2002 . – Pp. 43–87. Bernad, 10 bajo - 03080 Alicante 22.03.2010
19. Biber D. Variation Across Speech and Writing. Cambridge: Cambridge University Press, 1988. – 299 p.
20. Brennan S.E. Conversation with and through Computers User Modelling and User- adapted Interaction, 1991. – Pp. 67-86.
<https://link.springer.com/article/10.1007/BF00158952> 06.02.2014
21. Brown G. & Yule G. Discourse Analysis. Cambridge: Cambridge University Press,
1983. - 288 p.

22. Chafe W. & Danielewicz J. Properties of Spoken and Written Language // R Horowitz & Samules eds Comprehending Oral and Written Language. New York Academic Press, 1986. – Pp. 83-113.
23. Chafe W. L. Integration and Involvement in Speaking, Writing, and Oral Literature // D. Tannen (ed.), Spoken and Written Language: Exploring Orality and Literacy. Norwood, NJ: Ablex. 1982. – Pp. 35-53.
24. Chafe W. L. The Flow of Ideas in a Sample of Written Language // Sandra A. Thompson and William C. Mann (eds.), // Discourse Description: Diverse Linguistic Analyses of a Fund-raising Text. Amsterdam/Philadelphia: John Benjamins., 1992. – Pp. 267-294.
25. Chafe W. L. Discourse, Consciousness, and Time: The Flow and Displacement of Conscious Experience in Speaking and Writing. Chicago: University of Chicago Press, 1994. – 340 p.
26. Cherny L. Reba Weise E. Wired_Women: Gender and New Realities in Cyberspace. Seattle: Seal Press, 1996. – 270 p.
27. Cherny L. The Modal Complexity of Speech Events in a Social MUD// The Electronic Journal of Communication Vol., 5, No. 4, 1995 <http://www.cios.org/EJCPUBLIC/005/4/00546.HTML> 07.08.2010
28. Cherny L. Conversation and Community: Chat in a Virtual World//Applied Linguistics. Stanford, CA: CSLI Publications, 1999. – Pp. 369.
29. Ching-Kang Liu Between Speech and Writing // Research on English Composition, Crane PublishingCo., Ltd, 1996 140 p.
30. Crystal D. Language and the Internet. Cambridge: Cambridge University Press, 2004. – 304 p.
31. Daft R. L. and Lengel R, H., Information Richness: A New Approach to Managerial Behavior and Organization Design // B. M. Staw and L. L. Cummings (eds.) // Research in Organizational Behavior, Vol., 6, Greenwich, CT: JAI Press, 1984. – Pp. 191-233

32. Davies B. & R. Harré Positioning: The Discursive Production of Selves // Journal for the Theory of Social Behaviour, Vol., 20 (1), Blackwell Publishing, 1990. – Pp. 43–63.
33. December J., Defining Internet-Based Computer-Mediated Communication, Units of analysis for Internet communication // Journal of Computer-Mediated Communication, 1(4) / Journal of Communication, 46(1). <http://jcmc.indiana.edu/vol1/issue4/december.htm> 11.02.2012
34. Dix A. Finlay, J. Abowd G. & Beale R., Human-Computer Interaction. New York: Prentice Hall, 1993. – 638 p.
35. Elmer- Dewitt Ph. Battle for the Soul of the INTERNET // Time, Vol., 30, 1994. – Pp 46-52 <http://hdl.handle.net/10070/90861> 20.01.2016.
36. Farina S. Rhetoric, Innovation, Technology: Case Studies of Technical Communication in Technology Transfers. Cambridge (MA): MIT Press, 1992. – 279 p.
37. Fillmore C. Pragmatics and the Description of Discourse // P.Cole ed. Radical Pragmatics. New York, Academic Press, 1981. –Pp. 83-104.
38. Fraca de Barrera L. El chateo desde la cyberlinguística // Argos Vol., 24 (46), 2007. – Pp. 24-37.
39. Fuller S.W., Philosophy, Rhetoric and the End of Knowledge: The Coming of Science and Technology Studies. University of Wisconsin Press, 1993. – 421 p.
40. Galimberti C. Dalla comunicazione alla conversazione [From communication to conversation] // Ricerche di Psicologia, 18 (1), 1994. – Pp. 113-152. https://www.researchgate.net/publication/255628247_Dalla_comunicazione_alla_conversazione 03.09.2010.
41. Galimberti C. Riva G. Computer-mediated communication: Identity and social interaction in an electronic environment // Genetic Social and General Psychology Monographs , N128, 1998. –Pp. 434- 464. https://www.researchgate.net/publication/279697449_Computer-mediated_communication_Identity_and_social_interaction_in_an_electronic_environment 05.09.2019
42. Ghiglione R. L'homme communiquant (Communicating man). Paris: A.Colin, 1986. – Pp. 261-271

43. Giese M. Self without Body: Textual Self -Representation in Electronic Community // First Monday 3(4), 1998. - <http://journals.uic.edu/ojs/index.php/fm/article/view/587-508> 07.07. 2014
44. Godin S. Smiley Dictionary: Cool Thing to Do with Your Keyboard. Berkeley, CA: Peachpit Press, 1993. – 86 p.
45. Goodwin C., & Heritage, J., Conversation Analysis // Annual Review of Anthropology, 19, Los Angeles California, University of California, 1990. – Pp. 283-307.
46. Goody J. & Watt, I. The Consequences of Literacy // Comparative Studies in Society and History, Vol., 5, No. 3, 1963. –Pp. 304-345. <https://pdfs.semanticscholar.org/8-ddf/4c87f7c7f4ad542c1c831e0eef4c5de4a55b.pdf> 24.01.2015
47. Gumperz J. Cohesion in Spoken and Written Discourse: Ethnic Style and the Transition to Literacy // D. Tannen (ed.) // Cohesion in Spoken and Written Discourse. Norwood, NJ: Ablex Publishing, 1984. – Pp. 3-20.
48. Gumperz J. From Oral to Written Culture: the Transition to Literacy // M. Farr-Whiteman (ed.) // Variation in Writing. Hillsdale, NY: Lawrence Erlbaum Associates., 1981. –Pp. 89-109.
49. Halliday M.A.K. An Introduction to Functional Grammar. New York: Arnold, 1994. – 25 p.
50. Halliday M.A.K. An Introduction to Functional Grammar. Beijing: Foreign Language Teaching and Research Press, 2000. – 480p.
51. Halliday M.A.K. Differences between Spoken and Written Language: Some Implications for Literacy Teaching // Glenda Page, John Elkins and Barrie O'Conner (eds.) Communication Through Reading: Proceedings of the Fourth Australian Reading Conference. Adelaide, S.A.: Australian Reading Association. Vol., 2, 1979. – Pp. 37-52.
52. Harré R. Language and Science of Psychology // Journal for the Theory of Social Behaviour and Personality, 4, 1989. – Pp. 165 - 188.
53. Harré R. & Van Langenhove L. Varieties of positioning // Journal for the theory of social behaviour , Vol., 21, Blackwell Publishing, 1991. – Pp. 393-407.

54. Hastrdlová Š. Language of Internet Relay Chat (Reconsidering (Im)Politeness in the Context of IRC). Unpublished PhD thesis. Brno: Masarykova Univerzita, 2009.– 195p. https://is.muni.cz/th/jad5l/Dizertacni_prace_09_final_version.pdf 20.03.2012
55. Herring S. C., Two Variants of an Electronic Message Schema // Computer-Mediated Communication: Linguistic, Social and Cross-Cultural Perspectives, Amsterdam: John Benjamins, 1996b. – Pp. 81-106.
56. Herring S. C. Functions of the Nonverbal in CMC: Emoticons and Illocutionary Force, 2010 // <http://ella.slis.indiana.edu/~herring/emoticons.pdf> 06.06. 2016
57. Herring S. C. Interactional Coherence in CMC // Journal of Computer-Mediated Communication, Vol., 4 (4), 1999 <http://jcmc.indiana.edu/vol4/issue4/herring.html> 23.03.2010
58. Herring S. C. Computer-mediated Discourse // D. Schiffrin, D. Tannen, & H. Hamilton (Eds.). The Handbook of Discourse Analysis. Oxford: Blackwell Publishers, 2001. – Pp. 612-634.
59. Herring S. C. Language and the Internet // W. Donsbach (Ed.), International Encyclopedia of Communication. Blackwell Publishers. Preprint., 2008.- pp. 2640-2645.
60. Hildyard A. & Olson, D. R. On the Comprehension and Memory of Oral vs. Written Discourse // D. Tannen (Ed.), Spoken and written language: Exploring Orality and Literacy. Norwood, N J: Ablex. 1982. – Pp. 19-33.
61. Horstmanshof L. and P. Mary R. Mobile phones, SMS, and Relationships: Issues of Access, Control, and Privacy // Australian Journal of Communication, Vol., 32, no. 1, 2005. – Pp. 33-52.
62. Huffaker D. Calvert S. Gender, Identity and Language Use in Teenage Blogs, 2005//URL:<http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.10836101.2005.tb00238.x/full>. 07. 06. 2016
63. Jakobson R. The Framework of Language, MichiganStudies in the Humanities 1980. – 132 p.

64. Johnson K. What VP Ellipsis Can Do, What it Can't, but not Why // Mark Baltin and Chris Collins, (eds.) // *The Handbook of Contemporary Syntactic Theory*. Malden, Mass.: Blackwell Publishers, 2001. –Pp. 439-479.
65. Kasper G. Linguistic Politeness: Current Research Issues // *Journal of Pragmatics*, Vol., 14 (2), 1990. – Pp. 193-201.
66. Kataoka K. Emotions and Youth Identities in Personal Letter Writing. An analysis of Pictorial Signs and Unconventional Punctuation // *Discourse Construction of Youth Identities* , Jannis K. Androutsopoulos and Alexandra Georgakopoulou (eds.) 2003. – Pp. 12-149.
67. Kemmis S. & Wilkinson M. Participatory Action Research and the Study of Practice // B. Atweh, S. Kemmis, & P. Weeks (eds.) // *Action research in practice: Partnerships for Social Justice in Education*. London: Routledge, 1998. – Pp. 21-36.
68. Kollock P., Smith M. Managing the Virtual Commons: Cooperation and Conflict in Computer Communities // S. Herring (ed.) // *Computer-Mediated Communication: Linguistic, Social and Cross-Cultural Perspectives*. Amsterdam / Philadelphia: John Benjamins, 1996. – Pp. 109-128.
69. Kuno S. *Functional Syntax: Anaphora, Discourse, and Empathy*. Chicago: University of Chicago Press, 1987. – 320 p.
70. Lakoff R. The Limits of Politeness: Therapeutic and Courtroom Discourse // *Journal of Cross-Cultural and Interlanguage Communication, Multilingua* Vol., 8, 1989. – Pp. 101-130
71. Lea M. & Spears R. Computer-Mediated Communication, De-individuation and Group Decision-making // *International Journal of Man-Machine Studies*, Vol., 34 (2), 1991. – Pp. 283-301.
72. Lea M., O'Shea T., Fung P., & Spears R. Flaming in Computer-Mediated Communication // M. Lea (ed.), *Contexts of Computer-Mediated Communication*. Hemel Hempstead: Harvester Weatsheaf, 1992. – Pp.89-112.
73. Leech G. *Principles of Pragmatics*. New York: Longman, 1983. – 250 p.

74. Mantovani G., *New Communication Environments: From Everyday to Virtual*. London: Taylor & Francis, 1996(a). –Pp. 170-172.
75. Mantovani G. Social context in HCI: A new framework for mental models, cooperation and communication // *Cognitive Science*, Vol., 20, 1996 b. – Pp. 237–269.
76. Mayas J. De la incorreccio´ n normativa en los chats // *Revista de Investigacio´ n Lingüística* Vol., 2, 2002b. – Pp. 101-116.
77. McShane J. *A Theory of Ellipsis*. Oxford, Oxford University Press, 2005. –272 p.
78. Merchant, J. *The Syntax of Silence: Sluicing, Islands, and the Theory of Ellipsis*. Oxford University Press: Oxford, 2001. – 278 p.
79. Merchant G. Teenagers in Cyberspace: An Investigation of Language Use and Language Change in Internet Chatrooms // *Journal of Research in Reading* 24 (3), 2001.– Pp. 293–306.
80. Mithun M. The Grammaticization of Coordination // John Haiman and Sandra Thompson (eds.) // *Clause Combining in Grammar and Discourse*. Amsterdam; Philadelphia: Benjamins, 1988. - pp. 331-60.
81. Morgan J. L. Discourse Theory and the Independence of Sentence Grammar // Deborah Tannen, ed. // *Analyzing Discourse: Text and Talk, Proceedings of the Georgetown University Round Table on Languages and Linguistics 1981*. Washington, D.C.: Georgetown University Press, 1982. – Pp. 196–204.
82. Murray D. E. When the medium determines turns: turn-taking in computer conversation // *Working with language: a multidisciplinary consideration of language use in work contexts* // Berlin; Mouton de Gruyter, 1989.- Pp. 317-337.
83. Murray D.E. The Context of Oral and Written language : A Framework for Mode and Medium Switching // *Language in Society* 17, 1988. – Pp. 351-73.
84. Nass C. & Steuer J. Voices, Boxes, and Sources of Messages, Computers and social actors // *Human Communication Research*, Vol., 19 (4), 1993. – Pp. 504-527.
85. Newhagen J. E. Why Communication Researchers should Study the Internet // *A Dialogue. Journal of Communication*, Vol., 46 (1), 1996. – Pp. 4-13.

86. O'Sullivan P. B., Flanagin A. J. An Interactional Reconceptualization of 'Flaming' and other problematic messages // International Communication Association's Annual Conference. Acapulco. 2000 // Provine R. R., Spencer R., & Mandell D., 2007 Emotional expression online: emoticons punctuate website text messages //URL: <http://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0261927X06303481> 14.06 2015
87. Ochs E. Planned and Unplanned Discourse // T. Givon (eds.), Discourse and Syntax: Vol., 12. Syntax and Semantics. New York: Academic Press, 1979. – Pp. 51-80.
88. Olson D R. From Utterance to Text: the Bias of Language in Speech and Writing. Harvard Educ. Rev., 1977. – Pp. 257-81.
89. Paolillo J.C. Language variation on Internet Relay Chat: A social network approach // Journal of Sociolinguistics, Vol., 5 Issue 2, 2001. –Pp. 180-213.
90. Peris R. Online Chat Rooms: Virtual Spaces of Interaction for Socially Oriented People // Cyberpsychology & Behavior Vol., 5, Number 1, 2002 © Mary Ann Liebert, Inc., 2002. – Pp.43-53.
91. Peter J., Valkenburg, P. M., & Schouten, A. P. Precursors of adolescents' use of visual and audio devices during online communication // Computers in Human Behavior, Vol., 23, 2007. – Pp. 2473-2487.
92. Poole M. & Field T.W. A Comparison of Oral and Written Code Elaboration // Language and Speech Vol., 19, 1976. – Pp. 305-11.
93. Quinion M. Only Joking? Should the smiley be outlawed, 1996 //URL: <http://pessoal.sercomtel.com.br/assis/English/Dictionaries/www.quinion.com/articles/smiley.htm> 14.06. 2016
94. Quirk R., Greenbaum S., Leech G. & Svartvik J. A Grammar of Contemporary English. London: Longman, 1972. –202 p.
95. Reid E. Cultural Formations in Text-Based Virtual Realities, 1994 //URL: <http://www.aluluei.com/cult-form.htm> 14. 06.2016
96. Reid E. Electropolis: Communication and Community on Internet Relay Chat . Un-published PhD thesis. Melbourne(Australia) 1991. - <https://doi.org/10.1111/j.1083-6101.2001.tb00125.x> 01.08.2010

97. Rezabek L. & Cochenour L. Visual Cues in Computer-Mediated-Communication: Supplementing text with emoticons, 1998. //URL:<http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/23796529.1998.11674539> 10.08.2016
98. Rimé B. Langage et communication (Language and communication) // Moscovici S. (eds.), *Psychologie sociale (Social Psychology)*. Paris: PUF, 1984. – Pp. 415-446
99. Rocco E. & Warglien M. La comunicazione mediata da computer e l'emergere dell'opportunità elettronica (The growth of Electronic Opportunism in Computer-Mediated Communication]. *Sistemi Intelligenti Vol.*, 7 (3), Dix, Finlay, Abowd & Beale, 1995. –Pp. 393-420.
100. Rosaldo M. Toward an Anthropology of Self and Feeling // Shweder R.A., LeVine R.A. (eds.), *Culture theory: Essays on the Mind, Self and Emotion*, Cambridge UK: Cambridge University Press, 1984. – 359 p.
101. Ross J. R. Guess who? // *Proceedings of the Sixth Regional Meeting of the Chicago Linguistic Society*. Chicago: University of Chicago Press, 1969. – Pp 252–286.
102. Rubin A. A Theoretical Taxonomy of the Differences between Oral and Written Language // R. J. Spiro, B. C. Bruce, & W. F. Brewer (eds.), // *Theoretical issues in reading comprehension*. Hillsdale, NJ: Erlbaum, 1980.- https://www.ideals.illinois.edu/bitstream/handle/2142/17810/ctrstreadtechrepv01978i00035_opt.pdf?sequence=1 02.09.2015
103. Ruedenberg L., Danet B. & Rosenbaum-Tamar Virtual Virtuosos: Play and Performance at the Computer Keyboard // *Electronic Journal of Communication Vol.*, 5, (4) 1994.- <http://www.cios.org/EJCPUBLIC/005/4/00542.HTML> 10.11.2015
104. Sag I. A., Gazdar G., Wasow T. & Weisler S. Coordination and How to Distinguish Categories // *Natural Language and Linguistic Theory Vol.*, 3, 1985. – Pp. 117–172.
105. Sapir E. *Language: An Introduction to the Study of Speech*. Harcourt, Brace, Language Arts & Disciplines, 1921. –258 p.
106. Savas P. A Case Study of Contextual and Individual Factors that shape linguistic Variation in Synchronous Text based Computer-mediated-communication, 2011 //URL: <http://www.sciencedirect.com/science/article/pii/S0378216610002237>, 06. 08 2016

107. Saville-Troike M. *The Ethnography of Communication*. Oxford: Blackwell, 1989. – 336p.
108. Searle J. R. *Mind, Language and Society: Philosophy in the Real World*. New York: Basic Books, 1999. – 192 p.
109. Shaw Ph. *Spelling, Accent and Identity in Computer-Mediated Communication*, 2008 .– Pp. 42-49. https://www.researchgate.net/publication/2-31974537_Spelling_Accent_-and_Identity_in_Computer-Mediated_Communication/download 14.08.2015
110. Simpson J. *Conversational Floors in Synchronous Text-Based CMC Discourse* // *Discourse Studies* Vol., 7, (3), 2005. – Pp. 337–361.
111. Spears R. & Lea M. *Social Influence and the Influence of the "Social" in Computer-Mediated-Communication, Contexts of Computer-Mediated - Communication*. Hemel Hempstead: Harvester Wheatsheaf, 1992. –Pp. 30-65.
112. Sperber D. & Wilson D. *Postface to the Second edition of Relevance: Communication and Cognition*. Oxford: Blackwell, 1995. – 321 p.
113. Sproull L. & Kiesler S. *Reducing Social Context Cues: Electronic Mail in Organizational Communication, Organizational Behavior and Human Decision Processes*, Vol., 32, 1986.– Pp.1492-1512.
114. Stasser G. & Stewart D. *Discovery of Hidden Profiles by Decision-Making Groups: Solving a Problem Versus Making a Judgment* // *Journal of Personality and Social Psychology*, Vol.,63, (3), 1992 . – Pp. 426 - 434.
115. Stubbs M. *Discourse Analysis*. Oxford Basil, Blackwell, 1983. – 288 p.
116. Suchman L. *Plans and Situated Action*, Cambridge UK: Cambridge University Press, 1987. – Pp. 17-32.
117. Suler J. *The Final Showdown between in Person and Cyberspace Relationship* // *The Psychology of Cyberspace* 1997c, <http://truecenterpublishing.com/psyber/showdo-wn.html> 07.08. 2017
118. Taha L.H. and Caldwell B.S. *Social Isolation and Integration in Electronic Environments* // *Behaviour and Information Technology*, Vol., 12 (5), 1993.– Pp. 276-283.

119. Tajfel H. & Turner J.C. The Social identity theory of intergroup behavior // Psychology of intergroup relations. Chicago: Nelson-Hall, 1986. –Pp. 7-24.
120. Tannen D. Silence Anything but Perspective on Silence // Troikd (eds.). Norwood N.V.Ablex, 1985. – 251 p.
121. Tannen D. The Myth of Orality and Literacy // Linguistics and Literacy. (eds.) by William Frawley. New York: Plenum Press, 1982a. – Pp. 37-50.
122. Thurlow C. Computer-Mediated-Communication // Language Arts & Disciplines SAGE, 2004. – 272 p.
123. Thurlow C. & Brown, A. Generation txt? The Sociolinguistics of Young People's Text- messaging // Discourse Analysis Online, Vol., 1, 1 – 27, Department of Communication, University of Washington, Box 353740, Seattle, 2003. – Pp.1-27.
124. Urbanová L. On Expressing Meaning in English Conversation: Semantic Indeterminacy. Brno: Masaryk University, 2003. – 122 p.
125. Vidal Jimenez R. La red y la destruccion de la identidad, TTC III, 10–3–2000, 2000 <https://webs.ucm.es/info/especulo/numero17/vidal.html>
126. Volosinov V.N., Marxismo e filosofia del linguaggio [Marxism and language philosophy], Bari: Dedalo, 1976. – 288p.
127. Walther J. & D'Addario K The Impacts of Emoticons on Message Interpretation in Computer Communication, 2004 //URL: [https:// www.researchgate. net/publication /228603465_The_Impact_of_Emoticons_on_Message_Interpretation_in_Computer-Mediated_Communication](https://www.researchgate.net/publication/228603465_The_Impact_of_Emoticons_on_Message_Interpretation_in_Computer-Mediated_Communication) 09.08. 2016
128. Weedman J. Task and Non-Task Functions of a Computer Conference Used in Professional Education: a Measure of Flexibility // International Journal of Man-Machine Studies 34, 1991. – Pp. 303-318.
129. Werry Ch. Linguistic and Interactional Features of Internet Relay Chat // Computer-Mediated Communication. Linguistic, Social and Cross-Cultural Perspectives // Susan Herring (eds.). Amsterdam/Philadelphia: John Benjamins, 1996. – Pp. 47–64.
130. Wilkinson L. & Buboltz W.C. E-Mail: Communication of the Future? // S. McNeil, J. Price, S. Boger-Mehall, B. Robin & J. Willis (eds.), Proceedings of SITE 1998-- Society

for Information Technology & Teacher Education International Conference, 1998. – Pp. 1227-1230

131. Wilson D. & Sperber D. Pragmatics and Modularity. Chicago Linguistic Society 22, Parasession on Pragmatics and Grammatical Theory. 68-74. Reprinted in Davis (eds.), 1986. – Pp. 583-95.
132. Wilson T. D. Models in Information Behaviour Research // Journal of Documentation, Vol., 55, (3), 1999. – Pp. 249-270.
133. Wilson W. The Internet Church. Nashville: Word Publishing, 2000. – 192 p.
134. Witmer D. F., Katzman S.L On-Line Smiles: Does Gender Make a Difference in the Use of Graphic Accents, 1997 //URL: <http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.1083-6101.1997.tb00192.x/full> 14.08. 2016
135. Wolf A. Emotional Expression Online: Gender Differences in Emoticon Use, 2000 //URL:<https://pdfs.semanticscholar.org/dd73/7aa37965176f6cc888769ad2d63f626103a3.pdf> 07.08. 2016
136. Yates Simeon J. & Ornikowski, Wanda J. Genres of organizational communication: A structurational approach to studying communication and media. Academy of Management Review 17 (2), 1998. – Pp. 299–326.
137. Yates S. Gender, Language and CMC for Education // Learning and instruction, Vol., 11, 2001. – Pp. 21-34.
138. Yus F. Cyberpragmatics Internet mediated communication. Amsterdam John Benjamins, 2011. – 213 p.

Բառարաններ

1. Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան, Եր., Անկյունաքար, 2004, 368 էջ:
2. www.urbandictionary.com

Փաստական նյութի
աղբյուրներ

1. icq.com/icqchat/en
2. www.enron-mail.com
3. www.facebook.com

4. www.rendezvouschat.com
5. <https://www.dailymail.co.uk>
6. www.telegraph.co.uk
7. www.youtube.com
8. https://docs.google.com/forms/d/1JiCa6dEGLqgQorjP_xAJyzeDvZcUazKHnjRJHNibCQA/edit#responses